63. Թէ հազալիս խորխը գալիս է հեշտու թնետ, թանձր և արիւնախառն, կամ առանց արիւնի, էն ժամանակը արիւն թողնելը, լուծող և քրտինք բերող զեղերի գործածակը շատ վնասակար է. Առհասարակ էս հիւանդու թնետմը պէտք է հիւանդը պահեն հանգիստ, տունը՝ չափաւոր տաք, լուսամուտը և դուռը շուտ շուտ բաց անեն, որ օդը նորոգուի: Եթէ էս դուր թնետմը հիւանդի կուրծքի ծակոյր չէ աւելանում, դող էլ չունէ և բազկի երակի (նամգը) գլխը հետզհետէ դէպ ՚ի լաւն է գնում, էն ժամանակը մէնակ գարեջուր խմելը բաւական է:

64. Երբեմն էլ պատահում է, որ հիւանդի խորխը յանկարծ կտրուում է, որով հիւանդը շատ կ'նեղանայ, շունչ քաշելը կ'զժուարանայ և կուրծքը կը բռնուի, էս էլ վատ նշան է: Իսպիսի յանկարծ փոփոխութիւն որ պատահի, պէտք է որ կանխըր արիւն թողնեն և չայի պէս խմացնեն եփ տուած 32 համարաւ զեղը:

65. Եթե՛նրորդ, իննրորդ, կամ չորեքտասներորդ օրը եթէ հիւանդի բոլոր մարմնոյ վերայ քրտինք գայ կամ ջըրվէթը աւելանայ ու տակը աղիւսի գունով զիրա (տիլ) նստի կամ լուծել տայ, ու էստուրով ցաւը քշանայ, էս նշանները դուշակում են, որ հիւանդը պէտք է լաւանայ: Օգտակար չին համարուում քրտինքը կամ լուծելը, եթէ սրանց հետ չեն պակասիլ հիւանդութեան նշանները՝ այլ ընդհակառակն առաւել կսաստկանան:

66. Ինչ ժամանակ հիւանդը լաւանայ պէտք է զգուշու թնետ կատարեն 55 յօդուածումը գրածները և կերակուրը գործածեն ինչպէս 37 յօդուածումը ասած է:

Մողասային, կամ մաղասիցը յառաջացած

կուրծքի խէթքի վրայ.

67. Առանց ծակոցի կուրծքի ցաւիլը կամ աված ըլիլը, կամ երկար և ծանր շունչ քաշելը կոչուում է մաղասային խէթք :

68. Մաղասային խէթքով հիւանդը չէ զգում էնքան կուրծքի սաստիկ ծակոց, ինչպէս բորբոքումից խէթք ունեցողը միայն սրա կուրծքը ըլում է աւելի ամած. բազկի երակը զըցում է առաւել թոյլ և շուտ շուտ, լեզուն ունենում է թքոտ և պատած սպիտակ մաղասով, կամ դեղին մաղձով. բերնի համր ունենում է վաղ և դառը, սիրտը խառնուում է և զգում է ծանրութիւն սրտի զգալի տեղը, և հետն էլ մասնաւոր տաքութենով զլսի ցաւ և զլսի պտուա գալ, առաւել հիւանդի շարժողութան մէջը էլած ժամանակը. մարմնոյ մորթը ունենում է չոր, երեսահարքը դեղնոտ կարմրագոյն. հազալիս քիչ խորիս է գալիս դեղին և առանց արիւնի, և էլ կուրծքումը կուներնայ խրչխրչոց և երբեմն էլ կ'պատահի լուծմունք :

70. Հիւանդի վրէն սկզբումն երևում են հոգնելու, (բեզարել) թուլութեան և սրանեղութեան նշաններ, կուրծքը ծանրանում է, երբեմն դող և երբեմն տաքութիւն գալով շուտ շուտ աչքերը ծանրացնում է, չի թողնում հանդիստ քնելու, վրէն գալիս է մոռացկոտութիւն և էսպէս շարունակուում է մէկ երկու օր. երբ սկսում է հիւանդութիւնը ծանրանալ, էն ժամանակ սկզբիցն թեթեւ բայց երկար դողնում է, յետոյ տաքութիւն է տալիս մասնաւոր, երակը զցում է նուազ և շուտ շուտ դժուար շունչ քաշելու պատճառաւ հիւանդը շատ անհանգիստ է ըլում. ջրվէթը իր սովորական ըռանգն է ունենում կամ ըլում է կարմրագոյն և տակը ոչինչ զիրտ չէ նստում. կուրծքի խրչխրչոցը աւելանում է և շունչ քաշելը, քանի որ

Հիւանդութիւնը երկարի, դժուարանում է էնքան, որ հիւանդը չի կարողանում երկար պառկած կենալ և նստելիս միայն կարում է փոքր հանգստութիւն ունենալ: Մաջի քցելը հետզհետէ նուազում է և վերջը համարեա՛ թէ դժուարութեամբ է ջոզուում, երեսահարքը և ձեռները կապտանում և ոտները սառչում են. էս նշաններիցը երևումէ, որ հիւանդը վաղ վիճակի մէջ է:

71. Էս ցաւը առաւել նրանց է պատահում: որոնք թուլամորթ աւիշկային (Limfa) կազմուածքի տէր են, կամ ծեր են: Լուս ընկնելու ժամանակն է աշունքուան, ձմեռուան և գարունքուան խոնաւ (նամ) եղանակներումը. առաւելապէս բոնըւում են նրանք, որոնք սրան յարմար կազմուածք ունին կամ որոնք երկար ժամանակ կենում են խոնաւ օդի մէջ. (և դրանից պակասում է սովորական քրտնքի գալն). կամ որոնք զընում են քամու դիմացը, կամ բարձր ձայնով երգում են կամ հարբած պառկում են բաց օդումը:

72. Վ երևի գրածներից յայտնի երևում է, որ էս հիւանդութիւնը գալիս է համարեա՛ թէ խառն և դժուար ջոզուող նշաններով, ևս առաւել՝ երբ էս ցաւով բռնուում են տկար կազմուածք ունեցողները և ծերերը: Եթէ սկզբիցը հիւանդին կանոնաւոր ծանաղարհով չեն հոգս տանիլ, էս հիւանդութիւնը նրկիւղալի կըլինի. ուրեմն պէտք է առանց ուշացնելու դեղ անեն էսպէս: Ա. Արիւն թողնելը միաս է քան թէ օդուտ. բայց երբ հիւանդի կուրծքը արած է և շունչ քաշելը դժուար, միայն էս ժամանակը շահեկան է արիւն թողնելը: Բ. Եթէ հիւանդը չունի սրտի խառնուիլ, էն ժամանակը մաղասը իստակելու համար պէտք է հոգնայ տալ ինչպէս որ գրած է 20, կամ 21 համարումը: Բայց եթէ հիւանդը ըզգում է սրտի խառնուիլ բերնի դառնութիւն և վատ համ, օրցկում է, և լիզուն պատած ունի դեղին մաղձով, առանց ուշացնելու պէտք է տալ բերանիցը բանացնելու դեղ համարաւ 1, կամ 2, կամ 3, կամ 4. Շատ շուտ պէտք է խմացնեն հիւանդին կաթնագոլ չայ համարաւ 31, կամ 32: Գ. Եթէ հիւանդը շատ սուտ ըլի, պէտք է կպցնեն ոտների ձուկ մանրի վրէն 23 համարաւ դեղը և վարուին էնպէս: ինչպէս գրած է

36 յօդուածումը և հիւանդին տան ուժը յետ բերելու համար քիչ լաւ զինի ջրախառն ։

75. Երբ հիւանդը զգայ լաւութիւն. պիտի պահպանէ 55 յօդուածումը գրուած զգուշութեան կանոնները, և կերակուրը գործ ածէ այնպէս. ինչպէս գրուած է 37 յօդուածումը ։

ԳԼՈՒԽ Է.

Բնական ծաղիկ վրայ. (*)

74. Եթէ հիւանդութիւնը սկսում է տաքութիւնով, հեան էլ մարմնոյ վրայ դուրս է տալիս բծեր (կարմիր կարմիր նշաններ) լուի կծածի նման. որոնք լքցուում են և թարախ բռնում. էս հիւանդութիւնը կոչուումէ ծաղիկ ։

75. Ծաղիկը կոչուում է բարի՝ եթէ նոսր է դուրս տրւած և չունէ ծանր հիւանդութեան նշաններ. բայց թէ բոլոր մարմնոյ վերայ մօտիկ մօտիկ դուրս տուած լինի, ասում են միաւորած ծաղիկ, որ երկիւղալի է ։

76. Ծաղիկը չորս աստիճան փոփոխութեան տակ է ընկնում. առ աջ տաքութիւն է տալի, ապա լքցուում է և թարախ բռնում. յետոյ քաշուում է և վերջը չորանում ։

77. Առաջին եղանակումը, ըսկսում է գլուխը ցաւիլ. տաքութիւն է տալիս. շփոթում է և բոլոր մարմինը թուլանում, ախորժակը, (իշտահ) կապուում, սիրտը խառնում բերանիցը զցում և գէշ հոտ դալի ։ Երբեմն էլ պատահում է փոքրի կապուիկ կամ լուծել և երբեմն էլ քթիցը արիւն գնալ. մէջքը ցաւում է, ուզում է միշտ տապ արած, կամ քնած ըլի. քըջ

(*) Էս կարճատա գրուածը բնական ծաղիկ վրայ յայտնում է էջ հիւանդութեան նշանները, հոգս տանիլը և գեղերը կնդուր, որ կարողանան կանոնաւոր կերպիւ պահպանել և գեղ անել որ որ յուս լինի էս երկիւղալի և փոխառող հիւանդութիւնը, որ շատ անգամ ծնողաց գրկից յափշտակում է շատ երկիւղ քանց ։ Ամեն բարեկարգ տկութիւններում տարածումն ժողովրդեան մէջ զանազան լեզուաւ խրատական գրքեր ծաղիկ կարելու և պահպանելու վրայ ։ Ծաղիկը չկուրած երեխայից եթէ տարտարաղութիւն է պատահում, պատճառը ծնողաց անհոգութիւնն է, որոնք ծաղիկ չհամարենք մանաւանդ նորածին երեխայից, որոնք ասուել հնչու են անցկացնում, պարտաւոր են վաղորդ ծաղիկը կարել տալ, որով և կպահպանեն նրանց մահից, կուրութենից և ծաղկատարութենից ։

նիցը յանկարծ վեր է թռչում և սկսում է իրան իրան խօսիլ (դէլը տալ) :

78. Երրորդ կամ չորրորդ օրը փոխում է դէպի երկրորդ եղանակը, քիչ քրտնիք է դալի և սկսում է մինչև ի երեք օր դուրս տալ մանր բծեր երեսահարքին, բկումը (բողազ) և մարմնոյ միւս տեղերումը, որոնք հետզհետէ միաւորում են և լըքցում : էս ժամանակը հիւանդը զգում է բկացաւ և տաքութիւն, որ ծաղիկը դուրս տալուց յետոյ թիթեւանում է :

79. Վեցերորդ կամ եօթներորդ օրը անց է կենում դէպի երրորդ եղանակը. ծաղիկը թարախ (ժահր) է բռնում և որքան շուտ սկսի թարախ բռնելը, էնքան լաւ նշան է, ընդհակառակն ուշ թարախ բռնելը երկխղալի է. էս ժամանակը ծաղկի խոցերի միջոցները (արանքները) կարմրում են, բշտածները բարձրանում են բաւական ցաւ տալով բոլոր մարմնումը. լուս է ընկնում տաքութիւն, բշտերը սկսում են լըքցուիլ սպիտակ կամ դեղին թարախով. աչքի կոպերը, ձեռները և ոտները կամաց կամաց ուռչում են, և յետոյ խուփ են դալի աչքերը և երբեմն էլ վատչում է քունը :

80. Վրայ տասնումէկ օրումը սկսում է չորրորդ եղանակը, որ և տևում է մինչև ի վըայ տասնուչորս օրը. էն ժամանակը տաքութիւնը քչանում է, ծաղկի խոցերը սկսում են չորանալ և թափուիլ և տեղը մնում են կարմիր նշաններ երբեմն կրտսածի կամ կարկտսածի նման :

81. Եթէ հիւանդը լաւ դրութեան մէջ է, նրան հարկաւոր է՝ դեղ անել, միայն պէտք է զգուշանալ որ հիւանդի պառկած տեղի օդը լինի չափաւոր տաք, և շուտ շուտ լուսամուտը կամ դուռը բաց անեն, որ օդը նորոգուի : Ծաղկի սկսած օրիցը հիւանդին պէտք է քիչ հով պահեն, իսկ ծաղիկը դուրս տրւած ժամանակը՝ տաք : Կերակուրը տան թիթեւ և հնչա մարսելու, օրինակ՝ բրնձի կամ բլղուրի ապուր (չորվայ), չորացրած սև դաճն, էփած կամ խորոված խնձոր, կամ սերդեիլ : Խմելու համար տան նուան ջուր կամ լիմոնի կամ ծորի կամ ազոխի (ժուռ) քամուքս ջրախառն շաքարով կամ լաւ մեղրով պատրաստած : Երբ ծաղիկ ընկնողը ունենայ երկխղալի նշաններ, պէտք է վարուին էնպէս, ինչպէս ներքև յօդուածումը

82. Եթէ առաջին եղանակումը, այսինքն՝ տաքութեան ժամանակը հիւանդը ունենայ անհամբերելի բզացաւ, մաջէն գցէ ուժով և լիք լիք, շունչ քաշում լինի ծանր. խմելու համար տուր թթու նւան, կամ ալիբուխարու, կամ լիմոնի, կամ ծորի քամուքս. ջրախառն, շաքարով կամ մեղրով ոտների տակը կպցրու թթու խմոր, հետը մանանեխ շաղախած: Եթէ փորումը կապ ըլի, տուր փորիցը լուծելու դեղ համարաւ 4, կամ 5, կամ 6, կամ 7, կամ 8. կամ մատի հաստութեանով քերած և վրէն ձէթ քսած սապոն վեր առնել տուր նըստելու տեղից, կամ թեթեւ հոքնայ տուր 20 համարում գըրած դեղալ:

82. Եթէ հիւանդին պատահի սրտինն զանալ. թմրութիւն գայ վրէն և բոլոր մարմինը դողդողայ, գործ ածա՛ վերելի յողուածումը գրած դեղերը: Կս միջոցումը եթէ հիւանդը դեղ մօտ չէ թողնում, գրեխ տուր, կամ սապոն վեր առնել տուր նստելու տեղից և ոտների տակը կպցրու թթու խմոր մանանեխով և վրէն թո՛ղ երկար ժամանակ, և շուտ շուտ քացախ հոտ քաշել տուր:

84. Ծաղիկը դուրս տալուց յառաջ, եթէ հիւանդի մարմնոյ մորթը չոր և ցամաք է և արգելում է ծաղիկը հեշտ դուրս տալուն, թաց արա՛ կտաւի կամ ամրի (սիւնկէր) կտորը տաք ջրումը, քսէ բոլոր մարմնոյ վրէն և խմացրու դեղ համարաւ 10:

85. Ծաղիկը դուրս տալու ժամանակը եթէ հիւանդի տաքութիւնը բոլորովին հովանայ, բայց ինքը շատ թոյլ լինի, էն ժամանակը սկտք է տան զօրացնող դեղ համարաւ 13, կամ 14. և կամ խմացնեն մէկ մէկ զգալ լաւ դինի ջրախառն:

ԳՂՈՒԽ Ը.

Ատրմբուկի (հարսանիթ) վրայ.

86. Ատրմբուկ կոչուում է էն հիւանդութիւնը, որ մարմնոյ վերայ դուրս է տալի լուի կծածի նման բծեր, որոնք ոչ ծաղկի նման լքցուում են. և ոչ թարախ բնում, այլ հետզհետէ փուռում են և վից կամ եօթն օրից յետոյ վեր են թափուում թեփի պէս:

87. Էս բժերը սնին նմանութիւն ծաղկի հետ և նրա պէս դուրս են տալի խիտ (սըխ) կամ նոսր և ջոզուում են ծաղկից երկու նշանով՝ առաջինը՝ ծաղկի դուրս տալուց յետոյ հիւանդի տաքութիւնը քչանում է, բայց կարմրուկի դուրս տալուց յետոյ տաքութիւնը և տկարութեան միւս նշանները մնում են անփոփոխ և նոյն առաջին դրութեան մէջ. երկրորդը՝ ծաղկի դուրս առած բժերը թարախ են բռնում, բայց կարմրուկինը չեն բռնում, ինչպէս վերևը յիշեցինք :

88. Կարմրուկը սկսում է դողացնելով, գլուխը ցաւելով, չոր հագով և շուտ շուտ փռշտացնելով. էս նշանների հետ աչքի կոպկերը ուռչում են աչքիցը նոսր թարախ և քնթիցը ջուրէ վազւում :

89. Երրորդ կամ չորրորդ օրը դուրս կ'տայ բոլոր մարմնոյ վերայ, մեծ մեծ և երբեմն էլ մանր մանր նշաններ, սկզբումը ջոկ ջոկ և հեռու հեռու, որոնք կարճ ժամանակից յետոյ կընդարձակուին և կըմիանան, բայց չեն բարձլ անալ : Էս միջոցում կուռչին աչքի կոպկերը : Վեցերորդ, կամ եօթներորդ, կամ ութերորդ օրը բիծերը կսկսին թեփի պէս վէր թափիլ :

90. Կարմրուկ ընկածին, թէ որ ուրիշ հիւանդութեան նշաններ էլ չեն լուս ընկնում, դեղ անել պէտք չէ, միայն հարկաւոր է զգուշանալ որ հիւանդի պառկած տեղը ցուրտ չլինի և քամի չը բանի, հազը քչացնելու համար պէտք է խմացնել չայի պէս եփ տուած թանթրովնի կամ կակղիի, ջուրը կիսատաք կամ 10 համարաւ դեղից :

91. Եթէ մարմրուկը սկզբիցը որպիսի և իցէ պատճառով ներս քաշուի և էլ կրկին դուրս չտայ, էն ժամանակը կը ներգործէ թոքի կամ աղիքների վրէն : Թէ թոքի վրէն ներգործէ, կը դժուարացնէ շնչառութիւնը. իսկ եթէ աղիքների վրէն՝ յառաջ կուզայ սաստիկ լուծմունք : Ետպէս պատահելիս ոչինչ հնարք էնպէս շուտով չի օգնիլ, ինչպէս թթու խմորը մանաւնելով կպչնելը կուրծքի վրէն, երբ շունչ քաշելը դժուար բլի : Եթէ ունենայ լուծումէ պէտք է թթու խմորը կպչնեն փորի վրէն, և վարուին ինչպէս որ դրուած է 36 յօդուածումը և խմացնեն կիսազով դեղ համարաւ 10 :

92. Եթէ պատահի որ ուրիշ տեսակ ցաւով բռնուած ժամանակը դուրս տայ եղնջով ձեծածի պէս բժեր, որոնք հետզ

զհետէ փռուելով միմեանց հետ խառնուին և միանան կարմ-
բուկի նման, էն ժամանակը պէտք է դեղ անել և վարուիլ էն-
պէս, ինչպէս կարմրուկի համար գրած է :

ԳԼՈՒԽ Թ.

Քութէշի վրայ.

93. Քութէշ կոչուում է էն հիւանդութիւնը, որ մարմնոյ
վրայ դուրս է տալիս կարմիր բծեր, բուկը ցաւում է և վեց
կամ ինն օրից յետոյ մարմնոյ կաշին կտոր կտոր կճգուում է :

94. Էս բծերը դուրս են տալի սկզբից ուսերի առջևի
կողմից և կռների վերայ և մէքանի օրից յետոյ սկսում են բո-
լոր մարմնու վրայ փռուիլ և միանալ բացի երեսից : Սա կար-
մբուկից ջոզուում է էնդուրով, որ հազալ փռշտալ աչքից
նոսր թարախ դնալ չէ ունենում և էլ կորմբուկի յետ դառ-
նալիս կաշին թեփի պէս է վէր թափվում է, իսկ քութէշինը
կտոր կտոր :

95. Քութէշի սկսելիս հիւանդը ըլում է թոյլ, թեթեւ մըր-
տացնում է, տաքութիւն է տալիս, որ գիշերները աւելանում է,
մաջէն դցում է շուտ շուտ բուկը և շինքը ցաւում է, ջլերը խա-
ղում են և իրան իրան խօսում է : Շատ անգամ էս ցաւը լուս է ընկ-
նում միայն բգումը. մարմնոյ վրայ դուրս է տալիս շատ քիչ կամ
բոլորովին չէ դուրս տալի, միայն վերջը մարմնոյ կաշին կտոր
կտոր թափուում է. կամ ջրդոզութեան ուռուցք է դալիս հի-
ւանդի վրայ : Չկայ սրա նման անհաստատ նշաններ ունեցող
էլ ուրիշ մի հիւանդութիւն :

96. Շատ անգամ էս հիւանդութիւնը աւելի սաստիկ նը-
շաններով բռնում է, օրինակ՝ բուկը սաստիկ ցաւում է, բերա-
նիցը դալիս է վատ հոտ, ունենում է բորբոքում, փտախտու-
թիւն և ուղեղի բորբոքում : Էս երկիւղալի հիւանդութեամբ
բռնուողին եթէ ամառն է, երեք շաբաթ, և եթէ ձմեռը, վեց շա-
բաթ գողինքում պառկած պէտք է պահեն և միշտ տաք :

97. Թէ որ էս հիւանդութիւնը, թեթեւ նշաններով է գա-
լի, ուրիշ դեղ չէ հարկաւոր, միայն թեթեւ լուծողական տալով
փորը փափուկ պահել, և հեշտ մարսելու կերակուր ուտացնել

և ամէն տեսակ վնասակար և դժուարամարս բաներից հեռու պահել: Եթէ տաքութիւնը խփէ գլուխը, կ'իմացուի էս նշաններով: գլուխը կունենայ սաստիկ տաք, իրան իրան կ'լսօսի, աչքերը փոք ընկած կըլին և բուզը շատ կցաւի, որ կուլ տալը դժուարանում է և ուշքը կորցնում: Էսպէս պատահելիս հարկաւոր է սառը ջրումը դրժած շոր դնել ճակատին վերայ ու քանի տաքանայ, փոխել ականջների քամակին տղտուկ կպցնել և թողնել որ բաւական արիւն գնայ, հիւանդի ուժին մտիկ տալով և խմացնել դեղ համարաւ 17: Եթէ հիւանդի բերնից և բոլոր մարմնից վատ հոտ գայ, նշան է որ փտախտ է: Էն ժամանակը պէտք է չափաւոր թըթու ուտելիք, և խմելիք տալ: այսինքն լիմոն, մեղրաքացախ, բուխարեան շոր (ալբուխարի), ճանճուռ, թըթու նուռը, խորոված թըթու խնձոր, եթէ գլուխուի թըթնջուկ (սրա քամուքսը ջրով և շաքարով պէտք է տալ խմելու քիչ քիչ): Եթէ հիւանդութենից յետոյ ջրդողի ուռուցք պատահի, էն ժամանակը պէտք է նստացնել տաք ջրումը և քրտնացնել: Էս ցաւի սաստիկ ժամանակը բժիշկ կանչելը ամէնից լաւ է:

98. Միշտ վատ նշան համարելու է, եթէ ցաւը ներս է խլուփում: էս ժամանակը քթիցը արիւն կերթայ, սաստիկ տաքութիւն կտայ, ուշքից կընկնի և դուրս տուած կարմիր բծերը կդառնան ծիրանի:

ԳԼՈՒԽ Ժ.

Բերանիցը բանացնելու վրայ.

99. Ստամոքսումը ժողոված մաղտսը կամ մաղձը երբ բերանիցը բանացնէ էս հիւանդութիւնը կոչուում է փսխել կամ բերանից բանացնել:

100. Փսխելը յառաջանում է վատ և աւերուած բաներ ուտելուց, կամ երբ ստամոքսը ծանրացած է աւելնորդ վնասակար մաղաւտով:

101. Էս հիւանդութիւնը ճանաչելու նշաններն են. սիրտը խառնուում է, սրտի գլխի տեղն զգումէ ծանրութիւն, մըրսացնում է բոլոր մարմնը, կամ վրէն թեթև սարսափ է գալի և

զգուժէ կերակրիցը զգուիլ մանաւանդ մտիցը: Բիւկալիս վատ հոտ է գալի բերանիցը, զլուխը պտուտ է գալի, լեզուն ըլումէ մաղասով պատած, և բերնի համը դառար, զիշերը բրանում է և սրտով ուզումէ խմել կամ ուտել թթուաշ բաներ:

102. Էս հիւանդութենի օգտակար և սովորական գեղն է տաք ջուրը շուտ շուտ և բուականաչտի խմացնել հիւանդին սրտի խառնուելու ժամանակը. սրանով ստամոքսուն մտ էւ լած թանձր մաղասը կ'նոսրանայ, հեշտ կ'բանայնէ բերնիցը, և շուտ կ'խտակուի: Եթէ էս հնարքը չօգնէ և ստամոքսը չխտակուի, կամ թէ տաք ջրի գործ ածելուց յետոյ հիւանդը էլի զգայ սրտի խառնուելը կերակրիցը զգուիլ և բերնի դառնութիւն, էն ժամանակը տուր բերանիցը փսխացնելու գեղ համարաւ 1, կամ 2 և կամ 3: Բանացնելուց յետոյ հիւանդին խմացրու գեղ համարաւ 35, և զգուշացրու ծանր և զժուտարամարս կերակուր ուտելուց մինչև որ ստամոքսը լաւ ամրանայ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Բերանիցը եւ փորիցը բանացնելու վրայ.

103. Էսպէս կոչուումէ էն հիւանդութիւնը, որ բերանիցը բանացնումէ մաղսս և մի և նոյն ժամանակ լուծելէ տալի փորիցը:

104. Էս հիւանդութեան զլխաւոր նշանները սրանք են: Փորը վքնումէ, շուտ շուտ բխկայնումէ, սիրտը խառնուում, բերանիցը փսխել տալի և փորիցն էլ բանացնում: Ստամոքսը և աչքերը ցաւում են, շուտ շուտ փութս է արձակում. փորիցը դուրս գնացածը ըլումէ սպիտակադոյն, կամ գեղին, կամ սև կամ կանաչ. բազկի երակը (նամը) զգումէ սկիզբը լիքը ու շուտ շուտ, յետոյ փոխուումէ դէպի մեղմը և թոյլ: Արեւը զրաժ բոլոր նշանները երբեմն ըլումեն էնպէս սատարի, որ ամուր կազմուածք ունեցողներն էլ մէ քանի ժամումը ուժից ընկնում են:

105. Էս դրութենումը հիւանդը բացի տանջուիլը, բոլոր մարմնումը զգումէ տաքութիւն, հետն էլ ստամոքսի անտանելի ցաւ նքոցով. պատահումէ երբեմն, որ ոտները թմբուում են

և քաշուում: և ողջ մարմնոյ վրէն գալիս է սառը քրտինք: Եւ նշաններէց յայտնի է, որ հիւանդի դրութիւնը վաղ է, և ցաւը դժուար բժշկուելու, մանաւանդ թէ որ չըլին հիւանդին սկզբիցը խնամք տարած և դեղ արած:

106. Էս հիւանդութիւնը առաւել լուս է ընկնում ամառուան վերջին օրերումը և առաւելագէս հետեւեալ պատճառներէց: Ա. երբ փնասուած մաղձը սկսուի եւ գալ նրանց մէջ, որոնք սաստիկ շոքումը ծանր աշխատումն և երկար ժամանակ մընում արեւի տակ: Բ. Պատահում է նրանց, որոնք չեն ծարում լաւ և թարմ (թաղայ) ուտելիք և զործ են ածում փնասուած կերակրեղէն: Գ. Պատահում է նրանց, որոնք զործ են ածում չափազանց տաքացնող և աղղու (թէթ) խմիչք, որ սչ թէ միայն ամառը, այլ ամէն ժամանակ փնասակար են: Դա պատճառում է չափազանց մըրդեղէն, մանաւանդ խակ պտուղներ, էնպէս էլ սուեի (սօկոն) և վարունգ (խիար) և սրանց նման ծանր և դժուարամորս բաներ ուտելից:

107. Էս հիւանդութեան բժշկելու եղանակն այսպէս է: Թէ որ էս հիւանդութիւնը յառաջանայ վերևը գրած պատճառներէց, այսինքն, փնասուելուց կամ փնասակար կերակրեղէնից, էն ժամանակը պէտք է շուտ շուտ տաք ջուր, կամ կաթը՝ գալ ջուր հետը խառնած, խմացնեն: Բ. Թըր երեք անգամ կիսադրլ գըրելիս տան կաթ և ջուր խառնած, հիւանդին ուտացնեն հաւի կամ վառեկի մօի խաշու, շատ որ զօրութենից ընկնի հիւանդը, տան 36 համարու դեղը և պատիկ փորից քիչ բարձր դնեն փոքրիկ շորացրած անանուխ, կամ թեփ, քացախով ցըրցում տուած (սրկած). Գ. Եթէ էս հիւանդութիւնը յառաջացած ըլի չափազանց միւրդ զործածելուց, սկզբիցը պէտք է տան բերանից փսխելու դեղ համարու 1, կամ 2, կամ 3, և քսեն փորի վրէն տաքացրած ձէթ (ձիթենեոյ կամ կտաւատի) և փորի վրէն դնեն տաքացրած թեփ, կամ տաքացրած ցամաք գարի: Փորը կապող կամ ուրիշ գրսեից քսելու կամ դնելու տաք և տըտիպ դեղերից պէտք է զգուշանայ, ինչպէս են մըշկահատ ընկուզ (ջալղ) զինումը կփած նռան կճեպը, պաղլեզը (շիւ) ջրումը հսպած, և ուրիշ սրանց նմանները, որոնք չափազանց փնասակար են էս հիւանդութենին:

108. Երբ հիւանդը զգայ լաւութիւն, զօրութիւն տայու համար զօրժ ածան դեղ համարաւ 12 կամ 35 և զգու շացիր ուսելիքի և խմելիքի կողմանէ :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Թեթև փորբացութեան վրայ.

109. Առանց դողի և առանց փորացաւի շուտ շուտ լուծելը կոչուումէ թեթև փորբացութիւն :

110. Էս ցաւի նշաններն են : Արտի խառնուիլը, բերանի դառնութիւնը, քացղած կամ կծուած եղև համի բխկալը, փորի ոլորտալը, կերակրիցը և առաւել մեղէնից զգուիլը և լեզուի գեղին մաղձով պատած ըլիլը :

111. Էս տեսակ լուծելը երբեմն օգնումէ ուրիշ հիւանդութեանց առաջը առնելու, որովհետև ստամոքսի մէջ ժողովուած վնասակար մաղասը շարժումէ և բանացնում, և ազատումէ ուրիշ երկիւղալի ցաւերից և ամբայնում ստամոքսը : Էսպիսի լուծել երբ պատահի, չէ հարկաւոր դեղանել, միայն պէտք է զգուշանալ ամէն պարարտ (չաղ) կերակրեղէններից և սառաւել ամէն տեսակ մեղէնից, շատ էփած կամ պինդ խորոված ձուից և ուրիշ սրանց նման զժուարամարս բաներից :

112. Եթէ փորբացութիւնը հինգ օրից աւել քաշէ և հիւանդը զգայ նուաղել և փորի կարասել կամ փորի ցաւիլ, էն ժամանակը փորը կապելու համար պէտք է վարուին հետեւեալ կերպիւ : Ա. եթէ բխկայնելիս բերանումը քացղած կամ կծուահամ զգայ, կամ բերնիցը գէշ հոտ գալիս ըլի, պէտք է օրը երկու կամ երեք անգամ խմացնեն կէս կէս զգալ բարակ ծեծած գործի ջրով. տես զլուս ԼԱ: Բ. եթէ գալիս ըլի սրբաի խառնուիլ, բերնի դառնութիւն, և կերակրից զգուիլ, պէտք է տան 3 համարաւ դեղը : Գ. եթէ զգումէ փորի ոլորտալ և նրա հետ էլ սրտի խառնուիլ, պէտք է տան փորիցը բանացնելու դեղ համարաւ 4, կամ 5, կամ 6, կամ 7, կամ 8, և ջրի տեղ խմացնեն լաւ կամբացրած հացի ջուր կամ 37 համարաւ դեղը և զգուշանան որ հիւանդը դուրս չղնայ առանց տաք հաղուտի :

ԳԼՈՒԽ ԺԳ.

Արենախառն փորագնացութեան կամ նքոցի վրայ.

113. Սաստիկ նքացնելով և խիտ ոլորտալով, և զգալի ցաւով շուտ շուտ և արենախառն դուրս տանիլը կոչուում է արենախառն փորագնացութիւն կամ նքոց :

108. Էս հիւանդութիւնը երբեմն սկսում է թիթե դողացնելով և տաքութիւն տալով : Եթէ դողացնելով սկսէ երկիւղալն է :

115. Էս ցաւը նախընթաց տանու մէկ գլխումը յիշած թիթե փորքացութենից ջոկելու նշանն էն է, որ դուրս է տանում շուտ շուտ, փորի ցաւելով, նքացնելով և կտրուաքսով. դուրս գնացածն ըլլում է քիչ և ըստ մեծի մասին աղիքների կրթուքս մաղախառն, կամ արենախառն :

116. Նքոցը կամ արենախառն փորայնացութիւնը առաւել ըստ է ընկնում ամառուան սաստիկ շք ժամանակը և քշում է մինչևի աշունքուան հովը ընկնիլը :

117. Էս հիւանդութիւնը երբեմն փոխադրական է ըլլում, մանաւանդ տաք երկիրներումը. զգուշանալու համար հարկաւոր է գիտենալ թէ ի՞նչ պատճառներից է յառաջանում սպերեկը սաստիկ շք, և գիշերը ցուրտ անկէրքտինքը յանկարծ կտրուելուց, ծախնային (ջիմջիմայ) և թաց տեղ բնակուելուց, աղիքները զրգուելուց, ծիծուից, և թունաւոր բան ուտել խմելուց : Առանց յիշեալ պատճառներին առողջ մարդիկ էլ կտիրանան էս ցաւին. թէ որ էս ցաւով հիւանդի հետ ՚ի միասին բնակին, մանաւանդ թէ որ մէկ արտաքնոցումը ման գան : Թիթե փորագնացութիւնն էլ երբեմն փոփարկուում է և դառնում էս տեսակ հիւանդութիւն, թէ որ սկզբումը օգնութիւն և յարմար դեղեր ՚ի գործ չ'ընեն :

118. Արենախառն փորագնացութիւնից առողջանալու կամ աղատ մնալու համար հարկաւոր է պահպանել հետեւեալ զգուշութեան կանոնները : Ա. Պէտք է վերոյիշեալ պատճառների առաջը առնուլ, որոնք յառաջացնում են և սատկացնում էս հիւանդութիւնը : Ինչպէս հիւանդները էնպէս էլ առողջ մար-

դիկը շորած և դադրած չ'պիտի պառկին, կամ նստին ցերեկը կամ դիշերը բաց օդում, կամ սառը և խոնառ տեղում, քրքորն-քրտած շորերը խկոյն պիտի փոխեն, և դիշերը դուրս չդնան բարակ հագնուած : Բ. Պիտի զգուշանան ծանրացած կամ հոտած կերակրեղեններից, որ թէ հիւանդների և թէ առողջների համար շատ փնասակար է : Թէպէտև հասած մրգեղինաց չափաւոր գործածելը առողջ մարդկերանց համար օգուտ է, որովհետև փնասուած մաղձը կ'խտակէ և էս տեսակ հիւանդութիւնից կ'պահպանէ, միայն հիւանդին պէտք չէ կամք տալ ուտելու, մինչև որ առողջանայ բոլորովն, բայց խակ միրգը առ հասարակ ամէնի համար էլ փնասակար է : Գ. Էս ցաւով հիւանդացածին առողջ մարդկիներէց պիտի հեռացնեն և պահհեն ջոզ տան մէջ. նրա պառկած տեղը օդը շուտ շուտ նորոգեն, լուսամուտը կամ դռները բաց անելով : Դ. Եթէ հիւանդին կերակուր դուր չէ գալիս և լեզուն պատած է զեղին մաղձով, սիրար խառնուում է, կամ բերնիցը զցում, պէտք է տան դեղ համարաւ 2, կամ 3, կամ 38 : Հիւանդը առանց զեղի էլ փորիցը թէ և բանացնում է, այնու ամենայնիւ օգտակար է լուծողականների գործածելը, որովհետև փնասուած և վատ մաղտսը աւելի քանդելով ոչ թէ հիւանդին զօրութենից կզցէ, այլ կ'թեթեացնէ նրան և կհատատէ զօրութիւնը : Եթէ հիւանդը ունենայ սաստիկ փորացաւ և աղիքների կրտակ, պէտք է խմայնեն էփած տուղով ջուր, (տես համար 37.) և օրը չբս, կամ երեք անգամ զբխ (հոքնայ) տան (տես համար 39) և զբխումը խառնեն մէկ զզալ բարակ ծեծած գործըն և բանացնեն վերևի զրած պղերը, մինչև որ հիւանդութեան նշանները քչանան և հիւանդը հանգիստ քուն ունենայ :

119. Պէտք է ուտացնեն լաւ էփած բրնձի, կամ ձաւարի շորվայ փոքր ինչ կարագով, կամ լաւ ձիթով, նա և լաւ էփած հորթի կամ ոչխարի ռաների ջուրը սառեցրած :

120. Ձրի տեղ խմայնեն երիցուկի ճաղկի ջուրը կամ տուղտի տակու ևփ տուած ջուրը, կամ ձաւարի լաւ էփած և քամած ջուրը : Ընչ հակառակն փնասակար են տաքացնող և զօրացնող բաները, օրինակ՝ զինի, արաղ, կինամոնի չայ, մըշ-

կահոտ ընկուզ, պաղլիզ, գխտոր, նռան կեղև և սրանց նման ներք խմացնելը, կամ դրսեանց քսելը և դնելը :

121. Երբ հիւանդը չի ունենալ փորի ցաւ և կտրտութիւն, և երբ դուրս է գնում թէպէտ և քիչ, բայց ոչ առաջուան պէս հոտած, և քնում է հանգիստ, էն ժամանակը կարելի է հաւելի, կամ ուրիշ միս ուտացնել: բայց միւր չը պիտի լինի գէշ: Ձրի տեղ խմացրու լաւ կարմրացած հացի ջուրը, մէջը խառնած քիչ կարմիր լաւ դինի, և բացի սրանից օրը չորս անգամ կէս կէս դգալ ձեծած գործը ջրով, կամ գինով:

122. Սաստիկ նքայնելուց երբեմն պատահում է, որ դուրս է դալի ներքեի հաստ աղէքը (սրբան), որ և պէտք է ներս քաշել էսպէս. դուրս էկած աղէքը լուանան տաք կաթնով, ցանն վրէն 40 համարաւ դեղը և կամսց կամսց երկու ձեռքի մատներով հուփ տալով ներս քշեն իրան տեղը, էս միջոցին հիւանդը պիտի մնայ անշարժ պառկած երկար ժամանակ, մինչև որ ամրանայ աղէքը և նորից էլ չը դուրս գայ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Սուրալանդի կամ Աղեկիծի (*) վրայ

123. Աղեկիծ հիւանդութեան նշաններն են. կրբ երեսի գոյնը թռած է կամ դեղնած, մարմնոյ և մանաւանդ ոտների վրէն գուրս տուած են դեղին, կամ կարմիր, կամ կապտագոյն բծեր, և երբ լնտերքը ուռած է և արիւն է գնում:

124. Սուրալանդը լուս է ընկնում էս նշաններով. առաջ առաջ երեսի գոյնը փոխուում է, յետոյ երեսահարքը ուռչում, նոյնպէս պառնդների և լնտերքի գոյնը գնում է, կամ կապտաւում, քնիլ շատ սիրում է հիւանդը, զգում է ծանրութիւն բոլոր մարմնումը էնքան, որ փոքր ինչ աշխատելուց, կամ քընելուց յետոյ թլանում է և թլըփում:

125. Եթէ հիւանդութենի սկզբիցը յարմար դեղեր չեն անել, մէ քանի ամիսից յետոյ լուս կրնինի կուրծքի և խաղերի (յօղուածների) ցաւ, և կրսիսի ցաւը անդէ տեղ փոխուիլ և հիւանդին շատ նեղութիւն պատճառել. մարմնոյ ծանրութիւնը կաւելանայ և շարժողութիւնը կ'դժուարանայ, լնտերքը

(*) էս ցալն Լատիններէն կոչում են Սքորբութուս:

կուռչին և արիւն կերթայ, բերնիցը գէշ հոտ կուզայ, ահա էք ները կ'ղեղնին, մարմնոյ վրէն լուս կընկնին կարմիր, կամ կապտագոյն բծեր, և երբեմն քթիցը կամ բզիցը արիւն կուզայ և յետոյ կը բռնուին ձեռներն ու սոսները :

126. Եթէ էս դրութենումն էլ առանց դեղ անելու թողնեն հիւանդին, աւելի կ'սաստկանան յիշեալ նշանները և չարաչար կտանջուի. սաստիկ տաքութիւն կըտայ բոլոր մարմնումը. ըստերբը կ'մնասուին, կ'սեանան, ահա էքները ժաժ կընկնին և կ'ղեղնին. շնչառութիւնը կ'դժուարանայ. ծնկները կուռչին, սոսների վրէն զուրս կուտայ խոցեր և կսկսի արիւն դնալ : Երբեմն էլ պատահում է, որ ջրգողութիւն է լուս ընկնում, կամ արեան փորագնացութիւն և շուտ շուտ կըսկսի հիւանդի սիրտը գնալ. էն ժամանակը նորա կեանքնէլ կ'վերջանայ :

127. Էս հիւանդութեան պատճառ կարեն դառնալ, ա. ցածր, խոնաւ, կամ ճախնային տեղ բնակիլը, բ. վատ և փնասուած կերակուր գործածելը, գ. փնասուած, կամ դրի ջուր խմելը, դ. չափազանց և շուտ շուտ թէժ խմիչք գործածելը, և ե. բազմութեամբ նեղուածք, կամ թաց տան մեջ միասին կենալը, մանուանդ թէ որ չեն նորոգում օդը :

128. Էս ցաւի դեղ անելը պէտք է ըլիէսպէս. երբ տեսնես, թէ հիւանդութեան նշանները էնպէս են, ինչպէս որ դրած է 125 յօդուածումը, տուր առաջ ստամբսը խտակելու լուծող դեղ համարաւ 6. և յետոյ 41, կամ 42 կամ 43 համարաւ դեղը. Եթէ հիւանդը ուժից ընկած ըլի, տուր զօրացնող դեղ համարաւ 11, կամ 12, կամ 16: Շարաթը երկու կամ երեք անգամ հիւանդին նստացրու տաք ջրումը, ինչպէս դրած է 44 համարումը: Գ. Եթէ լուս ընկնի հիւանդի վրէն. 126 յօդուածումը դրած նշանները, տուր 14 համարաւ դեղը և բերանը ողողել տուր 45 համարի դեղով: Հիւանդի բոլոր մարմինը լուս գիշերը պատկերու ժամանակը տաք քսցախով. Գ. Հիւանդը պահէ ցամաք տան մեջ և առանձին, որ ցաւը ուրիշին չփոխարկուի: Ե. Կերակուրը պիտի ըլի պատրաստած կանանչ և թարմ (թաղայ) բանջարեղէնից, օրինակ՝ թրթնջուկ, աւելուկ, շոփն, (ըսպանախ) զազար, կաղամբ, և ս ծոր : Առաւել շահաւէտ է ուտել էս հիւանդութենումը սոխ, բոխկ,

կծուիճ, նոյնպէս և թրթու նուռը և ուրիշ հասած մրգե-
ղէնք, միայն չափաւոր: Չ. Խմելու պէտք է տան հիւանդին լի-
մանի, կամ թրթու նռան, կամ ազոսի (ժուռ) ջուր և կամ
քացախով խառնած լոկ ջուր:

129. Էստեղ գրած դեղորէքը գործածելիս հարկաւոր է
նոյնպէս մաքուր պահել ինչպէս հիւանդի շորերը. էնպէս էլ
նրա պառկած տունը, որոյ օդը շուտ շուտ նորոգելու է, լու-
սամուտը և դռները բաց անելով:

ԳՆՈՒԽ ԺԵ՛

Վեներայի (Գաղղիական ախտէ ֆուկսի) վրայ

130. Մարդկային ցեղը փչացնող հիւանդութիւններից
ոչ մէկը էնպէս սաստիկ փոխադրական չէ, ինչպէս էս հիւան-
դութիւնը. էստուր համար է, որ սրան կոչում են թիւնաւոր
հիւանդութիւն, կամ գաղղիական ախտ:

131. Գաղղիական ախտը ջողուում է միւս իրան նման հիւ-
ւանդութիւններից իր առանձին նշաններով, որոնք հետզհետէ
փոփոխուում են, ինչպէս ներքեւը պիտի յիշուի: Միւս սրա
նման հիւանդութիւնք թէ ներսնայինները և թէ արտաքին-
ները լուս ե՛ր ընկնում մարմնոյ մէջ իրանց իրանց, բայց գաղ-
ղիական ախտը ուրիշ կերպիւ չէ զոյանում, եթէ ոչ մէկից
միւսին փոխարկուելով:

132. Անդգուշութենից մէկից մէկէլն փոխարկուում է էս
հիւանդութիւնը հետեւեալ պատահմունքներումը: Ա. Մեր-
ձաւորութեան ժամանակը եթէ էս ցաւիցը ունենայ մէկը, միւ-
սին էլ կ'կպչի: Բ. Թէ որ մէկը ունենայ պառւնգների վրէն, կամ
բերանումը դուրս տուած գաղղիական ախտի խոցեր, ու ու-
րիշին մօտանայ, պաչպչէ, այս եղանակաւ մանաւանդ խիստ
շուտ փոխարկուում է երեխանցը: Գ. Նմանապէս երեխանցը
կ'փոխարկուի, երբ գաղղիական ախտով հիւանդը իր ծամած
բանը բերնից հանէ և երեխի տայ: Աւրեմն զգուշանալ պիտի
ծնողքը և պատուիրեն ինչպէս ծծմօրը էնպէս էլ այլոց, որ չը
տան երեխանց իրանց ծամած թիւքէն, որովհետեւ շատ տե-

սակ մնասակար հիւանդութիւնների պատճառ կարէ դառնալ էս անդուշութիւնը. Գ. Կ'փոխարկուի էս ախար նոյնպէս հիւանդի քաշած չիբուխիցը. զգալիցը, և ամանիցը, ևս նրա շորերը հագնելուց և կողի'նքումը պառկելուց: Ինչքան մեծ անխոհեմութիւն է նրանց կողմանէ, որոնք տուն են դնում սրճանոց (զահլէխանայ) կամ այլ հասարակաց տեղեր և ուրիշ չիբուխով կամ զալխնով ծխախոտ (թիւթիւն) քաշում և մէկը միւսին տալի: Կս անզոյշ և անծանօթ բարեկամները էստուրով շատ անգամ պատահում է, միմեանցից գող ղիական ախտ են բնկնում: Ե. Եթէ մօր կամ ծծմօր ծծերի վերայ դուրս տուած ըլին զազղիական ախտի խոցեր, իսկոյն կ'փոխարկուի երեխին՝ իսկ եթէ երեխի պուռնդներին դուրս տուած ըլի այն խոցերից, իսկոյն կ'փոխարկուի ծիծտուողին. ուրեմն շատ զգուշութենով պէտք է բնարել ծծմօրը: Եթէ երեխէն ունենայ էս ախտիցը, պէտք է ղեղ ա'նել և մինչևի լաւանալը ծծի տեղ կողի կամ իծի կաթը ուտացնել:

155. Նախ եթէ զազղիական ախտը լուս ընկնի զբսելից արական կամ իզական ծածուկ անգամի վըն, էն ժամանակը դուրս կտայ խոցեր, որոնց տեղումը սկզբիցը քոր կզայ՝ յետոյ կսկծայցնելով հետզհետէ խոցերը կէնանան և կխորունկանան, և վերջը նրանց միջից թիւնաւոր (թարախ կզնայ *): Բ. Սրբանից ուռչում է տղամարդի արական անգամի կաշույ ծայրը, զժուարանում է նրա ցածր կամ բարձր քաշիը, և նեղացնում է հիւանդին. Գ. Կս խոցերը համարուում են հաստատ գազղիական ախտի նշաններ: Եթէ օրինաւոր ղեղերով վեց շաբաթւան մէջը բոլորովին չլաւանայ էս հիւանդութիւնը, էն ժամանակը կը փոռուի բոլոր մարմնոյ մէջը և այնուհետև լաւացնելը զժուարին է: Գ. Եթէ որ մէկը ունենայ վերոյգրեալ հիւանդութեան նշանները, և տնօթից կամ երկիւղից իսկոյն չյայտնէ բժշկի կամ մէկ փորցած ու խոհեմ մարդու և չզործ դնէ օրինաւոր ղեղեր, կարճ միջոցում լուս կընկնի նստելաղումը ուռուցք զորտնուկի նման. աճուկների խուլերն կուռ

*) Գազղիերէն էս հիւանդութիւնը կոչում են շամկեր.

չին. մարմնոյ վրէն դուրս կուտայ մանր խոցեր քոսի կամ մըրջմուկի նման, որ և կսկսի ժաճի բունել: Ե. Երբ էս հիւանդու թիւնը խիստ թունդ կպած ըլի, էն ժամանակը հիւանդը կըզգայ զողի նշաններ, անհամբերելի սկսուի ցաւ, որ սուսուկ սաստիկանում է իրիզնասպահերն: Զ. Ոսկոտների վրէն լուս կընկնին կոշտ ուռուցքներ, դուրս կուտայ բերանումը և պունկների վրէն թարթախոտ խոցեր, որոնք կ'զժուարացնեն կուլ ասղը: Էնպէս թիւնաւոր է էս խոցերի ժաճը, որ կուտէ ու կմաշէ մեղձախայ միսը և բոյի մէջ աջու ձախ փափուկ մտերը. (մասնաբը) և կատիկը: Էս է պատճառը, որ փոխուում է ձէնը և խօսաղիս զնջզնջացնում է: Ե. Երբնմն էլ պատճառում է կերքցաւ, սուսուկ քթի կոճիկներումը, որով կը փթի և վէր կ'ընթացի քթը և յա. խոտան կ'մնայ էնպէս: Էս հիւանդութիւնը, թէ որ նորածին երնխայք ընկած ըլին, կունենայ պոռնգների վրէն կամ բերանումը սպիտակ կոճիճներ դուրս տուած, որոնց միջկց ժաճը կերթայ. կամ նստելոյ տեղումը ունենում են ուռուցք գորտնուկի նման, կամ տեղատեղ կը ծղկրտուի և կսկսի գնալ ժաճի կամ ջուր:

154. Եթէ արական անդամի կաշին ուռչի և նրա վերև կամ ներքև քաշելը դժուարանայ, պէտք է երկար ժամանակ արական անդամը զնել զող արած 51 համարի զեղումը և սուռուցքի վրէն զնել 52 համարի զեղը և շուտ շուտ փոխել:

155. Եթէ ծածուկ անդամի վրէն, կամ ուրիշ տեղեր խոցեր դուրս տայ, պիտի գործածեն 50 համարաւ զեղը և խոցերի վրէն զնեն քրքրած քաթման, տաք կաթնումը կամ ջրումը թաթախած, կամ 53 համարաւ զեղը, որ և պիտի փոխեն օրը երկու կամ երեք անգամ:

156. Թէ պատահի որ խոցերի մէջ մտնող դուրս դայ, որոյ ճանաչելու նշանն էն է, որ երբ մատրդ կամաց վրէն զնես խսկոյն արիւն կերթայ, էն ժամանակը կամաց կամաց քա՛ մտնողի վրէն տաք ջրումը թաց արած ժանգաւ և քրքրած ցամաք քաթմանով ծածկէ՛ խոցը: Էս եղանակը կրկնելու է մինչև որ լուանայ:

157. Ինչ ժամանակ զգայ սկսուների ցաւի և կոտորելը

բերանումն էլ ունենայ խոցեր զուրս տուած, պէտք է տան խմելու դեղ համարաւ 57:

138. Գաղղիական ախտ ընկածը պիտի հրաժարուի թրութու, կծու, աղի, պարարտ, ծանր և դժուարամարս ուտելիքներից, ինչպէս նն՝ խոզի միս պինդ խաշած, աղի ձուկը, խաւիար և սրանց նմանները: Ատել կարէ լաւ էփած հաւ, վառեկ, ոչխարի և տաւարի միս և մանաւանդ կաթը: Բոլորովին պիտի հրաժարուի ամէն անսակ տաքացնող լամիչքից և միայն զարեջուր գործ ածել կարէ, կամ ձաւարի էփած ջուր: Շատ պիտի զգուշանայ մրսելուց և ցուրտ անձրևային և զանակին տանից չպիտի զուրս գայ, բնակած տունը և իր հազուատը շատ իստակ պահէ, շարաթը մէկ անգամ բաղանիս դնայ, կամ տանը տաք ջրով լեղանայ և իստակ շոր հաղնի, և զգուշանայ որ լեղանալուց յետոյ չը մրսի:

139. Եթէ նոր ծնած երեխի կպչի գաղղիական ախտը, էն ժամանակը ծիծ տուողը պիտի գործ ածէ 50, կամ 57 համարաւ դեղը և երեխին էլ շուտ շուտ լեղացնելու է տաք ջրով կամ 58 համարի դեղով: Եթէ սոյն ախտը ընկնող երեխէն ծծիցը կտրած ըլի, պէտք է նրան խմայնենն օրը չորս անգամ մէկ մէկ զգալ մեղրով քաղցրացրած դեղ համարաւ 50: Եթէ ըլի երեք տարեկան, կամ աւելի, էն ժամանակը պիտի տան էլի նոյն դեղը, չափը աւելցնելով նրա տարիքին համեմատ, կամ 57 համարաւ դեղը:

140. Գաղղիական ախտի դեղ անելը առանց բժշկի ծանր է քան զմիւս ամէն հիւանդութիւններինը, ահա՛ պատճառն էս է, որ կարճառօտ գրեցի սրավրայ և էպանն էլ նորա համար, որպէս զի էս ախտը ունեցողներից նրանք, որոնք բժշկից հեռու են կենում, կարողանան հիւանդութեան սկզբումը մինչևի բժշկի հանդիպիլն առ ժամանակ օրինաւոր եղանակաւ պահպանել իրանց զլուխը: Բայց ուրտեղ բժիշկ գտնուի, իսկոյն նրան հարկաւոր է զիմել, ապա թէ ոչ՝ փոքր ժամանակ անց կենալը, կամ անկանոն դեղ անելը մեծ վիաս կ'պատճառէ: Թէպէտե լաւացած էլ ըլին դրսի խոցերը թեթև դեղերով, այնու ամենայնիւ շատ վախ ունէ, որովհետև կարէ պատահիլ, որ լուս ընկնի քթումը կամ բզումը: Գաղղիական ախտը ունի էս յատ-

կուժիւնը որ եթէ սկզբից խնամք չտանին օրինաւոր դեղով բոլորովին լաւացնելու, կ'մնայ նրա թոյնը արեան մէջ և հինգ տասը տարուց յետոյ լուս կընկնի և կ'նորոգուի ակաբ և երբեմն որդւոց համար էլ էս ցաւը ժառանգական է դառնում: Շատ երիտասարդներ էս ցաւին տիրանում են և կանոնաւոր դեղով չ'լաւացած ամուսնանում են, որոնց որդիքն, համարեա՛ թէ բոլորն էլ, աշխարհ են բերում իրանց հետ տեսակ տեսակ ցաւերի սերմունք, կամ էս ցաւին տիրացածներն ամենեւին որդի չեն ծնում:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Վախճածին հոտումի (սուսունակ) վրայ:

141. Եթէ ջրվէթի ճանապարհից զնում է թարախ, ջը աւելիս էրուում է և երբ ձգուում է, ցաւում է, էս ցաւը կոչուում է վախճածին հոտում (սուսունակ):

142. Թէ ինչպէս է սկսուում էս հիւանդութիւնը, ահա նրա նշանները, Ա. Յանկարծ ջրվէթի ճանապարհից լուս է ընկնում դեղնադոյն թարախ և հնազնեակ աւելանում է: Բ. Շը աւելու ժամանակը էրուում է ու յետոյ կնքան ցաւում է, որ տղամարդին չէ տալիս հանդատութիւն առաւել զիշկները, ինչ ժամանակ ձգուում է մարմինը *), որովհետև ջրվէթի ճանապարհը քաշուում է, կուչ է դալիս, ուստի երբ ձգուում է, սաստիկ ցաւում է, Գ. Երբեմն էլ պատահում է, որ մարմնոյ կաշին ուռչում է ու անժամանակ, Դ. ժահրը կտրելուց, կամ անյարմար զնկեր դործ անելուց և չէ հետ գնում: Էս հիւանդութեանը տիրացած տղամարդին կ'պատահի շատ ցաւայնիկ և ուռչիլ մէկ, կամ երկու աճուկներին (երանք) խուլերին (մասնք **):

143. Եթէ ջրվէթի ճանապարհից ժահրն է զնում և էրուում

*) Էս հիւանդութեան ժամանակը համարնա թէ անդադար մարմինը ձգած է ըլլում և ցաւում է՝ սրա առաջին զեզն է ձեռած քափորը, որ պէտք է առնես մէկ միայլ և խոնջանումը կապես որ կնպէս մտնոյ մինչևի տան օր:

**) Լատիներէն էս ցաւին ասում են բուրօ, որ կաննեայ մէկ կամ երկու կողմը, կցտի մինչև որ կը բլչի, կամ յետ զսանայ:

է և կսկծում ջուր թափելու ժամանակը (այս սովորաբար պատահում է հիւանդութեան սկզբիցն) պէտք է տան դեղ համարաւ 46. և մինչոյն ժամանակը խմայնեն դեղ համարաւ 47. կամ 48: Հիւանդը պէտք է լուանայ մարմինը սաք կաթով. կամ սաք ջրով. կամ 49 համարի դեղով: Առաւել լաւ է տաք կաթումը կամ 49 համարի դեղումը դնել անդամը և այնպէս մէջը պահել բաւական ժամանակ և էպպէս օրը չորս անգամ կրկնել. որով կսկիօծը կքշանայ և կառնէ՞ծահըթի թիւնաւոր դրութիւնը: Երբ ժահրը գնում է հնչտ և առանց ցաւեցնելու, էն ժամանակը պէտք է տալ օրը վեց անգամ մէկ մէկ փնջան դեղ. համարաւ 50² Թէ պատահի, որ մարմնայ կաշին ուռչի և յետ չգնայ, էն ժամանակը պէտք է վարուել ինչպէս որ 134 յոգուածումը գրած է:

144. Թէ պատահի, որ ձուաներից մէկը կամ երկուսը ուռած ըլին *), սկզբիցը պէտք է վեր կապեն, ինչպէս որ գրած է 53 համարաւ խրատումը, և յետոյ տան դեղ 46 համարաւ, և էլ թայ անեն շորի կտորը 54 համարի դեղումը և շուտ շուտ դնեն ձուաների վրէն, կամ դնեն դեղ 52 համարաւ: Եթէ ձուաների ցաւը լինի սաստիկ և չպահասի վերեր յիշած դեղերով: էն ժամանակը պէտք է կանիցը արիւն թողնեն երկք փնջան, կամ որ կողմի ձուն ցաւում է, էն կողմի ձուի փափուկ տեղից սկսած մինչև ամուկը զարտեն 15 հատ աղբուկ. մէկ խօսքով ձուաներից սկսած մինչև ամուկը, ինչ տեղ որ ձուը դնելիս ցաւում ըլի, բացի ձուաները, թող բաւական արիւն գնայ, հիւանդի կողմուածքին մտիկ տալով: Աշխատիր, որ հիւանդի փորը կապ չլինի, պատճառը որ ևս առաւել ցաւը կ'շառանայ: Եթէ կապ ըլի փորը, անը թեթեւ լուծելու դեղ 4, կամ 5 և կամ 6, համարաւ:

145. Եթէ ուռչի և ախտայ ամուկների խուլերը (մտանք), պէտք է դնել նրա վրէն դեղ համարաւ 52, մինչև ի որ հասնի, (ուռուղքի հատած լինելը կանաչուում է նորա փափկելուց):

*) Ինչ ժամանակ մարդս ունենում է սուսունակ, երբեմն սրտահում է, ձուաները ուռչում են և անձամբեր ցուում վեր կկածի նման, բայց նա է վերէկ սմ և նշանէ, որ ջրով ձուանայարձին զոյացած ժահրը ներքև է դնացի և ուռել է ու կողտով ամուղյու • ևս յառաջանում է սովորաբար անխման դեղ անելուց, ժահրից տատով կորելուց, կամ մլտելուց, կամ տաքացնող խմիչրիցն որիչ սրանց նման պատճառներից: ևս հիւանդութեանց պատճառներու առաջի գնիւ է վեր կապելը: Աղբրից սուսունակը, որ լուս բնիկի պէտք է վեր կապել ձուաները և մինչև ի բորբոքին լատանայը չը հետ անել:

կամ երբ մատը վրէն գնելինս, տեսնես, որ թարախ է բռնել: Հաննելուց յետոյ պէտք է կայնես ու ուղեքի վրէն դեղհամարու 55, և վոխես օրը երեք անգամ: Ինչ ժամանակ բլշի լըպէտք է շտապիս բերանը կապելու: միայն քրքրած քաթանի պատ-
րուզ շինէ: քսէ՛ նրա վրէն ձիթենւոյ ձէթ և տնւր վէրքի բեր-
նումը և վրէն դիւր սպեղանի (մհլամ) 56 համարու:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Ճիճուի հիւանդութեան վրոյ.

146. Երբ մարդուս աղիքներումը գոյանում է երկրամայ-
րի * ճիճու, կամ թասափ նման և երկար, կամ որդունքի նման
մանր և կարծ, կոչուում է ճիճուի հիւանդութիւն:

147. Ճիճուն գոյանում է կամ երկրամայրի նման կոր ձե-
ւով, որոյ երկարութիւնը ըլում է մինչև մէկ թզաչափ. կամ
տափակ ձևով՝ թասափ նման, որ ըլում է մինչև վաթսուն գա-
ղաչափ և երբեմն էլ աւելի, որև իրան իրան վէր է թափ-
ւում. կամ էն մանր որդունքների նման, որոնք հոտած ձկան
կամ մսի մէջը գայանում են:

148. Թէպէտ ճիճուն ինքն ըստ ինքեան հիւանդութիւն
չէ, միայն պատճառ է դառնում ուրիշ նշանաւոր հիւանդու-
թիւնների, այսինքն՝ գլխի պտուտ գալու, սրտի նեղանալու,
ուշադնացութեան, խելագարութեան, փորացալի, լուծմունքի,
ջերմի, լուսնոտութեան (թուլացկոտութիւն) և այլն:

149. Ճիճու ունեցողի գլուխը շուտ շուտ պտուտ է գալի,
յանկարծ քնիցը վերէ թռչում և ակռէքները կրճատացնում, քը-
նում է աչքարաց, ականջները ձէն է տալիս և տժրժում, քի-
թը քոր է գալիս շուտ շուտ, թշերը կարմրում է և խիոյն էլ
յետ իր գոյնը գալիս, բերանը հոտում է, ակտրժակը երբեմն
շատ բաց է ըլում և երբեմն կապուում է, երեսահարքը ու-
նենում է դեղնագոյն և բերանիցը գնում է շողինք (փոլինք)
մանաւանդ գիշերները. քնած ժամանակը, ս. ա. ա. օտները սիրտը

* Երկրամայր աստուծ է և կարմիր և թզաչափ ուղանքը, որ թաց տեղե-
րումը գոյանում է, որ շանկարմն են շարում և ևսի պատմ:

քամէ գնում. երբեմն էլ նստած տեղիցը երբ վեր է կենում, աշ-
քերը մթնում է: Իս ամէն նշանները չեն հաստատում ճիճու
ունենալը. քանի որ բերանիցը կամ փորիցը չէ թափուում
ճիճու:

130. Ճիճուիցը ազատելու ղեղերն են. Ա. Ինչ ժամանակ
հաստատուի, թէ հիւանդը ունէ կրլոլ կամ մանր որդունքի
նման ճիճու, տո՛ւր ղեղ համարաւ 59, կամ 61: Բ. Եթէ ու-
նենայ տափակ և երկօր ճիճու, տո՛ւր ղեղ համարու 60,
կամ 61: Գ. Եթէ էս ղեղերը չօգնեն ճիճուն վէր ածել տա-
լու, չորս օրից յետոյ տո՛ւր լուծելու ղեղ համարաւ, 5,
կամ 6 և կամ 7: Դ. Օղտակարէ ճիճու վէր ածել տալու հա-
մար նոյնպէս և էս ղեղը. ա՛ռ մէկ զգալ մեղը, մէջը խառնէ
քսանուհինգ կաթիլ քարի, կամ բեկինի խղ և խմացրու մէկ
անգամ առ առօրը և մէկ անգամ երկիոյին: Հիւանդի բնու-
թեանը մտիկ տալով կարելի է էս իւղիցն մինչևի եռեսուն
կաթիլ խմացնել. նոյնպէս և տափակ ճիճուն վէր ածելու շատ
օղտակար է 62 համարումը զրած ղեղը: Ե. Նոյնպէս երբ դըր-
սեւանց փորին քսնն 63 համարումը զրած ղեղը, վէր ածել
կուտայ ամէն տեսակ ճիճու: Զ. Հում սոխ, սխտոր, բոխկ և
ապիտակ գաղար ուտելով * էլ թափուում է ճիճուն:

131. Երբ վերոյ յիշեալ ղեղերը զործ ածելով ճիճուն չը-
թափուի, կամ քիչ թափուի, էն ժամանակը չորս կամ հինգ
օր մէջ տալով լուծելու ղեղ տո՛ւր համարաւ 5, կամ 6, կամ 7:

132. Իս ղեղերը փոփոխարար պէտք է զործ ածել, մինչև
օր հիւանդը լաւանայ բոլորովին:

ԳՆՈՒԹ ԺԸ.

Կնիկարմառի ամային հոսմունքի * վրայ.

133. Կանայցի հիւանդութեանց պատճառ ըլումն. Ա.

* Մանր երկխայից ճիճուի հիւանդութիւնը բուայնելու համար բուակամ է,
որ առաւօր անօթի խմացնեն մէկ մէկ փնջան հում ղեղին գաղարի քամած
Ջուրը եւ կոյնեն պորտի վրէն գինով եփած օշինգը ընկաշախի և էլ որս էփած
Ջրումը շորը զրջեն եւ հաս քաշել տան:

* Տանուչորս տարուց ըսկսած, երբեմն առուել շատ կամ առուել ուշ կանայց

ամսային հոսման կարգը. Բ. երկու հոգու թիւնը. Գ. ծընդ-
կանութիւնը և. Գ. երեխի ծիծ օտար :

134. Կանանց ամսային հոսմանըի հիւանդութեան նը-
շանները սրանք են. Ա. Ինչ ժամանակ բոլորովին չէ դալիս
արիւն. Բ. Ելք է կած արիւնը կտրուում է. Գ. Ինչ ժամանակ
դժուարութեամբ է տեսնում լուսինը և սովորական կարգին
հակառակ. Գ. Ինչ ժամանակ չափազանց է արեան հոսումը :

135. Հասարակօրէն կանայք լուսնի տեսնելը սկսում են
տաննուշորս տարեկան հասակումը * բայց կան էնպէսներն
էլ որոնց մէջ մինչև տաննուվից տարին չէ լուս ընկնում :
Եթէ լուսին չտեսնելով չեն զգում ոչ մէ հիւանդութեան նշան,
և ընդհակառակն առաւել առողջ են, գէր և զուարթ, էն
ժամանակը դեղ անել չէ հարկաւոր :

136. Երբ աղջկան առաջին անգամ լուսին տեսնելու ժամա-
նակը հասնի տաննուշորս տարեկան կամ աւել պակաս հասակում
և նրա վերայ երեւին էս նշանները, զորօրինակ, ծանրութիւն բո-
լոր մարմնումը և ժամանակ առ ժամանակ տաքութիւն և
գլխացաւ, ծծերը լքցուում ըլին և եռ գալիս, ծծի պտուկը
քիչ աւելում ըլի և մեջքը ցաւում, ծննդական անգամը դրսի
կողմից եռ ըլի գալիս և երբեմն էլ քոր ըլի գալիս, ածուկները
ցաւում և դուրս կտարում ըլին և ծնկները ծալըլին գնում սաս-
տիկ յոգնածի նման, էս ժամանակը պէտք է գործ դնել թեթև
միջոցներ և դեղեր, միայն եթէ որ ստոյգ լուս է ընկնում
վտքը 'ի շատէ լուսին տեսնելու նշան :

137. Երբ ամսական հոսումը ինքն լրան ժամ ընկնի վե-
րևը գրուած շաններով խելոյն պէտք օգնել բնութեանը, գործ
ածելով եօթը կամ ութը օր էս դեղերը: Ա. Ա՛ռ բաւական
խտտի կաճոնք *, վրէն ածա՛ կէծ ջուր և էնպէս ամէն իրիկուն
բուղ տո՛ւր ծածուկ անդամումը, կանգնած կամ նստած. կամ
սրտ տեղ օտները տաք ջրումը դարսէ՛ մինչև ի ծնկները, կամ

ունին սովորութիւն բնականաբար ամէն լուսնի մէջ արիւն տեսնելու: Էս արիւ-
նը զանազան անտններ ունի, զորօրինակ, Ամսային հոսում, Դարտան, Կնիկար-
մատի կարգ, Լուսին, Ամսային կարգ և տեսաստութիւն:

* Փորձով հաստատած է, որ տաք երկիրներումը առաւել շատ են դաշտա-
նատրում և մրնչն անգամ պատահում է եօթը ստոյնիան սղջնկերանց էլ գաշ-
տանաբութիւ :

մինչև մէջքը նստացրնս տաք ջրումը և թնդ բանի որ դի-
մանում է, կամ մինչևի քրտինք գալը: Բ. Օրը երեք կամ չորս
անգամ խմացրու շայտ նման եփած երկցուկ, կամ առաւոյտ
ծաղիկ: Գ. Եթէ վորումը կապ ըլի, տուր լուծելու դեղ հա-
մարտ. 4, կամ 5, կամ 6, կամ 7: Գ. Պէտք է ուտել թեթե-
և հեշտ մարսելու, կերակուրներ: Ե թաց և ցուրտ օդումը
չ'պէտք է դուրս գայ, մոայն տանը թեթեւ աշխատի: Զ. Թէ որ
զգում է սաստիկ զլխացած էնդէս որ ճակատը դուրս է կտրում,
էն ժամանակը պէտք է կանխը արիւն թողնել: Կթէ զգում է
կուրծքի ծանրութիւն, կամ անհամբերելի փորի և մէջքի ցաւ,
ափոյը արիւն թող: Էս ասած դեղերով և միջոցներով եթէ
մինչև ինօթներորդ, կամ օթերորդ օրը չի գայ կնիկարմատի
կարգը, պէտք է դեղ անել յետ ձգել մինչև ի միւս լուսինը և
այսպէս ամէն անգամ լուսին տեսնելու ժամանակը գալիս պէտք
է վերայ յիշեալ դեղերը և հնարքները կրկնել, մինչև որ լուս ընկ-
նի կնիկ օրմատի կարգաւոր հասումը:

133. Աղջկերանց և կանանց մէջ կան էնդիտիներն, որոնք
լուսնի կարգը չեն տեսնում տեսակ տեսակ հիւանդութեանց
պատճառաւ, և որոնց վրայ լուս են ընկնում էսպիսինչաններ, օ-
րինակ՝ անախորժակութիւն, անզօրութիւն, մարմնոյ ցամաքու-
թիւն, երեսի դեղնիլ կամ գունի թռչիլ, և լաշքերի նեղքնի կու-
կերումը փուք ընկնիլ փորը ըլում է վքնած և ոտները ուռած:
Էս տեսակ հիւանդներից արիւն թողնելը, կամ նրանց այնպիսի
դեղեր տալը, սրոնք լուսնի կարգը տեսնելու համար զրուած՝
են, շատ մնասակար է: Էս կարգի հիւանդներին սկիզբը պէտք է
տալ ստամբսը մաքրող և զօրացնող թեթեւ դեղ համարաւ
6 կամ 7, և նրանից յետոյ համարաւ 61: Եթէ վախտ (լը-
դար) և անզօր կաղձուածքի տէր ըլի հիւանդը, առաւել
օգտակար է կորած կաթնի շիճուկը, (տես համար 42.) ո-
րոյ մէջ պէտք է խարեն (դողեն) կէճ արած երկաթը, (մէջը
ձգելով) և խմայնեն օրը երեք կամ չորս բաժակ, ամէն օրնոր
'ի նորոյ պատրաստելով:

139. Դեղ անելու ժամանակը հիւանդը պիտի թեթեւ գործ-
քերով տանը աշխատի, կամ երբ լաւ եղանակ ըլի, դուրս գնայ՝

* Կանոնք է տառում ձիւտ, կամ տառարի առաջերը մնացած խոտի փշանքը:

կամաց կամաց ոտով ժուռ գալու ուրախ և սրտաբաց տեղեր-
կերակուրը գործ ածէ ուտիքուան և թեթե բաներ, պահեցո-
ղութիւն ունենայ էնպէս: Ինչպէս գրած է 18 յօդուածումը :
Ինչ ժամանակ լաւութիւն զգայ և տեսնէ : որ զօրութիւնը յետ
տեղը եկաւ և իր ժամանակին ժաժէ ընկնում կնիկարմատի կարգը
տեսնելու նշանը, ինչպէս գրած է 154 յօդուածումը, պէտք է
գործ ածէ այս մասին 155 յօդուածումը գրած միջոցները :

160. Կնիկարմատի ամսական հոսումը եթէ գայ սովորական
կարգաւ, ազատ կ'պահէ կանանց շատ տեսակ հիւանդութիւննե-
րից, և սրա հասկառակն՝ երբ իր ժամանակին չըլուս ընկնի, կամ
ընդդէմ կարգի կարուի, էն ժամանակ ծանր հիւանդութեանց
պատճառ կը դառնայ, ինչպէս ներքեւը գրած է, ուստի պէտք
է օգնել երբ առաջի անգամ լուս ընկնի նշանները (կարգաւ-
155 յօդուածումը) տասներկու կամ տասնուչորս տարե-
կան հասակումը: Էս ժամանակներումը պէտք է աշխատիլ, որ
բնական կարգը հիշտութեամբ ներգործէ: Ա. Եթէ քրտնած-
րլի, չլիտի պառկի թաց շորով: Բ. Չը պիտի խմէ սառը և թը-
թու խմիչք: Գ. Չը պիտի շաա աշխատի: Դ. Չը պիտի թաց ա-
նէ ոտները, կամ բորիկ ման գայ: Ե. Պէտք է զգուշանայ յան-
կարծ վախենալուց :

161. Բացի վերեւը յիշուած զգուշութեան կանոնները,
որոնք եթէ չպահպանուին, մեծ փնաս կարեն պատճառել կա-
նանց բնական հոսումի կարգով գալուն, կան ուրիշ էլի փնա-
ստեար պատահմունքներ, օրինակ՝ շատ փնասակար է, թէ որ
նորահաս աղջկեքքը առաջին անգամ և յանկարծ կնիկարմա-
տի կարգը լուս ընկնելիս, իրանց անփորձ լինելուց կամ եր-
կիւղից, կամ ամսթից, փոխանակ ծնողաց յայտնելու թա-
քուն սառը ջրով լուանան ճաճուկ անդամը, սրանից արիւնը
կտրուում է և առողջութեանը փնասում շատ :

162. Կնիկ արմատի բնական հոսումը չը գալուց կամ կտրուե-
լուց լուս են ընկնում զանազան ցաւեր, օրինակ՝ ջրգողաւոր
ուռուցք ոտների և ձեռների նոյնպէս և գլխի, կուրծքի և
էրաթաթների վրէն, (թիակների) ևս փորի և ծնկների ցա-
ւիլ, արիւնախառը փոխել և այլն : Էս հիւանդութիւնը բժշկե-
լու համար պէտք է վարուիլ էսպէս : Ա. Տաքացրած շալի կամ

մահուցի կտորով շուտ շուտ արժրէ ուսած և ցաւած սեղե-
րը և տուր դեղ 65 համարաւ : Եթէ հիւանդը լինի անզօր, էն
ժամանակը տուր դեղ 64 համարաւ, որ շատ օգտակար է: Բ.
Եթէ արեւնախառն հազացնում է, ամէն երեկոյ հոքնայ տուր
20 կամ 21 համարի դեղով և երկու կամ երեք օրից յետոյ
լուծելու դեղ տուր համարաւ 5, կամ 6, կամ 7, և կամ 8: Գի-
շերը պառկելու ժամանակը ոտները մինևի ծնկները տաք ջը-
րումը դարսէ էնքան, որքան որ կարողանում է դիմանալ կամ
մինչևի քրանիլը : Եթէ էս դեղերը գործ ածելով հիւանդը
ոչինչ օգնութիւն չը զգայ, նստելու տեղի և ծննդական անդա-
մի մէջը տեղը տզրուկ կայցնելու է վեց կամ տասը հատ, հի-
ւանդի բնութեանը նայելով :

163. Ձէ հարկաւոր դեղեր գործ ածել կնիկարմատի ամ-
սական հոսումը բաց անելու համար, երբ արգելման պատ-
ճառն է երկու հոգուութիւնը, կամ երշ ամսական հոսումի
կտրուիլը ոչ մի վնաս չէ տալի առողջութեանը, էսպէս սովա-
բարար պատապում է երկար ժամանակիայ հիւանդութենից,
ծիճ տալուց և սաստիկ աշխատելուց :

164 Մէ անգամ կին մարդու լուսին շտեմները հաստատ
չէ նշանակում, թէ յղութենից է պատճառած, այլ թէ որ կնի-
կարմատը առողջ է և զօրեղ և ամէն անգամ իր ժամանակին
լուսինը տեսել է իր կարգով ու յանկարծ կտրուել է ամսա-
կան արեան հոսումը, և երկու կամ երեք անգամ իր ժամանակին
կրկնուել է արեան հոսումի խափանիլը, ահա էս միայն ըս-
տոյդ նշան է յղութեան :

165. Ինչ ժամանակ պտտահի, որ կոյս աղջկան կամ կին
մարդու լուսին տեսնելիս քիչ է զալիս արիւնը, էն էլ փորի և
մէջքի սաստիկ ցաւելով, պէտք է տալ դեղ 66 համարաւ : Իսկ
եթէ հիւանդը ունենայ ամուր կաղմուածք և ըլի շատարիւն,
ամսական հոսումի ժամանակն զալիս պէտք է կոնից արիւն
թողնել : Փորձով հաստատած է, որ էս միջոցը շատ է օգնում
և հիւանդներին ազատում է սաւտիկ և անհամբերելի ցաւե-
րից : Եթէ հիւանդը փորակապութիւն ունենայ, գոնեա՛ երկու
օրը մէկ անգամ լուծելու դեղ տուր և դիր պտտի փորի վրէ՛ն
տաք ջրով լիքը եզան փամփուշտ, (փուշի) և շուտ շուտ փո-

խէ՛, ոչ պէս զէ փորը տաքանայ : Էս հեշտ և թէթե դեղերով ոչ թէ միայն կը թեթեանան ցաւերը, այլ և կը կտրուին շաւի-
րտակը, խէթքերը, ցաւերը և սրտի նեղանալը որ շատերին է
պատահում իրանց անզգուշութենից :

166. Շատ անգամ էլ պատահում է, որ արեան հոսումը դա-
լիս է չտիազանց, շուտ շուտ ու անժամանակ, բայց սրանով
ուշինչ փոփոխութիւն չէ կրում, երեսի գոյնը անշն է մնում,
մարմինը չէ անզօրանում և չէ զգում ոչ մէկ հիւանդութեան
նշան : Էսպիսի դիպուածումն չէ հարկաւոր դեղ անելը, միայն
ամաական կարգը տեսնելու ժամանակը չպիտի շատ աշխատի,
այլ տանը հանգիստ և նստած կեանք վարէ :

167. Երբ արիւն գնալը էնքան չտիազանց լինի, որ հիան-
դին ստատիկ ու ժից դցէ, սրտի գոլալը ու մէջքը ցաւեցնէ, գը-
լու խը պտուտ դայ և սիրտը նեղանայ, կամ սիւտը գնայ, էն
ժամանակը պէտք է կենայ տանը հանգիստ և գործ ածէ դեղ
համարաւ 12 կամ 14, և ջրի տնջ խմէ շոյի նման պատրաս-
տած դեղ. համարաւ 67 : Ամաական արեան անկանոն հոսումը
յառաջանում է ակտակ տեսակ պատճառներէց : օրինակ՝ երբ
դու ակտոտներ մնասուել է դժուար ծնանելուց և այլն : Եթէ
ժերերը ատած դեղերով չըջանայ հիւանդութիւնը, էն ժամա-
նակ բժշկի պէտք է դիմել :

Գլխի ԺԹ.

Երկու հոգսութենի վրայ :

168. Էն փոփոխութիւնքը, որոնք կանանց յղութեան սկզբ-
նական նշաններեն համարուում, ամէնի համար չեն ճշմարտ-
ւում՝ պատահում է, որ սմանց վերայ կրեւում են քիչ և
համարեալ թէ աննշմարելի կերպով : Աերջինս պատահում է սու-
ւելապէս նրանց, որոնք ասպրում են ազատ և հանգիստ :

169. Երկու հոգսութիւնը մինչև ի շորս ամիսը դժուար է
ճանաչուում : միայն կարելի է գուշակել 164 յարուածումը
դրամ նշաններից : Չորս ամսից յետոյ երկու հոգիտին պատա-
հում է սրտի գնալը, երբեմն տաքութիւն է տալիս քիչ ժամա-
նակ, երբեմն էնպէս է թոտում, թէ բոլոր մարմինը կրակի պէս

էրուում է: Ժամանակ առ ժամանակ զլիսացաւ է զայլիս, աչ քերթ փոս է ընկնում, աչ քի ներքևի կոպկերը կոպտանում են, առանց պատճառի ակռէքը ցաւում է: վրէն մեղամաղձոտութիւն, (սեղայ) նեղութիւն, մտածմունք, բարկութիւն, զրգւանք, շնչարգելութիւն է զայլիս և բէբէն (բիծ) երեսի վրայ: Թոփրական կերակրից զզուում է, և ուզում է անսովոր բաներ: *) կերածը սրտին քայխում է, օրցկացնում է և էլ ունենում է փորակապութիւն:

170. Առաւել Հաստատ կըլինի երկու-հոգսութիւնը, երբ վերոյ յիշեալ նշանների հետ կտրուի և ամսական հոսումը, և վրայ չորս ամիսը սկսի կամաց կամաց մեծանալ փորի ներքևի կոպեր, և վերջը չորսուկէս ամսից զգայ երեխի խաղալը:

171. Բոլոր վերևի յիշած երկու-հոգսութենի նշանները համարեա՞ բնաւ երկիւղալի հետեանքներ չեն ունենում և չորսուկէս ամսից յետոյ սկսում են հեղհեղտէ քշանալ և մանկան մեծանալու հետ անց են կենում:

172. Ինչ ժամանակ երկու-հոգսութեան նշանները կ'լինին սաստիկ, պէտք է վարուել էսպէս. Ա. եթէ փորումը լինի կապ, պէտք է տալ գրեխ (հոքնայ) 20 համարի զեղով. Բ. եթէ բերանիցը փսխելիս ըլի, պէտք է տալ խմելու քիչ քիչ երկցուկի ծողկիցը պատրաստած չայ, և ամէն զիշեր գրեխ տալ 20 համարի զեղով. կերակուրը պէտք է ըլի շատ թեթեւ և հեշտ մարսելու, այսինքն՝ սաստիկ եփած ձաւարի, կամ բրնձի չորվայ. կամ սև դամոն, կամ խորոված խնձոր. խմելու գործածեն ազոխի (ժուռ) կամ նռան, կամ լիմոնի քամուքօր, շաքարով կամ լաւ մեղրով և ջրով պատրաստած. Գ. պինդ և զօրեղ կազմուածքի տէր կանայք եթէ զգում են զլիսի և կուրծքի ցաւ, կամ փորի ոլոր տալ և ունենում են խէթք, երեսահարքը և աչքերը կարմրացած, պէտք է կոնիցը քիչ արիւն թողնեն. Դ. եթէ ունենայ զըզուանք և սրտի քայխիլը էն ժամանակը տո՛ւր զեղ համարաւս 68, կամ 69, կամ արանց տեղ՝ կէս կէս զգալ բարակ ծեծած գործիլ ջրով. Ե. ինչ ժամանակ պատահի երկու-հոգիսին սրտի նեղանալ և թուլանալ,

* Ելի է օրինակ, որ կերել են կիր, հող, աղ, սասպն, ձխափոտ, կուպր, գործըլի, ճանճ ևւ ուրիշ տեսակ զրգուելի բոճեր:

հոտ քաշել ասոր թէժ քացախ կամ ծեծած կծու լիճ. կամ էրած հաւի փետուրը կամ վառած թուխտը քթի առաջը բռնեն: Եթէ գտանես ողի մեղուտերեւոյ կէս ժամը մի անգամ տասն կաթիլ ասոր շաքարով:

173. Պէտք է զգուշանալ էն ամէն պատճառներից, որոնց Ան յառաջ կարէ գալ վիժել (փոր աւերել, կամ անժամանակ ծընանիլ) որ շատ երկիւղալի է քան զսովորական ծնունդը, մանաւանդ միանգամ փորը աւերողին երկրորդ և երրորդ անգամ յղանալիս առաւել հեշտ կարէ կրկին պատահիլ:

174. Վիժելու (փոր աւերելու) պատճառ կարեն դառնալ. Ա. մարմնոյ սաստիկ ցնցելը, ծանր բան վեր քաշելը, կամ ծըղուած բարձր տեղից բան վեր բերելը (թէդո՞ւղ թեթեւ ըլի) սաստիկ ծուայը և հազայը, տեղից յանկարծ վեր թռչելը, կամ վեր ընկնիլը և սրանց նմանները. Բ. Հոգւոյ սաստիկ կիրքերը, պրինքն նեղութիւնը, բարկանալը, երկիւղը և չափազանց ուրախութիւնը. Գ. Փորին. կամ մէջքին և խփելը, գոտիկով, կամ ուրիշ բանով պինդ կապելը, առանց զգուշութեան և առանց հասկացողութեան փորը վեր քաշել տալը. (էս սովորութիւնը շատ վնասակար է): Գ. Սաստիկ փորից կամ բերանից բանացնելը, կամ տաքացնող դեղեր գործածելը, կամ տաքացնող բաներով պատրաստած կերակուր ուտելը, զորօրինակ՝ պղպեղ տաք կոծ, կինաման, քրքում և թէժ տաքացուղ խմիչք:

175. Երբ որ փոր աւերելու նշանները լուս ընկնին, այսինքն՝ երբ փորը և մէջքը դուրս կտորուի, փորը ծանրանայ և քաշ բնկի, նմանապէս էլ ծըծերը, և արիւն գիւց ծննդական անդամից, էն ժամանակը օգտակար է կոնիցը քիչ արիւն թողնել և զնել պտի փորի վրէն չորս տակ ծալած և քացախով դըրջած քաթան և փոխել շուտ շուտ, որ չցամաքի:

176. Եթէ էս բոլոր հնարքները գործ զնելուց յետոյ չեքրեայ լաւ նշան ու փորի աւերելը ոչ միայն չկանգնի, այլ՝ ընդ հասկառակն լուս ընկնի ծննդականի սովորական փորի ցաւ, ինչպէս գրած է հետեւեալ գլխումը, էն ժամանակը պէտք է վաղուէն էնպէս, ինչպէս գրած է ծննդականի համար մի և նոյն գլխումը և պահպանեն հիւանդի ուժը, զօրացնող կերակուր տալն էլ և երեսի կտորուելուց յետոյ եթէ տեսնեն թէ սաս-

սիկ ալիւն է հոսում զաւակասանիցը, պէտք է զեզ աննն և ինամք տանին էնպէս, ինչպէս գրած է կնիկարմատի ցաւերի կարգումը արեան հոսմունքի վրայ :

177. Եթէ փոր աւերելուց յետոյ երկար ժամանակ չգուրս գայ երեխի ընկերը *, պէտք է վարուին էնպէս, ինչպէս գրած է հետեւեալ գլխումը :

ԳՂՈՒԽ Ի.

Ծննդականութեան վրայ.

178. Բնական կարգով է ծննդականութիւնը, թէ որ երեխի աշխարհ գալու նշաններն յայտնուում են լրիւ ինն ամիսից յետոյ, յղացած օրիցը հաշուելով. էս նշաններն են սրանք: Փորը սկսում է կամաց կամաց քաշ ընկնիլ, փորի նեքեի կողմը բացուում է, շուտ շուտ ջրվէթ անել և փորից գուրս գնալ է ուզում: Բայց խտի է տալի. ծնանելուց առաջ լուս է ընկնում ցաւ տալ: որ սկսում է մեջքիցը և փռուում է մինչև ի փոխ տաւջի կողմը. իրիկնապահերին և գիշերը ցաւը բատ մեծի մասին թեթեւնում է. ոմանց ծննդական անդամից հոսում է փոքր ինչ ջուր, միայն ոչ էնքան շատ, ինչքան ծնանելու միջոցին :

179. Երկու հոգիսը թէ զգում է, որ ծնանելու նշանները մտտացել են, չպիտի հեռանայ իրան տանից, որ չլինի թէ անվայելուչ տեղ բռնէ ցաւը. պիտի գիտենայ, որ երբեմն էս նշանները երկու շարաթ առաջ յայտնուում են : Արբ զգայ ծընընդակա՞ր յիշեալ նշանները, պիտի հրաժարի աշխատութեանից և բան շինելից և համբերութեամբ սպասէ ազատուելուն: Զպէտք է ծուայ, կամ անժամանակ զօր տալով իրան՝ ուժից գցէ, այլ պահպանէ իրեն ուժը ազատուելու ժամանակի համար: Եթ յիշեալ նշանները լուս ընկնին ու էլի անց կենան, երկու հոգիսը կարող է կրկին թեթեւ բանելով պարապիլ :

180. Ինչպէս վերևը յիշեցինք բնական կարգաւ ծննդականութիւնը գալիս է լրիւ ինն ամիս յղև կենալուց յետոյ. ազատուելուց յառաջ բռնում է ծննդականութեան ցաւը և

*) Երեխի բժշկները խոչնդոց են տալիս, թէ մեծի երեխի դուրը ելեալը էք պետքէ ուժ տալ:

րեխէն էլ ճնուում է : Մնանելու ցաւը սկսում է մէջքիցը
և փռում է մինչև փորի ներքևի կողմը և ջողում է խափս
առողջ ցաւից նրանով, որ փորի ցաւը ժամ առ ժամ սաստ-
կանում է, փորը պնդանում և ցաւողի վրայ զգուանք գալիս,
կարծում է թէ լուծում է, ուստի և ինքն էլ ուժ է տալի նը-
քալով : Էս միջոցին ծննդականի երեսահարքը կարմրում է
և կապտանում :

181. Էսպէս ցաւը բռնելիս ծննդականն էլ իր կողմանէ
երեխի աշխարհ գալուն պիտի ծգնէ : Ինչ ժամանակ գալիս լինի
ցաւը և հեան էլ ինքը զգում ըլի ցանկութիւն դուրս գնա-
լու, էն ժամանակը ձեռները մէկ բանի վրայ հաստատած, չո-
քած, և ծնկները միմեանցից բաժանած, պէտք է առանց շունչ
քաշելու ուժ տայ նքայնելով :

182. Երբ ցաւը անց կենայ, չ'պէտք է ծննդականը ուժ տայ,
այլ սպասէ մինչև կրկին անգամ ցաւի գալը : Եթէ էս դրութե-
նումը ծննդականի վերայ թմրութիւն գայ, չ'պիտի քունը
փախցնեն : Չէ պէտք ականջ դնել նրանցը, որոնք ծննդականին
խորհուրդ են տալի ուժով հազալու կամ բոլոր մարմինը թափ
տալու և ուրիշ սրանց նման եղանակներով ուժ տալու. այս
կերպերը բաց 'ի վնասն, ո՛չ մի օգուտ չեն անել :

183. Մննդականը իր կողմանէ հեշտութեամբ ազատուե-
լուն կարէ ոգնել սկզբումը ցաւը բռնելիս, երբեմն օտի վրէն
ման գալով, երբեմն նստելով, և երբեմն յետ պառկելով : Եթէ
ցաւը գալիս ըլի շուտ շուտ և սաստիկ, պիտի պառկեցնեն կո-
ղինքումը :

184. Եթէ որ ծննդականի փորի ցաւը թեթև է բռնում,
'ի հարկէ սրան ոչինչ չէ հարկաւոր : Բայց երբ երկար միջոց
տալով է գալիս, էսպիսի դիպուածումը չ'պէտք է ծննդա-
կանը ուժ տայ իրան, այլ օգտակար է գրեխ տալը. (տես հա-
մար 20). կամ կռնիցը արլուն թողնելը :

185. Ետտ անգամ էլ պատահում է, որ փորի ցաւ է գալիս
զոգոոյով, որ և ոչ միայն չէ ունենում 170 յօդուածումը
յիշուած նշանները. այլ և չէ սկսում մէջքիցը : Այսպէս պա-
տահելիս չ'պէտք է համարիլ, թէ ծննդականութեան ցաւ է :
Էս փորացաւից ազատելու համար երկուհոգիսին պէտք է գրեխ

տալ (տե՛ս համար 20) կամ քիչ քիչ խմացնել երիցուկից եփած չար

186. Ծննդականի ցուելու ժամանակը դայեակը (տասը) չ'պէտք է շփոթուի, այլ պիտի գուրգուրէ, սիրտը պնդացնէ և յոյս տալով, խրատելով ու զթալով հոգս տանի: Ծնընդականի չորս կողմը պէտք է պահել մտքուր և ինչ ժամանակ երեխի գլուխը երևայ, չ'պէտք է մանկաբարձը ուժով դուրս քաշէ, այլ միայն բռնէ զգուշութեամբ մինչևի բնական կարգով ազատուի երեխէն:

187. Երեխէն ծնանելուց յետոյ տատի պարտականութիւնն է պառկացնել նրան էնպէս, որ պորտի աղիքը չլինի ձգած, կամաց քամէ արիւնը, յետոյ երեխի պորտից չորս մասնաչափ բարձր կապէ (ինչպէս սովորութիւն է) և կապած իցը մէկ մասնաչափ վերևը մկրատով կարէ:

188. Այնուհետև տատի պարտքն է ուշադրութիւն անել, թէ արդե՞օք երեխայն ունի մարմնոյ պահասութիւն, կամ թէ փորի և ջրվեժի ճանրէն բաց է՞ թէ չէ. և այլն: Եթէ հարկաւորի, շուտով պէտքէ բժշկի կանչել:

189. Եթէ տեսնեն, որ երեխէն աշխարհ գալիս նուազ է. երեսի գոյնը թռած, կամ կապտացած, կամ ուռած, և կենդանութեան նշանները կասկածաւոր, էն ժամանակը, եթէ երեխի ընկերը չլինի էլ դուրս եկած, չ'պէտք է սպասել, այլ շուտով պորտը կապել և օդնութիւն անել երեխին էսպէս Ա. Մասի վրէն փաթաթեն բարակ քաթան ջրումը թաց արած. և էնպով սրբեն բերնի շողիները: Բ. Լեզուի վրէն ամեն կէս պողուց հասարակ աղ: Գ. Արսիկն երեխի վրէն սառը ջուր: Դ. Քթի առջևը բռնեն քացախ, կամ ծեծած սոխ, կամ կծու իճ, կամ սխտոր: Ե. Ետեւիցը տուն տան բարակ սրած ճրաքուի կտոր:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ծննդականութիւնից յետոյ պատահած հիւանդութեան վրայ:

190. Հետութեամբ ազատելուց յետոյ, առաջին օրերումը, քանի որ ծննդականի վրայ երևում են ջերմի նշաններ,

* Թէ որ երեխէն ուղիղ չէ գալիս, կամ երբ ուրիշ սրա նման զժուար դիպում պատահի, չը պէտք է տատը վտտանայ իրան տնձին, այլ պէտք է կանչել տայ բժիշկի, եթէ չը լինի բժիշկի, ուրիշ առաւել փորձած տատ:

այսինքն՝ տաքութիւն և հեար զլիացաւ և այլն, չպէտք է ուտայնել նրան ոչ մի կերակուր, բայց միայն լաւ եփած բրնձի կամ ձաւարի շորվայ, քիչ կարագով կամ լաւ ձիթով պատրաստած, կամ չոր դամենի սպաս, խորոված խնձոր, կամ սերկեկլ. խմելու համար գործ ածեն նռան, կամ լիմոնի քամաքս շաքարով քալցրացրած և ջրախառն: Մննդականի չորս կողմը պէտք է լինի խտակ, որպէս զի անմաքուրութենից չբարձրացնուի նրան մէկ ուրիշ հիւանդութիւն. պատկած տեղը պէտք է լինի չափաւոր տաք և օդը շուտ շուտ նորոգուի, չբարձր լինի նեղուածք և մութ:

101. Եթէ երեխի ծնանելուց յետոյ երեխի ընկերը մնայ զաւակատանը, պէտք է պորտը կապել ինչպէս որ ասած է 187 յօդուածումը և կորիւ մկրատով. չպիտի ուժով դուրս բաշել և ոչ թէ գործ դնել զեղորայք. առաւել լաւ է սպասել բնականաբար նրա դուրս գալուն, միմիայն բաւական է բնութեանը օգնելու համար ձեռքով փորը կամաց կամաց մերսել և կամ լէն շորով փորը թեթեւ կապել: Կապէս փորի հուփ տալով կրտսնառի փորի ցաւ և երեխի ընկերը ինքն իրան կբաժանի և դուրս կգայ: Եթէ կէս ժամից իրան իրան դուրս չգայ, էն ժամանակը հարկաւոր է զիմել բժշկի օգնութեանը:

192. Գեղերումը տատերի խելքը չհամակում, թէ ի՞նչ մնաս կարէ բառաջ գալ, աղիտութեամբ աշխատում են, որ ծնունդականը շուտ ազատուի զաւակատանը մնացած երեխի ընկերիցը. և խորհուրդ են տալիս նրան, որ ուժ տալով հազայ, փռնկտայ, նքայնէ, փորի վրէն ձեռով հուփ տայ և երբեմն էլ ծննդականին թափ են տալիս կամ անպզուշութեամբ քաշում են պորտի աղիքը: Կս տեսակ վարուելուց յառաջ են գալի ներքեւը յիշուած երկիւղալի հետեանքները:

195. Կս տեսակ վարուելուց յառաջանում է բորբոքային ջերմը, որ և զանազանուում է կաթնի դողից հետեւալ նշաններով: Կաթնի դողի նշանները ըլում են թեթեւ, բայց արեան բորբոքային դողներ՝ խիստ անտանկի. օրինակ՝ տաքութիւնը ունենում է շարունակ, (անկտոր) մաջի քցելը՝ շուտ և պինդ, փորը ձգուած է, և էնպէս սաստիկ ցաւեցնում, որ ձեռը զիպցնելու անգամ չէ զիմանում. երբեմն էլ փորի վրէն լուս

են ընկնում կտրմիր գծեր, ձգուած մինչև ի պորտը : Եթէ էս գծերը սկսին սեանալ, նշան է որ ծննդականի դրութիւնը վըսանդաւոր է : նրա բոլոր մարմինը էս դրութենումը, լինում է թուլացած, կերպարանքը փոխուած : դէն է տալի, փոխում է և քրտնում սաստիկ : զաւակատանիցը գնում է հոտած և այրող ջուր, շուտ շուտ խափ տալով դուրս է տանում ջրէթի և լուծելու վրէն :

194. Էս երկիւղալի հիւանդութիւնը բժկելու եղանակն այսպէս է : Ա. Կռնիցը չափաւոր արիւն թող : Բ. Օրը երկու կամ երեք տնգամ գրեխ տնր (տնս համար 20:) Գ. Զաւակատունը լուս, շաղարունով (փոքր հոքնայ) չափաւոր տաք ջուրներս ածելով : Գ. փորի վրէն դիր 70 համարումը նշանակած դեղը, տաք տաք, և շուտ շուտ խմայրու 17, 18, և 19 համարումը յիշած դեղերից մէկնումէկը :

195. Բացի վերևը յիշած բարբոքային ջերմը՝ երկսի ընկելը ուժով դուրս քաշելուց երբեմն էլ պատճառում է սաստիկ արեան հոսում զաւակատանից : Եթէ էս տեսակ արեան հոսումը սաստկանայ մինչև էն աստիճան, որ բոլոր մարմնոյ զուրութիւնը թուլանայ և հետն էլ գլուխը պտուտ դայ և սիրտը գնայ : էն ժամանակը պէտք է շորի կտոր թըջնն քացախով խտոնած ջրումը, թոյլ քամեն և դնեն փորի, միջքի և բզիրի վրէն և շուտ շուտ փոխեն, որ չյամաքի : էս տեսակ վարուին, մինչև ի արեան հոսումը կտրուի :

196. Նոյնչափ փնասակար է, եթէ յանկարծ Լտրուի էն արիւնը՝ որ ազատուելուց յետոյ ծննդականի արգանդից հոսում է քանի մի օր, սրանից էլ կյառաջանան զանազան վըսանդաւոր հիւանդութիւնք, այսինքն ջերմ, կուրծքի խէթք և այլն : էս արեան կտրուելուն պատճառ կարեն գտնալ յանկարծակի վախենալը, չարանալը, տխրիլը, երկիւղը և սրանց նման հոգւոյ սաստիկ կրքերը, նոյնպէս և փորի ամուր կապիլը դոկտով կամ ուրիշ բանով, ևս և մրսիլը, որ առհասարակ պատահումէ դիւզական կանանց, որոնք ազատուելուց յետոյ դեռ ևս կատարեալ չամրացած, ծանր աշխատութ անց խառնուում են և երբեմն ման են գալի սառը և խոնաւ դեանի վրէն :

167. Եթէ հարկը զահանջէ նոր մէկանց զարթեցնել ծնըն-

դական արևան հասումը, պէտք է վարուիլ էս տեսակ : Ա. Պատի փորի վրէն կապեն կակղացնող զեղ համարաւ 34 : Բ. Օրը երկու անգամ գրելս տան, (անս համար 20) : Գ. Գրելս տալով կթէ չուծէ բաւականին, լուծելու զեղ տան համարաւ 5, կամ 6, կամ 7, կամ 8, և խմացնեն երկցուկից և բրբուռից էփած չայ, և հիւանդի բնակարանը պահեն չափաւոր տաք :

198 Հարկաւոր է յիշել որ կաթնի կամ, դալի ջերմը լուս է ընկնում ծննդականութենից յետոյ երրորդ, կամ չորրորդ, կամ հինգերորդ, կամ վեցերորդ և կամ եօթներորդ օրումը : Կս ջերմը էնքան ծանր չէ լուս գեղացի կանանց համար, որոնք ամուր կազմուածքի տէր են. բայց ինչ կուզէ ըլի, ծննդականը քանի որ էս ջերմիցն ունի, չպէտք է գործ ածէ տաքացնող, դժուարամարս և չափազանց սննդարար ուտելիք և խմիչք* տաքութիւնը աւելանալու ժամանակը խմէ երկու ժամը մէկ անգամ երկու գգալ. 17 համարաւ զեղը, եթէ փորումը կապ լինի, գրելս տուր 20 համարի զեղով կամ ձիթում թաթախած սապոնով

Գ.ՈՒԻՍ ԻԲ.

Երեխէն աղստուելուց յետոյ ծննդականներին պատահած ուռուցքների վրայ.

199. Թէ որ ծննդականը ինքն է ծիծ տալի մանկանը և ազատուելից յետոյ խսկոյն ծանր աշխատութեանց եղև չէ ընկնում, և իրան անձը պահպանում է մրսելուց, շատ քիչ է պատահում, որ նրա ածուկից մօտիկ կամ ծծի վրայ լուս ընկնին ուռուցք, խուլեր. ընդ հակառակը՝ երբ տկարութեան կամ այլ պատճառաւ մայրը ծիծ չէ տալի իրան որդւոյն, կաթի արգելուելուց երբեմն լուս է ընկնում ծծի ուռուցքը :

200. Ածուկի ուռուցքը զանազանուում է ջրգողի ուռուցքից էս նշաններով : Ա. եթէ մատոյ վրէն գնես և հուպ տաս, մատիդ տեղը չի մնալ փոսացած : Բ. Ջրգողի ուռուցքը լուս է ընկնում երկու ոտների վրէն և գնում է վերև, բայց

* Կաթնի ջերմը Լատիններէն ստում են (Ճերրիս փուերի երկայի կամ, Քերբիս լաբիլիֆոյս)

այս ուռուցքը լուս է ընկնում մէկ ամուկի վերայ և ցածր :
Գ. Զրգութեան ուռուցքները ծննդականի ազատուելուց յա-
ռաջ լուս են ընկնում : Իսկ այս ուռուցքը պատահում է ա-
զատուելուց յետոյ :

201. Աճուկի ուռուցքը բժշկելու համար նախևառաջ
տուր լուծողական համարաւ 4, կամ 5, կամ 6, կամ 7, կամ
հոգնայ տուր 20 համարի դեղով և յետոյ տուր 71 համարաւ
դեղը: Արանց հետ էլ պէտք է տաք ջրումը հարեն սիպտակ սա-
պոնը՝ նրանով զրջնն փափուկ շալը և ուռուցքի վերայ դնեն,
կամ կպցնեն սպեղանի (մհլամ) համարաւ 56: Եթէ էս դեղերը
գործ ածելով ուռուցքը չնստի, և մէջը թարախ ժողովուի,
պէտք է դնել կակղացնող դեղ համարաւ 34, և վարուիլ էնպէս,
ինչպէս գրած է Գ. մասումը: Գ. զլխումը :

202. Երեխէն թէ որ բուսական կաթը չէ ծծում, ծը-
ծերումը մնացած կաթը թանձրանալով դառնում է խուլեր,
որոնք կամ բնաւ չեն ցաւում, կամ ցաւում են մտանաւոր : Էս
խուլերը ցրուելու համար օգտակար է դնել վրէն քերած հում
շողկամ, կամ ստեպղին (գազար), կամ սպեղանի համարաւ 72:

203. Եթէ ծծերի վրէն լուս ընկնի կարմիր ուռուցք բոր-
բորումի նշաններով, սկզբիցը պէտք է դնել նրա վերայ պատիկ
պարկով 22 համարաւ դեղը: Երբ տեսնես, որ ուռուցքը թա-
րախ է բռնում, պէտք է վարուիլ էնպէս, ինչպէս գրած է խո-
ցի լուացնելու վրայ, Գ. մասնումը, Գ. զլխումը :

204. Երբեմն էլ պատահում է, որ ծծի պակները ճաք-
ճաքում են և անտանելի ցաւացնում. էս շարշարանքից ազա-
տելու համար նախ պէտք է ծծելով կաթը դարտակել, որպէս
զի չլմերուի : Իսկոյն ցաւը լուս ընկնելիս պէտք է քսել ճա-
քած անդերի վերայ նոր քաշած հում կաթի սեր, կամ դնել
վրէն քաթանի վրէն քսած սպեղանի, համարաւ 72 :

205. Ինչ ժամանակ մօր կաթը քիչ ըլի, պէտք է բննել
նրա պատճառը : Կաթի քչութիւնը երբեմն պատճառում
է ծծմօր ստամոքսի և աղիքների անմաքրութիւնից, ինչ-
պէս գրած է 15 յօդուածումը . ախորժակը կապուում է
և չուտելուց աննդարար հիւթը պակասելով պակասում է և
կաթը : Էս դիպուածը պատահելիս օգտակար է տալ ստամոքսի

և աղիքների խտանելու դեղ: Ինչպէս գրած է 15 յօդաւորումը: և յետոյ գործածել սննդաբար կերակուրներ:

296. Կաթի պակասութիւնը երբեմն էլ յառաջանում է տեսակ տեսակ հիւանդութիւններից, այսինքն՝ փորաբացութեանից և չափազանց արեան հոսելուց: Այն պատճառներից լինի, պէտք է աշխատիլ օդնել այն դեղերով, որոնք գրած են լուծելու և արեան հոսումի վերայ (երկրորդ մասումը, ԺԱ. և ԺԲ. գլխումը): Օրինաւոր դեղ անելով կաթը ինքն իրան կաւելանայ:

207. Կաթի կարուելուն կամ յետ խփելու պատճառով է դառել է ծծմօր սրտի շուռ գալը, բարկանալը, վախը, ախրութիւնը և չափազանց ուրախութիւնը: Պէտք է ծծմօր սիրտը հանդարտացնելու համար աշխատիլ նրան շիոթից նող պատճառների դիմացը յարմարաւոր եղանակներ գործ դնելով: Նոյնպէս մօր պտկի վրէն դնելու է տաք կաթումը զըլջած փափուկ շալի կտոր, օգտակար է նա և ուրիշի ուժով ծըծել տալը: Կաթը աւելացնելու և յետ խփածը նորէն շարժելու համար օգտակար է 73 համարաւ դեղը, կամ ութ փնջան կաթնումը մէկ զգալ անխոն կամ սամիթի սերմը էփելուց յետոյ քամել և խմացնելը, մէկ մէկ փոքր բաժակ, օրը երկու անգամ:

208. Եթէ կաթի սաստիկ շատութենիցը ինքն իրան պլտկների բ դուրս վազէ կաթկաթելով և սրանով ծծմօրը նեղութիւն պատճառէ, պէտք է կաթը չափաւորելու կամ պլտկների թուլութիւնը զօրացնելու համար վարուիլ էս տեսակ: Ա. Շաբաթը մէկ անգամ տուր լուծելու դեղ համարաւ 5, կամ 6, կամ 7: Բ. Շաբաթը երկու կամ երեք անգամ քընելու ժամանակը ոտները տաք ջրումը դարսել տուր: Գ. Օրը երեք անգամ ծծերը լուանալ տուր սաւը ջրով: Գ. Մանր սօսպրակներումը լցրու չորացրած վարդի թել թերի, ցրցամ տըլած կալմիր դինով և դիւր ծծերի վրայ: Ե. Գարրնի յեսանաքարի (չարխ) տակի տիլը քսէ շորի վրայ մատի հաստութեամբ, նրանով փաթաթէ ծծերը՝ երբ երկսին ծիծ ըլի տալիս, լաւ լուանալ տուր և յետոյ կրկին անգամ կս դիւր յիշեալ դեղը:

209. Վլնասակար, այսինքն՝ գէր և տաքացնող կերակուր-
ներից և խմելիքից զգուշանալու է :

ԳԼՈՒԽ ԻԳ.

Մանր երեխայից հիւանդութիւնների վրայ :

210. Մանր երեխայից հիւանդութիւնները ըստ մեծի մա-
սին յառաջ են գալի. Ա. ծննդեան առաջին օրերումը երե-
խի աղիքներումը գոյացած թանձր և կուպրի նման սևա-
գոյն կղկղանքից . Բ. կերածը ստամոքսումը թթուելուց . Գ.
ակուէքները դժուար դուրս գալուց . Գ. մաղձից և ծիճուից :
Էս պատճառներիցը պատահում է երեխայից ջրղերու խաղց-
նել, լուսնոտութիւն (թուլացկոտութիւն) և ուրիշ սրանց
նման ցաւալի հետեմուէքներ, որոնք անժամանակ սպանում են
երեխայից :

211. Թէպէտ երեխէքը չունին կարողութիւն իրանց ցաւը
հասկացնելու, միայն նրանց հիւանդութիւնումը լուս են ընկ-
նում այնպիսի նշաններ, որ կարող ենք հասկանալ թէ ի՞նչ
ցաւով հիւանդացած են նրանք. որովհետև երեխայից հիւան-
դութեան ժամանակը կամ բերանիցը փսխել է տալի կարած
կաթնի նման, կամ փորումը կապ է ըլում, կամ լուծում է ոլոր
տալով և կանանչագոյն, կամ շափտիցն աւելի ջուր են խմում,
կամ փորը ունենում են փքած և պինդ և երբեմն քնած տե-
ղիցը վեր են թռչում ու ծիճաղում են, սաստիկ ծուում են,
ոտները փորին հուփ են տալի, քիչ են քնում, շփոթուում
են, չարչրուում են, հեծկլտում (զկատացնում), հազացնում,
մատները բերանը տանում, և քիթը տրորում : Բոլոր էս նը-
շանները երեխի տեղակ համարեա՛ թէ խօսում են և յայտնում
հիւանդութեան պատճառները, որոնց վրայ ներքևը գրած են
պարզաբար :

ԳԼՈՒԽ ԻԳ.

կպչուն սև կղկղանքի * (ի դուրս գնացածը) վրայ :

212. Մաննելուց յետոյ առաջի օրերումը սովորաբար երե-
խանց փորիցը քշում է կպչուն և մաղասախառք սև նիւթ, որ

* Լափներէն ասում են միքոնիում :

եթէ շուտով չիստակուի լաւ կաթ ծծելով, կամ գործ անելով յարմար դեղեր, սրանից կ'պատճառի շատ տեսակ հիւանդութիւն :

213. Երեխի փորից բանացրած սև կկղանքը Էնքան ազգու (թոււնդ) է ըլում, որ երբեմն երեխի շորը էրում է շնչբորակի թըթուատի (թէզապ) նման. ուրեմն չ'պէտքէ զարմանալ, որ սորանից պատճառում է սրտի խառնուիլ, բերանիցը փսխել, հիծկտալ, փորի կտրատել, և փորի ուռչել, որը տալով կանանչագոյն փորիցը լուծել և ջիզերու խողցնել :

214. Կ հիւանդութենիցը երեխէն ազատ պահելու համար հարկաւոր է, որ ծննդականը ազատուելուց յետոյ, երբ քուն մանի և վեր կենայ, իսկոյն տայ երեխին առաջին կաթը, այսինքն՝ զալը, որ իրան լուծողական զօրութենովը կիստակէ երեխի փորումը էլած թանձր և կպուն կեղտը, բայց թէ որ մայրը որպիսի և իցէ պատճառաւ չի կարող ծիծ տալ, այն ժամանակը երեխին տուր դեղ համարաւ 38, մինչև որ երեխէն դուրս գնայ, ինչպէս կարգն է, այսինքն մինչև որ փորից քշածը լինի դեղնագոյն : Թէ որ երեխէն հանգիստ քնում է, չէ շփոթուում և չէ լաց ըլում և ծիծը բռնում է, նշան է որ երեխէն առողջ է. սրա հակառակն հաստատում է երեխի հիւանդ լինելը :

215. Եթմօր վախեցած կամ բարկացած ժամանակը երեխին ծիծ տալը փնասակար է, էս դիպուածներումը լաւ է, որ մէ քիչ կթէ փնասակար կաթը, սիրտը հանդարտացնէ և յետոյ ուտացնէ :

Գ.ՈՒԻ ԻԵ.

Կերածը սրտի վերայ քացիելուց (թըթուելուց) յառաջացած երեխայից հիւանդութեանց վրայ :

216. Կպուն կղղանք լուծելուց յետոյ հեշտութեամբ կարող է երեխայից կերածը նրանց սրտի վրայ թթուիլ, քացիիլ. էստուրից յառաջանում է բերանից փսխել կտրած կաթնի նման, բխկալ և փորիցը դուրս գնալ կանանչագոյն, լուծելու որ տալով և փուքս արձակելով, և հետևաբար զալիս է ան-

քնութիւնս. քնած տեղը վեր թռչել, ջղերու խաղցնել և ուրիշ վտանգաւոր հետեանք ունեցող հիւանդութիւններ : Եթէ երեւելն ծծի վերայ է, էն ժամանակը էս հիւանդութեանց պատճառ կ'համարուի ծծմայրը, ուստի և պէտք է տալ ծծմօրը զեղ համարաւ 68, կամ բարակ ձեւած գործլի (տես 11) զլիումը) :

217. Եթէ երեխի փորը փքած է և կապ, տուր զեղ համարաւ 38. կամ ետքից վեր առնել տուր փոքր ճրագուէ մօմ սրած, և փորի վրէն քսէ նոր և անալի կարագ : Եթէ փորիցը լուծելով փորը չ'նստի և մնայ առաջուան պէս պինդ, պէտք է երեխին ըղացնեն տաք ջրով և ջրի մէջ քցեն երկու կամ երեք բուռը դաղձ, կամ երիցուկի ծաղիկ, կամ օշինդր և կամ թեփ :

ԳԼՈՒԽ ԻԶ.

Կաթնից պատճառած բերնի խոցի վրայ :

218. Էս հիւանդութիւնը պատահում է մէկ շարաթուան երեխայից. նշանն է բերանումը ապիտակ կամ զեղնագոյն խոցերու գուրս տալը, որոնք գոյանում են բիլի մէջը, պռունդների, լնտերքի և լեզուի վերայ, և երբեմն էլ լաչքերումը և նրստատեղի վրէն : Էս հիւանդութիւնը շատ անգամ երեխայից համար վտանգաւոր է, որովհետեւ ոչ միայն անտանելի ցաւ են զգում, այլ և ծիծ ուտել չեն կարողանում, և մնում են քախացած : Թէ որ գուրս տուած խոցերը սկսին կակղանալ և սևանալ, յայտնի նշան է, որ երեխի վերջը լաւ չէ :

219. Էս հիւանդութիւնը երեխայից պատահում է անմաքրութենից, և տան միջի ապականեալ օդից. առաւել ևս երբ անլուայ ծծերով ծիծ են տալի :

220. Էս հիւանդութիւնը բժշկելու եղանակը սա է : Խնչ տեղ որ գուրս տուած լինին էս մանր խոցերը, պէտք է քրքրած քաթանը թաթխեն 74, կամ 75 համարի զեղումը, քսեն խոցերի վերայ և խմացնեն 67 համարաւ զեղը :

221. Թէ որ երեխի գուրս գնացածը լինի թարախի կամ աղիքի կրթուանքսի նման, տուր զեղ համարաւ 38 :

Երեխայից դժուար ակռէք հանելու վրայ.

222. Երեխայից ակռէքների դուրս գալը սկսում է ըստ մեծի մասին եօթներորդ ամսումը, երբեմն էլ վաղ, երբեմն էլ ուշ: Ետտերունը դուրս է գալի հեշտ և առանց ցաւի և շատերինը դժուարութեամբ և նեղութեամբ:

223 Երեխի ակռէքների դուրս գալու նշաններն են: Ա. Երեխի բերանիցն գալիս է չափէն աւելի շողինք (փսլիք), կամ թշերն ուռչում է: Բ. Եռտ շուտ մատները բերանն է տանում և ընտրքը բոր է գալիս: Գ. Լնտերքը ուռչում են և լուս են ընկնում նրա վրայ մանր ուռուցքներ, (որ կարելի է անտղել մասը քսելով) և ունենում է ընտրքի տաքութիւն և ցաւ, որ և արգելում է ծիծ ուտելու:

224. Ակռէքների գալուց պատճառած անտանելի ցաւը յառաջացնում է երեխի մէջ զանազան տեսակ հիւանդութիւնք, այսինքն՝ տաքութիւն բոլոր մարմնոյ, բերնիցը և փորիցը բանեցնել: Իս նշանները շատ անգամ պատահում են ակռէքները դուրս գալուց մէ քանի շաբաթ առաջ, որոնք ակռէքները դուրս գալուց յետոյ փարատուում են:

225. Վերոյիշեալ հիւանդութեան ժամանակը երեխին չ'պէտք է շուտ շուտ ծիծ ուտացնել, այլ՝ 38 համարաւ դեղը ձեռքը տալ, քաշքտ տելու համար ընտրքով, կամ մարոխի տակուի, կամ հացի կեղև, կամ հում ստեպղին (գազար,) և շուտ շուտ մատը քսեն ընտրքի վրէն:

Երեխին ծծից կտրելու վրայ

226. Հաստատ չէ կարելի նշանակել երեխայից ծծից կտրելու ժամանակը, պատճառը՝ որ տկար կազմուածք ունեցող երեխայից հարկաւոր է երկար ժամանակ ծիծ տալ, քան պինդ և առողջ կազմուածք ունեցողներին: Բայց և այնպէս տասն և ութ ամիսից աւելի չ'պէտք է տևէ ծիծ տալը, պատճառը

որ այնուհետև ծծի կաթը բաւական սնունդ չի տալ երեխայից : Ծծից կտրելու համար բժիշկ հեղինակները գրածները միմեանց համաձայն չեն. որ մէկը մի տարի է նշանակում, որը պակաս և որը աւելի : Արարիայումը երկու տարի են տալիս ծիծը, եւրոպիումը մէկ տարի, կամ տասն ամիս. սորա հակառակն՝ կան, էնպէս տեղեր, ուր չորս տարի են տալիս*. և ամէն տեղ իրանց սովորութիւնը լու ևն համարում : Ասթիւնից կըտրելուց առաջ պէտք է փափուկ կերակուրներ ուտելու վարժեցնել երեխին և յետոյ կաթնիցը կտրել, եթէ ոչ երեխէն կհիւանդանայ յանկարծ սնունդը փոխուելուց : Արեխին չպիտի խմացնեն սուրճ (ղաւլայ) և զինի, չպիտի ուտայնեն քաղցրեղէն և խմորեղէն :

Գ. Ա. Ե. Ի Բ.

Մազափոց և ճիւղից պատահած հիւանդութեան վրայ :

227. Երեխայքը ծծից կտրելուց ** յետոյ, երբ սկսում են կերակուր գործածել, հեշտութեամբ հիւանդութեանց տիրանում են : Արտի վերայ կերածի թթուիլը էս ժամանակին շուտ շուտ չէ պատահում, բայց աւելում է աղիքներումը թանձր մաղասը և կղկղանքը և թէ որ յարմար կերակուրներով չիտտակուի, կ'աշտանայ ծիծու. ուրեմն երկու տարեկան դառնալից յետոյ եթէ երեխայից մէջ հիւանդութիւն լուս ընկնի, էն ժամանակը պատճառը կարող ենք համարիլ նրանց ծիծու ունենալը :

228. Ճիւղուի հիւանդութեան նշաններն ըլում են տեսակ տեսակ, երեխայից կազմուածքին համեմատ : Այն երեխայք, որոնք շատ ծիծու ունին, բայց հիւանդութեան նշանները քիչ են, կան շատերն էլ, որոնք ծիծու սակաւ ունին, բայց ստատիկ տանջուում են հիւանդութեամբ :

229. Ճիւղուի հիւանդութեան նշաններն են : Ա. Երեխի կերածի անդաւոր մասը ծիծուները յափշտակելով՝ նշար սը-

* Տեղ տեղ սովորութիւն կայ, որ վեց տարի էլ են տալիս, էն մտքով, թէ քաջ մտրդ կդուրս գայ, ապայն շատ սխալուում են :

** Ծծից կտրելու լու ժամանակն է սշտանքը, կամ զոբունքը :

նունդը պահեսցնումեն, ուստի և երեխայք շատ զօրութենից ընկնելով ըլում են դեղնադայն և նուազ : Բ. Ճիճուները արգելում են կերակուր ընդունելու ճանապարհ, էստուրից աղիքները փրուում են, հուփ են տալիս մօտիկ մասերին, փորը փքվում է և ցաւում : Գ. Ստամոքսը և աղիքները էնքան կըզրգաին, որ էնդուց կը լուս ընկնի սաստիկ և անհամբեր փորացաւ և բոլոր մարմնոյ ջրերի ձգուիլ, խաղալ և թմրիլ, լուսնոտութիւն : Էս հիւանդութեան նշանները մանրամասնարար տես 149 յօդուածումը :

230. Աղիքներումը ժողոված մաղասը խտակելու և ճիճուն թափելու համար գործ ածա՛ կփած ալիբուխարի, կամ չորացրած սև դամբուլ, կամ զողնուշակ, կամ կաթնումը եփած քիչ սխտոր, կամ հում ստեպղին (գաղար), կամ ստեպղնի բամաճ ջուրը, սրանք կարող են բաւականին ճիճու թափել : Եթէ սրանցից օգուտ չ'յառաջանայ, էն ժամանակը տուր երեսին օրը չորս անգամ մեղրով շաղախած դեղ, կէս կաղնի չափ, համարաւ 59 :

231. Եթէ երեխէն լինի անզօր, պէտք է տալ զօրացնող կերակուր և դրսելիցը քսել գինով եփած օշինդր, կամ անանուխ :

ԳԼՈՒԽ Լ.

Ջգային հազի վրայ *).

232. Ջգային հազը սկզբումը դժուար է ջոկել չոր հազիցը, ինչ ժամանակ վրէն անց կենայ եօթն օր, էն ժամանակը աւելի կը սաստկանայ և շատ կընեղացնէ երեսին : Թէպէտ ժամանակ առ ժամանակ կ'թողնէ, բայց կէս կամ մէկ ժամ միջոց տալով կրկին կ'սաստկանայ, քրկորումը (բողապ) հազը սաստիկ զրգում է էնքան, մինչև որ շունչը կապ է ընկնում և համարում է թէ խեղդում է : Էս միջոցին կուրծքը հուպ կուգայ, սիրտը կ'նեղանայ, կը թաթամի շատ, երեսահարքը և երբեմն էլ ձեռները և ոտները կըկապալին : Ոտներով և ձեռներով երեխէն ջանք կանէ հազին օգնելու, սկզբից դաւ

* Էս հազին Թիֆլիզումը առամ են աբրրի հազ :

լիս է սաստիկ հազար, ունենում է կաշուն խորիս. շունչ քաշելիս խզզացնում է և դժուարանում. ցաւի դարձի ժամանակը (Porozism) շարունակուում է հնգից մինչև տասն վայրկեան և շատ անգամ փոխելով է վերջանում: Եթէ ցաւը զօրեղէ գալիս, երեսահարքը կարմրում է և կապտանում, աչքերը խուփ ընկնում, ըլում է տխուր, արիւնը վազում է դէպի գլուխը և շունչ քաշելը դժուարանում, և երբեմն սիրտը գնում է. թըմբութիւն գալիս, մէկ քանի ժամից յետոյ կրկնուում է, մանաւանդ գիշերները: Շուտ շուտ կրկնուում է ծուլալուց, լաց ընլուց, ծիծաղելուց և ուրիշ շարժումներով: Կս տանջանքը էնքան սաստիկ է գալիս, որ երբեմն քթիցը և բերանիցը պատրուում է արիւն, փոխեցնում է և ջրվէթը չէ կարող բռնել, որ իրան իրան կերթայ. էս նշանների դադար տալու միջոցին կարծես թէ բոլորովին առողջ է:

233. Երկու, կամ երեք շաբաթից և երբեմն մէ ամսից յետոյ կը քշանայ հիւանդութեան նշանները, երբեմն էլ աւելի երկարում է և ըլում տարափոխիկ (մէկից միւսին զիպչում է Contagium). երբեմն էլ պատահում է, որ փոխաբերուում է և տարածուում ժողովրդեան մէջը ոչ թէ միայն երկխայից, այլ և հասակաւորներին: Թէ ի՞նչն է էս հազը յառառաջացնող պատճառը, մինչևի հիմայ դեռ չէ հասկացուել, Հազալու ժամանակը ինչքան որ հեշտութեամբ դուս գայ խորթը, էնքան հեշտ անց կ'կենար:

224. Էս հիւանդութիւնը զանազանուում է հասարակ հազերից նրանով, որ հիւանդը շունչ քաշելիս խզզացնում է: Առաւել երկիրալայի է էն երկխայից համար, որոնք դեռ մէկ տարեկան չեն դառած, կամ ակռէք են հանում, կամ կարմրուկ և քու թէշ հանելիս բռնուում են:

235. Էս հիւանդութեան բժշկելու եղանակն է այսպէս: Նրանց՝ որոնք հազալիս չեն դուրս բերում բուական խորիս, պէտք է խնայեն թանկրովնուոյ, կամ կակղոյ տակաից շինած շայ, քաղցրացրած լաւ մեղրով և քնացնելիս լեղացնեն տաք ջրով և մէջը քցեն երկու, կամ երեք բուռը փշրած անանուխ, կամ մոլոշի, կամ երիցուկի ծաղիկ, կամ օշինդր, և կամ թեփ:

256. Յիշեալ զեղերը գործ ածելէն ետքը եթէ լաւանալու նշաններ չերևայ, այլ ընդհակառակն՝ հետզհետէ թուլու-
 թիւն գայ բոլոր մարմնոյ վրայ, էն ժամանակը կուրծքի վը-
 րէն ձեռի չափ թըթու խմոր կայցնեն, վըէն մանանկս, կամ
 ծեծած վայրի բողկ շաղ տուած, և թողնեն մինչև որ կայը-
 րած տեղը կարմրի. վեր առնելուց յետոյ էն տեղը քսեն ձի-
 թենուոյ ձէթ, կամ անալի կարագ, կամ հում կաթնի սեր (ա-
 րածան): Եթէ էս զեղերից օգուտ չըլինի, տուր զեղ, համա-
 րաւ 77: Մտիթար բժիշկը այս հազի համար գրում է. առ
 մէկ հատ շաքար-թիխայ*, առաւօտը և երեկոյ կաթնումը սրէ
 և խմացրու հազացող երեխին: Եթէ տեսնես, որ արիւնը խը-
 փում է գլխին, ճակատը շատ տաք է, քացախ և սառը ջուր
 միասին խառնէ, մէջը շորը թաց արաւ և դիր զլինին, և քանի
 տաքանայ, փոխէ**:

ԳԼՈՒԾ ԼԱ.

Գործու օգտակարութիւնը ինչպէս տնտեսական կառավարութեան
 մէջ, նոյնպէս զանազան իրանդութեանց բժշկելու համար:

257. Տնտեսական կառավարութեանումը գործին կարող է
 պիտանի լինել շատ բաներում: Ա. Եթէ օղին (արսալ) կամ
 ջուրը ունենայ վատ հոտ կամ վատ համ, ածաւ երկու կամ
 երեք բուռն ծեծած գործի էն ամանումը, որոյ մէջ գտնը-
 ւում է մնասուած ջուրը, կամ օղին, լաւ խառնէ, յետոյ ձա-
 գառումը դիր բարակ թաղիքէ կտոր, կամ զգած բամբակ
 և օղին կամ ջուրը մէջը ածելով քամէ: Իս կերպիւ վատ հո-
 տը և համը կ'քաշուի Բ. Եթէ ուզենաս միսը երկար ժա-
 մանակ պահել, դիր ծեծած գործու մէջը: Հոտած մսի վե-

* Շաքար-թիխայ, է սիպոսակ Լնգալ խորով չափ, գրսեւից խորուրդը և մանր
 առուցքներուս և մէջը դարտակ և սեւ միջատ (նիճու) նստած, էս միջատը
 չիտում և մէջը սատկում և մուս: Սրան բերում են կոտանդեւալօլսից, զը-
 նաւս է մանրուք ծախողների մօտ:

* Իննը հատ կնպած և ծեծած նուշից երեք զգալ սառը ջրով կաթ հանէ
 և մէջը խառնէ իննը հատ որդան կարմիր և մէկ կտոր կարմիր սառը շաքար,
 խմուրու ել և քանզամ երեք բամբակ անելով: Որդան կարմիրը կարող ևս աւելացնել
 երեքի հասակը մոխիկ տալով: Այս զեղը շատ անգամ բաւական օգնում է:

բայ է որ ածին ծեծած գործի. քիչ ժամանակումը կ'քաշէ նորա ծանր հոտը Գ. Եթէ ձէթը կամ եղը համը փոխած լինի, կամ կծուած, ա՛ռ ծեծած գործի. փաթաթէ քաթա- նուէր, բերանը հուփ տո՛ւր և էնպէս ձգէ ձիթի. կամ կղի մէջ, մէկ անգամ եփ տո՛ւր, դուրս կու գայ կծուածութիւնը Գ. Եթէ ծեծած գործը վրայ ջուր շաղ տաս և դնես ա- մանով պատուհանումը. (փանջարայ) կ'կտրէ ծխախտի (թամ- բաքու) հոտը և մուխը Ե. Եթէ ածին ծեծած գործին ար- տաքնոցը, կամ էն ամանումը, որոյ մէջ հարկաւորութիւն են դուրս գնում, վատ հոտը կ'հեռանայ Զ. Եթէ տաք գործ- լին փաթաթեն զրջած քաթանումը և քսեն մեղրամում կաթած շորի վերայ, իսկոյն դուրս կ'հանէ:

258. Գործիւն հիւանդութեանց դէմ զրսելից գործ ա- ծելու կերպն է: Ա. Եթէ բարակ ծեծած գործըլ օրը մէկ, կամ երկու անգամ լուանան ակռէքը, ոչ թէ միայն կ'հե- ռացնէ բերանի հոտը, այլև կիստակէ և կ'սպլտակացնէ ակ- ուէքը և կամբացնէ լստերքը: Բ. Աւմ սոնէրը ր հոտումէ, թո՛ղ գործիւն և թեփը ածէ սոնամանումը և էնպէս ման գայ մէ քանի օր, կամ գործիւն եփ տայ ջրումը և նրանով շուտ շուտ սոնէրը լուանայ Գ. Եթէ դք ունենայ խոց ու հոակիս լինի, թո՛ղ բարակ ծեծած գործիւն շաղ տայ նորա վերայ, կ'հեռա- նայ վատ հոտը. խոցին էլ օգուտ է: Դ. Եթէ մարմնոյ մէկ տեղումը լուս ընկնի քաղցիկը * ծեծած գործիւն շաղախէ խմորի հետ և կպցրու վրէն. այս կզանակաւ քաղցիկը՝ կամ թարախ կը- բանէ, կամ էլ աւելի չի փռուիլ: Ե. Եթէ դք մարմնոյ կամ գլխի վրէն ունենայ դուրս տուած խոց կամ քոս, թո՛ղ առ- նէ կէս լիտր՝ կամ կորոանիճի արմատ, կամ վայրի թրթնջուկ և կամ թեփ, ածէ վրէն երկք թունկի ջուր, լաւ եփ տա- լուց յետոյ ջուրը քամէ՝, մէջը խառնէ հինգ բուռը ծեծած գործի և նրանով լեղացնէ հիւանդին: Է. Էնպէս կրկնելու է օրա- մէջ քանի մի անգամ. կամ առնէ մէկ շարեք հալած խոզի իւղ, կամ ձիթենուց ձէթ, մէջը խառնէ մէկ շարեք բարակ ծեծած գործի, լաւ հարէ, յետոյ օրը երկու անգամ քսէ խոցերի վրէն:

* Ատոմներէն ասում են Գանդրեւայ:

239. Գործին իրեկ խմելու զեղ գործ ածելու կերպը այսպէս է: Ա. Թէ որ բերանը հասու՛մ ըլի, կամ բխկայնելիս, բերանու՛մը հասածի կամ թթուածի համ ըլնի գալիս Բ. Եթէ որ ուննայ քամիներից կամ ճիճուից պատճառած խէթք: Գ. Եթէ բերանիցը, կամ փորիցը բանայնու՛մ ըլի կամ ուննու՛մ ըլինքոցով փորագնցու թիւն: Գ. Եթէ որ ուննայ դող, կամ սուրաւանդ: Ե. Եթէ երկու հոգիս կինը ուննայ բերանից փսխել, կամ փորից լուծել: Զ. Եթէ երկու հոգիսը գուշակու՛մ ըլի փորը աւերելու նշաններ: Է. Եթէ երեխայք լուծու՛մ ըլին: Ը. Եթէ բերանից գցու՛մ է, կամ բխկացնու՛մ: Թ. Թէ որ անհանգիստ է լինու՛մ և շփոթու՛ում քնած ժամանակը. էս բաւոր վերոյիշեալ պատահումներու՛մը օգտակար է գործը վզեղ անելը հեռեւեալ կերպիւ: Ա՛ռ. (որ տեսակ փայտից գուղէ լինի) լաւ չաղ արած գործի, այնպէս որ չուննայ կապտագոյն բոց, լաւ փէ, որ փոշին մաքրուի. բարակ ծեծելուց յետոյ, մաղեց անցկացրու և գործ ածա՛յ այսպէս: Երբ յիշեալ հիւանդութիւններից պատահի, տուր չափահասներին օրը երկու անգամ մին մին սեղանի գգալ, ջրու՛մը խառնած. խկ երեխայից նրանց հասակի համեմատ՝ կէս, կամ մէկ չայի գգալ. գրեխու՛մը խառնելու է գործը փոշի, չափահասից համար մէկ կամ երկու սեղանի գգալ, խկ երեխայից համար՝ մի կամ երկու չայի գգալ:

240 Գործը օգտակարութիւնը ընդդէմ մահադեղի էլ փորձուած է, երբ մկնչեղով լինի թիւնաւորած, կամ սուլէ յաման խով: Ա՛ռ. բարակ ծեծած գործի երկու մսխալ, ածա՛ վրէն ջուր երկու փոքր բաժակ, մէկ եփ տուր, հովացրու. յետոյ բոլորը միասին խմացրու. եթէ խմելուց յետոյ կրկին զգու՛մ է զեղածի նշաններ, կրկին անգամ խմել տուր: Թէ որ ճարուի, լաւ է, որ յիշեալ զեղի հետ խառնուի նաև անանուխից, կամ նարինջից քաշած ջուր: Էս փրձանքի ժամանակը առաւել օգուտ է ընկուզի, կամ կաղնի փայտի գործին: Գոկտոր Բերանդըր առաջին անգամ հնարեց և փորձեց այս զեղը ընդդէմ մահադեղի, որ և բոլոր Եւրոպացուց բժշկական ժողովներու՛մը ընդունուեցաւ. որով և սա անմահ յիշատակ թողեց: Էսպէս տարարաղտութեան ժամանակը շուտ պէտք է ՚ի գործ

դնեն էս դեղը, եթէ պատրաստի չ'գտնուի ընկուղի կամ կաղ-
նի փայտի գործիչ, ինչ տեսակ էլ որ լինի առանց ուշացնե-
լու պէտք տան էնպէս, ինչպէս որ վերևը ասած է:

ՉԵՐՁ ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍԻՆ



ՄԱՍՆ Գ.

ԱՐՏԱՔԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ.

ԳԼՈՒԽ Ա.

Նոր վերքերի վրայ.

1. Երբ մարմնոյ մէկ տեղը սրով խոցուած է կամ պատռուած է խփելուց և կամ ուրիշ պատահմունքից, ու արիւն է դնում, կոչուում է նոր վերք:

2. Վերք ստացողները սկզբից զգում են ցաւ, որ և հետզհետէ շատանալով, երբեմն շատ և երբեմն քիչ նեղութիւն է տալի. յետոյ վերքի պոնկները սկսում են ուռչիլ, կարմիրիւ և հետն էլ լուս է ընկնում վիրաւորածի մարմնումը տաքութիւն, մանաւանդ գիշերները:

3. Մէ քանի օրից յետոյ վերքը կամաց կամաց թարախ է բռնում և երբ բոլորովին լցուում է, ցաւը, ուռուցքը, կարմրութիւնը և տաքութիւնը պակասում է:

4. Նոր վերքը առողջացնելու համար պէտք է. Ա. Արիւնը կտրել. Բ. Պէտք է լուանալ և խտակել. Գ. Վերքի պոնկները միաւորել և Գ. Վերքը լաւացնել:

Ե. Թե՛ որ տեսնես որ վերքից արիւն քիչ է գնում, աւելի, տշխատիլ չէ հարկաւոր. պատճառը որ ինքն իրան կ'կտրուի: Բայց երբ տեսնես, որ շատ արիւն է վազում և հիւանդը փղձկում է, պէտք է աշխատիս արիւնը կտրելու: Ինչ տեղից որ արիւնը սաստիկ վազում է, էն տեղ մէկ երկու կտր արիթ (զաւ) դիր և քրքրած քաթանով ծածկէ վերքը վրէն դիր չորս տակ ծալած բարակ քաթանով, և վիրաւորուած տեղը չափաւոր հուփ տալով կապէ: Էստուր արիւնը շուտ կը կտրուի. եթէ քրքրած քաթան չըկարողանաս ձեռք բերել, սրա տեղը կը բռնէ զզաւ ըմպակը: *

* Կա եւս արեան կապող է շրէշը, պաղեղը, կրած պաղեղը, կրած շորը, կամ քրքրած քաթանը քիթենոյ քիթում թաց արած, Արարիոյ խէժը, խնկան փռչին, եւ ձուի գեղնուցը աղի հետ խառնած:

6. Արիւնը կտրել տալուց յետոյ, եթէ վէրքի տեղը ցաւուամէ և նեղացնուամ, էն ժամանակը երեք ժամից յետոյ ըզգուշութեամբ բաց արա՛ կապը, մէրած և չորացած արիւնը տաք ջրով կամաց լուա՛. յետոյ մատդ ձիթնէոյ, կամ կըտուահատի ձիթուամը թաթխէ և էնպէս սնդղէ վէրքը, կարելի է թէ մէջը, ինչով որ կտրած է, նրա կտորը մնացիլ է. զորօրինակ, ապակի, տաշեղ, երկաթեղէնի կտոր, կամ հրացանի գնդակ (գուլուայ,) կամ շոր, կամ սրանց նման որ և իցէ բան, որ և անպատճառ հարկաւոր է հանել:

7. Լուանալուց և իտտակելուց յետոյ, թէ որ վէրքը երկար է բացուած, պէտք է պռունկը պռնկին մօտ քաշելով կպցնես, և քաթանի կտորով զնես նրա վերայ սպեղանի համարաւ 82 և սրա վերեւից էլ զնես ամիներքին, քրքրած քաթանի վրէն քսած 83 համարի կակղացնող սպեղանին և սորա վերեանց էլ երեք տակ ծալած քաթան կամ ուրիշ շոր և այնպէս փաթաթես և երեք մատ լայնութեամբ երկար շորի կտորով:

8. Նոր կտրած վէրքը յիշեալ կերպիւ փաթաթելուց յետոյ, եթէ վերաւորուածը չէ զգում սաստիկ ցաւ, չէ պէտք վէրքը բաց անել, մինչև որ թարախ բռնէ: Երբ տեսնես, թէ փաթաթած շորերից սկսել է թարախ դուրս գալ, կամ թարախի նշաններ երևալ, կապը բաց արա՛, իտտակիր, լուա՛ տաք ջրով և կրկին էնպէս կապէ, ինչպէս վերեւը գրած է:

9. Վերեւ յիշած ամուր և կպչուն կակղացնող սպեղանիներն ամէն օր պէտք է փոխես, մինչև որ թանձր և սպիտակ թարախ գոյանայ վէրքումը և յետ նորա չէ հարկաւոր սպեղանի, միայն փափուկ քրքրած քաթան զի՛ր վէրքի վրէն և օրը մէկ անգամ փոխէ՛, որովհետև էս թարախը շատ օգուտ է վէրքին և շուտ միս կ'բերէ, բերանը կ'միւսւորէ և բոլորովին կ'լաւացնէ:

10. Շատ անգամ էլ պատահում է, որ փոխանակ թանձր և սպիտակ թարախի, վէրքը բռնում է հոտած, դեղին, կամ կանանչ և կամ սև թարախ. էնպէս պատահում է ըստ մեծի մասին նրանց, որոնք երկար հիւանդութեամբ ուժից ընկել են արյունքն սուբաւանդով կամ յօդուածացաւով, և կամ զանազան քամիներով բռնուած են, կամ քոտտած: Էս տեսակ թարախը վէրքիումը

լուս ընկնելիս, պէտք է գիտենաս, որ նոր վէրքը փոխարկուել է փթած վէրքի, որոյ վերայ ներքեւը մանրամասնաբար գրած է:

11. Եթէ վէրքին զեղ արած ժամանակդ ցաւը շատանայ և նեղացնէ, ցաւը քչացնելու համար նրա վերայ դիր բարակ շոբուժք փաթաթած ձաւար, կամ կռուահատ, կաթնով եփած, կամ լաւ էփած ստեպղին (գազար): Եթէ վէրքի պռունկնեերից մօտիկ երևի կապուտ, կամ կարմիր ուռուցք, որ առաւել պատահում է ջարթածներին կամ ծեծածներին, էն ժամանակը կէսուակէս քացախ և օղի խառնած ու երեք տակ քաթանը մէջը դրջած, դիր վրէն և քանի ցամաքի, կրկին փոխէ, մինչև ուռուցքը քաշուի: Առաւել լաւ է այս պարագայիս մէջ արծրճի ջուրը նոյն կերպիւ գործածել (տես համար 102):

ԳԼՈՒԽ Բ.

Փթած և հնացած վերքի զրոյ:

13. Պատահում է երբեմն, որ վէրքը խորը բացուած լինելով, նրանից շարունակաբար գնում է նոսր, հոտած, և զեղին, կամ կանանչ և կամ սև թարախ, էսպիսի վէրքը կոչուում է փթած կամ հնացած վէրք:

13. Նոր վէրքը, ինչպէս վերեւը ասած է, երբեմն դառնում է փտած վէրք. մանաւանդ թէ որ վիրաւորածները ունենում են հնացած ցաւեր, կամ արիւնը ապականող հիւանդութիւններ, կամ ունեցել են արիւն ապականող հիւանդութիւն և չեն բժշկուել:

14. Շարունակաբար հոտած և նոսր թարախ գնալով ոչ թէ միայն վէրքը հետզհետէ կմեծանայ, այլ և նորա պռունկները կ'կարմրին, վէրքը կ'ցաւի, տաքութիւն կտայ և երբեմն հիւանդին վերայ անզօրութիւն կ'գայ, կ'լզարանայ ու կ'նուագի:

15. Փթած վէրքը միայն սպեղանիով չի լաւանալ. մինչև որ ներսի վնասակար աղտը չ'խտակուի յարմար զեղորէիք, ուստի և ջրի տեղ պէտք է գործածել մէքանի շարաթ արգանակ (դեկոխտ) համարաւ 84, կամ 57, և վէրքի վերայ գնել քրքրած քաթանով սպեղանի, համարաւ 83: Եթէ վերոյ՝ յիշեալ զեղորայքը գործածելով վէրքի մէջը մասուլ (սուկի

միս) լուս ընկնի, որ և կ'ճանանաչուի էնդուրով, որ մատոյ կամաց կամաց եթէ վրէն հուսի տաս, իսկոյն կ'սկսի արիւն կրթալ: Էս ժամանակը չ'պէտք է գործ ածել սպեղանի, միայն օրը մէկ անդամ պէտք է ածեն մսամուրի վերայ էրած պաղ- լեղ. (տես համար 85.) և վերելիչը պէտք է դնեն փափուկ քրքրած քաթան և փաթաթեն:

16. Եթէ վերքի բոլորի շուրջը սկսի կարմրել, տաքութիւն տալ, ցաւիլ, եռալ և քոր զալ, էն ժամանակը կ'սկսի թարա- խը քշանալ. ուստի պէտք է աշխատիլ ցաւը քշայնել և թա- րախը շատայնել հետեւեալ կերպիւ: Վէրքը փաթաթելիս պէտք է վերեւանց դնեն կակղացնող դեղեր, զորօրինակ՝ էփած սոսկ- ղին (գաղար), կամ շողդամ, կամ դարու ալիւր, կամ հա- ցի միջուկս, կաթնով էփած: Եթէ պատահի վէրքեցը չափա- ղանց թարախ դնալ, էն ժամանակը թարախը քշայնելու հա- մար պէտք է չորս տակ ծալած շոր դրջն օղիախառը քացա- խումը, կամ արձձի ջրումը և դնեն վէրքի վրէն, ինչպէս դրած է 86 համարումը, և էնպէս փաթաթես: Եթէ վէրքը խորը լինի տուն դնալիս, էն ժամանակը շատ լաւ է ջղախոտից քա- մած ջրումը քիչ քացախ խառնել և նրանով վէրքը լուանալ:

17. Մարմնոյ վերայ դրսեւից գոյացած, փթած վէրքը եթէ օրտացաւութեամբ և ուշի ուշով աշխատին, էս դրած դեղա- բէքով անպատճառ կ'լաւանայ, բայց թէ որ վէրքը, շատ խորը լինի բացուած և ոսկորին լինի հասած, ժանաւանդ թէ որ կերցաւ է փոխարկուել, էն ժամանակը էս դեղորէիւք շի առող- ջանալ, վասնորոյ կ'հարկաւորի անպատճառ բժիշկ կանչել:

Գ.ՈՒԻ Գ.

Ջարդուածի վրայ.

18. Երբ ծեծուելուց, կամ զարնուելուց, կամ բանի զիպ- չելուց և կամ վրէն ծանր բան ընկնելուց և ուրիշ սրանց նման պատահմանքից ջարդուումէ, մարմնոյ մէկ մասը և էն տեղը կարմրում է, կապտանում և ուռչում, կոչուում է ջար- դուածք:

19. Այսպիսի պատճառներէց պատահած Չարդուածքից խնդին լուս է ընկնում սաստիկ ցաւ և բորբոքում և շատ անգամ էլ պատահում է, որ Չարդուած տնդը թարախ է բռնում և դառնում վէրք, և երբեմն էլ փոխարկուում է քաղցկեղ :

20. Այսպիսի Չարդուածքին հարկաւոր է շուտ դեղ անել. պատճառը՝ որ եթէ թողնուի, շատ ծանր կ'լուանայ այնուհետև, ուստի և հարկաւոր է կաշոյ տակը ժողոված մեռած արիւնը շա՛ժել և տկարացած անդամը զօրացնել էսպէս: Զորս տակ ծալած քաթանը զրջէ՛ քափուրի արաղի (ողի) մէջ (տես 87 համարումը) կամ արծրճի ջրումը, (տես 86 համարումը) կամ քացախով խառնած սառը ջրումը, զի՛ր Չարդուածքի վրայ, շուտ շուտ փոխէ, որ վրէ՛ն չ'ցամաքի, էսպէս շարունակէ՛, մինչև որ ցաւը, բորբոքումը և ուռուցքը քչանայ: Եթէ վերոյիշեալ դեղերէնցը չ'գտնուի, ս'ո ջուր՝ երկու փոքր բաժակ, նոյնչափ էլ քացախ և մէկ բաժակ օղի, (արաղ) 'ի միասին խառնէ, և մէջը ածա՛ մէկ շայու դղալ ձեծած անուշադր և գործ ածա՛ վերոյիշեալ կերպիւ: Եթէ անուշադր չ'գտնես, նրա տեղը երկու մխալ բարակ քերած քափուր խառնէ՛ և գործ ածա՛ նոյն կերպիւ: Շատ անգամ պատահում է, որ այս դեղորէլիք ձեծածը կամ Չարդուածքը չէ լուանում, մանաւանդ թէ որ արիւն է ժողովում կաշոյ տակը և փոխարկուում է վէրք, կամ քաղցկեղ, էս ժամանակը պէտք է դեղ անել վէրքին յարմար, կամ բժիշկ կաննել:

ԳԼՈՒԽ Դ.

Ուռուցքի վրայ:

28. Ուռուցք է սառուում մարմնոյ կաշոյ վրայ բարձրացածը կարմիր, կամ կապտագոյն, որոյ տակը ժողովուած է կամ կ'ժողովուի թարախ:

22. Ուռուցքը շատ անգամ էլ պատահում է, բացի Չարդուածքն, նաև արեան բորբոքումից, կամ կարմիր քամուց, կամ ջերմից և կամ տենդից և ուրիշ երկարատև հիւանդութենից, մանաւանդ մարմնոյ էն տեղերբումը, ինչ տեղ գոյացած էն բնական խուլեր (մասնք):

23. Երբ ուզում է մարմնոյ մէկ տեղումը ուռուցք դուրս գալ, հիւանդը առաջուց զգում է ցաւ, երբեմն էնպէս սաստիկ, որ անդամները բռնուում են և չէ կարողանում շարժել. ունենում է սրանեղութիւն, և երբեմն էլ դող ու տաքութիւն : Երբ բաւական թարախ մօտ է ընում, էն ժամանակը նշանները և ցաւը քչանում է. կամ չարիաւորուում և կամ բուլբուլին անց կենում և հիւանդը առաջին սաստիկ ցաւի տեղ զգում է միայն ծանրութիւն :

24. Էն տեղը, ինչ տեղ որ ուռուցք պիտի լուս ընենի, պէտք է աշխատիլ, որ կակղանայ և շուտով թարախ ժողովուի. ուստի պէտք է դնել ուռուցքի վերայ կաթնով եփած կտուահատ, կամ հացի միջուկս, կամ մոլոշի ծագիկ, գարու ալիւրով եփած և շուտ շուտ փոխել. քանի որ սառի: Եթէ բաւական ժամանակ այս դեղերով ուռուցքը չհասնի, կամ չկակղանայ և ցաւելոյ նշան չերևայ, էն ժամանակը վերոյիշեալ դեղորկից փոխարէն պէտք է դնել ուռուցքի վրէն թթու խմոր մեղրով և խորոված սոխով պատրաստած, (տես համար 88) և փոխել օրը երկու, կամ երեք անգամ, մինչև ի խօցը հասնի և ինքն իրան պատուուի : Պատուուելուց յետոյ, պէտք է խոյը կամաց կամաց լաւացնել վէրքի համար ք. զլիւումը գրուած դեղերով :

Գ. Լ. Ռ. Ի. Ե.

Մատնաշունչի վրայ

25. Ըզնկան տակը, կամ ըզնկից մօտիկ, կամ մատի մտի մէջը թարախի ժողովուելը կոչուում է մատնաշունչ :

26. Մատնաշունչը գոյանում է ջարդուելուց, կամ ըզընկան տակը ծլէպ, (ծեղ) կամ ասեղ, կամ մեխ խրուելուց, նոյնպէս և պատահում է մարմնոյ մէջ ժողովուած ապականութենից :

27. Մատնաշունչ ունեցողը առաջին անգամ կ'զգայ սաստիկ ցաւ և տաքութիւն, յետոյ մատը կուռչի և ցաւը մօտիկ տեղերն էլ կ'տարածուի և երբեմն ողջ ձեռը կ'բռնուի մինչև ի ուսագլուխը, և չի անց կենալ, մինչև ի մատնաշունչը չհասնի և չ'բլչի :

28. Ինչքան կարելի է, պէտք է աշխատիլ որ մասնաշունչը շուտով հասնի, մանաւանդ երբ որ գոյացած լինի մի մէջ խորը և սկզբնային մտայնութիւն: Աստուծոյ կտուհիս հաստը, կամ դարու ալուրը, կամ հացի միջուքը, կամ թթու հացի խմորը, քիչ տաքացրած, զի՛ր մասնաշունչ էլած տեղի վրայ և փոխէ՛ շուտ շուտ, որ չհովանայ. եթէ էս ղեղերը շուտով չհասցնեն, էն ժամանակը զի՛ր թթու հացի խմոր, խորոված սոխով և մեղրով: (տես համար 88): Նոյն կերպիւ շարունակէ՛ մինչևի հասնիլը և բլչիլը: Աւազներու համար պէտք է զննել վրէն սպեղանի համարաւ 83: Եթէ երկար ժամանակ թարախը մէջը ժողովուելուց ըզունգը վէր ընկնի, էն ժամանակը օրը երկու անգամ ղեղին մամըզնկան ձեռով տախակացրու և զի՛ր ըզնկան տեղը, մինչևի կրկին նոր ըզունգ դուրս դալը:

29. Մասնաշունչ ունեցողը պէտք է զգուշ մնայ գծուաբանարս ուտելիքից և տաքացնող խմիչքից և աշխատի, որ վտարումը կապ չ'լինի:

ԳՂՈՒԽ Զ.

Պալարի (չիբան) վրայ:

50. Պալար ասուում է էն ուռուցքը, որ աղանու ձուխ շափ կարմրագոյն, կամ կապտագոյն և կամ սևագոյն, դուրս է գալի, տաքութիւն ցաւ, և շատ անգամ զող պատճառելով՝ առաւել էն ժամանակը, երբ գոյանում է մարմնոյ քնքուշ տեղերումը. կամ երբ դուրս է փչում մէքս՝ ի տեղերքում:

51. Էս ուռուցքը լաւացնելու համար պէտք է աշխատիլ, որ, ինչքան կարելի է, շուտ հասնի, մանաւանդ որ պալարը զժուար է հասնում քան զմիւս ուռուցքները, ևս առաւել երբ շատ է ցաւում: Ա՛ն կաթնով էփած գարու ալուր, կամ տուզտի տակալի, զի՛ր պալարի դուրս էկած տեղի վրայ և շուտ փոխէ՛, որ չը սառի: Եթէ կարմրութիւնը ու տաքութիւնը սակաւ ունի, բայց ցաւը շատ է նեղացնում և վերոյիշեալ ղեղերը չեն օգնում, էն ժամանակը ցաւը քշացնելու և շուտ թարախ բանելու համար վերոյիշեալ ղեղորէից մէջը խառնէ՛

Տեճած մուխինդ, կամ մեկնի զուխ (խաշիաշ) : Եթէ պալարը խիստ քիչ է ցաւում, կամ ամենեկն չէ ցաւում, բայց շուտ էլ չէ հասնում, յիշեալ խտերի տեղը խաշիք (յափայ) մէջը պէտք է հարեւմէքանի զուխ խորոված սխւ, կամ մեղրումը շաղտիսած հացի խմորը տափակացնել և կոյրընել, և՛ կամ օրը երկու անգամ դնել սպեղանի 82 համարաւ : Էս դեղորայքը պէտք է գործ ածել, մինչև հասնի և բաց բլի : Բացուելուց և թանձր թարախը դուրս գալուց յետոյ վէրքը լաւացնելու համար պէտք է գնել վրէն սպեղանի 83 համարաւ :

ԳԼՈՒԽ Է.

Էրածի վրայ.

32. Էրած կոչուում է, երբ մարմնոյ մարմին կարմրում է և բշտում, տաքացած, ևս էկած, կամ կէծացած իքմնի դիպչելով, զորօրինակ՝ ջրի, ձիթի, կղի, երկաթի, և այլն :

33. Էրածը բաժանուում է երեք աստիճան. Ա. երբ էրած տեղի ուռուցքը մասնաւոր կարմրութիւն ունի և կսկծացնում է թոյլ Բ. երբ աստիկ կարմրել է ուռուցքը և բշտել, ու աստիկ տաքութիւն ունի. Գ. երբ էրուելուց մարմնը բոլորովին դմրբում է, կամ միւր սեանում և էն տեղը բոլորովին միւր մեռնում է և ոչինչ չէ զգում :

34. Էս երեք պատահանքներումն էլ էրածը առողջացընելու համար գործ է ածուում ջոզ ջոզ դեղեր, ամէն մէկի նշաններին յարմար : Առաջին աստիճանի էրածի վրէն պէտք է դնել քաթան, քացախախառն սառը ջրումը, կամ արձըձի ջրումը զրջած, (տես համար 54 կամ մածունի, կամ թանի, կամ քամած շաղուած (փտրած) կաթի միջումը զրջած, և կամ թթու հացի խմոր դնել : Երկրորդ աստիճանումը պէտք է էրած տեղի վրայ օրը երեք անգամ քսել ձիթինուց, կամ կտուահատի թարմ (թաղայ) և սառը ձէթ, կամ նոյն կաթնի սեր, կամ ալանի կարագ, կամ սպեղանի համարաւ 89 : Երրորդ աստիճանումը զգացողութիւնը վերադարձնելու համար էրած տեղի վրայ պէտք է քսել օրը երկու անգամ սպիտակ նաւթ, կամ 90 համարաւ դեղը և կամ լաւ կուպա : Եթէ էրած տեղը

բողբոզին զգացողութիւն չունենայ, ա՛ռ թթու հացի խմոր աղաւնոյ ձուի չափ և երեք մսխալ ճեճած սպիտակ հող * (կաւիճ, որ դերձակները գործեն ածու՛մ) խառնէ՛ միասին և կպցրու էրած տեղի վրայ, երեք կամ չորս անգամ փոխէ՛, մինչև որ մեռած տեղը թարախ բռնէ և սևացած միւսը իրան իրան վէր ընկնի : Եթէ էս դեղերն էլ օգնութիւն չունեն, էն ժամանակը հարկաւոր է բժշկին ցոյց տալ :

ԳԼՈՒԽ Ը.

Սառածի կամ ցրտի տարածի վրայ.

35. Սառած, կամ ցրտի տարած ասուում է, երբ մարդոյս որ և իցէ խաղը կամ ողջ անդամը սաստիկ ցրտից՝ սառի, կամ ինչպէս ասում են, ցուրտը տանի : Յրտի տարած տեղը կոշւոյ գոյնը փոխուում է, բնական տաքութիւնը և զգացողութիւնը պակասում, և կամ բողբոզին դմբուում է :

36. Յրտի տարած մարմնոյ մասը սկզբից մրմռում է, յետոյ ցաւում, կարմրում, և ուռչում, և վերջը սխտակում և մէքանի ժամից յետոյ եթէ օգնութիւն, կամ դեղ չեն անիլ, կ'սեանայ և բողբոզին կ'կորցնէ զգացողութիւնը : Այս դժբաղդութիւնը պատահում է շատ անգամ գեղացիներին, որոնք, երբ մարմնոյ մէկ մասը ձմեռը սաստիկ մրսելուց ցուրտը տանում է, խկոյն վազում են կրակի մօտ, տաքացնում են, կամ մօտիկ պառկում, որ ո՛չ միայն չէ օգնում, այլ և մեծ վնաս է պատճառում :


37. Սառածի և ցրտի տարածի համար պէտք է ամենայն ջանք ՚ի գործ դնել, որ սառած տեղը կրկին իրան բնական գոյնը ստանայ և զգացողութիւնը նորոգուի, ուստի ցրտի տարած տեղը պէտք է անդադար մերսել, տրորել փափուկ շալի կտորով, կամ ձիւնով, կամ սառուցով, և կամ անդամը դնել սառը ջրի մէջ մինչև մէկ ժամ, և ջրից հանելուց յետոյ քսել քարի իւղ, կամ 90 համարաւ դեղը, կամ բազի իւղ և կամ լաւ կուպա : Իս եղանակաւ պէտք է վեց ժամու չափ միջոցումը սառածին օգնել, որ ցրտից տարած անդամը կարենայ շարժիլ

* Мель.

և զգայութիւն ստանալ : Եթէ ցրտի տարածք այնչափ սաստիկ լինի, որ յիշեալ եղանակաւ հնար չ'լինի շարժում և ըզգայութիւն տալ ցուրտը տարած անդամին, ընդհակառակն էն տեղը լուս ընկնի սևութիւն, էն ժամանակը պէտք է մըրսած տեղը ածելիով : կամ սուր դանակով թլատել (ցետել) նորա վերայ դնել թթու հացի խմոր կաւիճով շաղաղած, (սևս համար 91.) ու յետոյ էնպէս վարուիլ : Ինչպէս որ գրուած է էրածի համար է. գլխումը :

38. Եթէ սաստիկ ցրտից բոլոր մարմինը սառած լինի, առանց ուշացնելու պէտք է տանիլ մէկ հով տուն, նստացնել մինչևի շինքը սառը ջրումը, կամ վրէն ածել ձիւն, կամ սառուց և թողնել, որ մնայ մինչևի յայտնի լինի կենդանութեան նշանները : Աւրի գալու համար, պէտք է քթումը և բերանումը խուտուտ ածել հաւի փափուկ փետուրով, կամ քթի առաջը ծխել փետուր, կամ թուղթ, կամ կաշի, և կամ հոտ քաշել տալ և բռնել քթի առաջը անուշադրի ոգի : Պիտի զգուշանան սառած ին իսկոյն կրակի մտ պառկեցնելուց, կամ կրակին մօտիկ տանելուց, որ սաստիկ վնաս է :

39. Երբ մարմինը սկսի շարժիլ, կամ այլ կենդանութեան նշաններ երևան, էն ժամանակը պէտք է ջրիցը հանել պառկացնել տաք տան մէջ փափուկ տեղաշորումը և խմացնել կէս ժամ միջոց տալով, չորս չորս զգալ տաք ջուր, մէջը մէկ զըզալ օղի խառնած, կամ զինի, քաղձրացած շաքարով, կամ մեղրով : Էսպէս պէտք է վարուին, մինչև որ քրտինք գայ, և յետոյ տան զօրացնող կերակուրներ, այսինքն՝ վառեկի, կամ հաւի, կամ ոչխորի մսի արգանակ, (խաշու) ձաւարի կամ բրնձի չորվայ լաւ եղով, կամ ձիթով պատրաստած և խմելու համար դործ ածեն քիչ զինի հետը խառնած կաթնազոլ ջուր, շուտ շուտ խմացնեն երկերիու բաժակ չայ, պատրաստած անանուխի, կամ երիցուկի կամ կակղւոյ, կամ թանձրլինուոյ ծաղկներից :



Ջրումը խեղդուածի վրայ:

40. Ջրումը խեղդուածը զգուշութենով ջրից հանելուց յետոյ չ'պիտի վրած ակի, կամ կապերտի վերայ դնեն և հարկն, նոյնպէս չ'պիտի ծեծեն ոտներին. որ սաստիկ վնաս է, այլ՝ շուտով տանին մէկ մօտիկ տուն, զգուշանալով, որ զլուսը չըլինի կախ ընկած, կամ ժած գալիս. կամայ պառկեցնեն տաք սեղաշորում, մերկացնեն բոլորովին և ցամաք տաք շորով սրբեն բոլոր մարմինը:

41. Թէպէտ և խեղդուածը երկար ժամանակ մնացած լինի ջրումը, այնու ամենայնիւ առանց յուսահատութեան նրան յետ բերելու համար պէտք է գործ դնեն հեակեալ միջոցները: Ա. Պէտք է պառկեցնեն ան կողքան վերայ, գլուխը բարձր և երեսը բաց, բերնումը, քնիթումը, և ականջներումը ժողոված կեղտը խտակեն ձիթումը թաթախած հաւի փետուրի ծայրով: Բ. Չորս կողմը շարեն տաք ջրով լիքը շուշէք, կամ և՛ զան փամփուշաներ, կամ տաք մոխրով, կամ տաք թեփով լըցրած տոսորակներ և շուտ շուտ փոխեն որ չ'սառչի, և մարմինը շփեն տաք քափուրի ոչիով (սպիրտ). կամ քացախումը, կամ տաք ջրումը զրջած շալի կտորով, կամ փաթեթեն նոր քերթած եզան, կամ ոչխարի մորթումը մէկ քառորդ ժամ. միով բանիւ ամէն կերպիւ՝ պիտի աշխատին, որ տաքացնեն: Գ. Երեսահարքի քներակների վրէն ցրցամ տան և ականջների եզնէն քսեն արաղով խաւնած քացախ, կամ միմիայն քացախ՝ շուտ շուտ հոտ քաշել տան անուշադրի ողի և քիթի առաջը բռնեն և բերանումը կաթացնեն լըքմանի ողի, համարաւ 101 Գ. Գրեխ տան կաթնագոլ արաղով, կէտուակէս ջուր, կամ քացախ և ջուր խառնած, կամ ինչպէս 20, կամ 21 համարումը գրած է: Ե. Երբ տեսնեն, որ սիրտը զըցում է, պէտք է շուտ շուտ քսեն փորի, ոտների, կաների, միջքի, սրտի զղալի և կշաների վերայ տաք շալի կտոր, զգուշանալով՝ որ չ'մրսացնեն, նմանապէս տրորեն խոզի ստեով (ջագառ) կամ ծեծեն եղինջով, որ կանգնած արիւնը տաքանայ և սկսի ման գալ երակների մէջ: Եթէ կարելի լինի.

մինչևի շինքը, կամ գոնէ մինչևի ծնկները տաք ջրումը գր-
 նելը շատ օգտակար է: Գ. Երբ կենդանութեան նշաններ երևան,
 պէտք է օդ փչել բերանումը էս տեսակ. մէկ ուժով մարդ պէտք
 է խեղդածի քթի պնչերքը պնչի բռնէ, իրան բերանը դնէ նո-
 րա բերանի վերայ և սաստիկ փչէ մէքանի անգամ. կամ
 պէտք է եղէգնով (զամիշ) խեղդածի բերանումը օդ փչէ: Կս-
 պէս պէտք է կրկնեն, ժամանակ ժամանակ միջոց տալով, միայն
 զգուշանալու է, որ շնչափողումը օդ ներս չգնայ: Տաքացրած
 շալի կտորով օրորելը պէտք է շարունակեն առանց միջոց տա-
 լու սկիզբից մինչևի կենդանութեան նշաններու հաստատ ե-
 րևալը. տաք անկողնումը պառկած պիտի թողնեն, որ չ'մըսայն են:
 Է. Եթէ խեղդածը յետ դայ և կարողանայ բան կուլ տալ,
 պէտք է տան քիչ քիչ տաք չայ, պատրաստած կակղւոյ, կամ
 թանթրվիւոյ ծաղիկով. մէջը փոքր արաղ, կամ զինի խառ-
 նած. նմանապէս քիչ քիչ խմայնեն տաք խաչու. հաւի, կամ
 վառեկի, կամ լաւ ոչխարի մնով եփած. միայն մինչևի ինքը
 չ'կարենայ կուլ տալ, չ'պէտք է ուժով բերանը ածել: Յետոյ
 պէտք է դրելս (տե՛ս համար 20, կամ ձեթ քսած սապոն
 ետքիցը վեր առնել տան:

42. Եթէ ձմեռուան օրերումը լինի խեղդած, և ջրումը
 ստաւծ, էն ժամանակը պէտք է վարուին էնպէս, ինչպէս ա-
 սած է երրորդ մասումը և քառասունուհինգերորդ յօդուա-
 ծումը:

43. Բոլոր վերոյիշեալ դեղորայքը և հնարքները պէտք է
 դործ դնել շարունակաբար և սրտացաւութեամբ, մինչևի տա-
 օր ժամ չ'պէտք է դադարիլ օգնութիւն անելուց, մինչև որ
 կամ բոլորովին առողջանայ, կամ մահի յատուկ նշաններ
 լուս ընկնին: Կան օրինակներ, որ տանուերկու ժամու խեղ-
 դածը յետ է կկել:


44. Եթէ վերոյիշեալ դեղորայքով խեղդածը չ'յաջողէ յետ
 բերել, պիտի պառկայնեն բոլոր մարմնով ձիու տաք փէ յինումը,
 մինչևի շինքը, և միմիայն երեսը բաց թողնեն. կամ տաք
 մոխրումը, և կամ տաք թեփումը, և էնպէս թողնեն մինչևի եր-
 կու, կամ երեք ժամ. շուտ շուտ խուտուտ ածեն բերա-
 նումը և քթի ծակերումը փափուկ փետուրով, և քթումը փը-

չեն բուռնութի, կամ պղպեղ, կամ սպիտակ եղբորոսի տակ-
ուի և քթի առաջը շուտ շուտ բռնեն ձեծած սոխ, կամ սրխ-
տոր, կամ ձեծած կծու ձ. կամ քաջախով շաղախած մա-
նանիս: Շատ անգամ պատահած է, որ մոխրումը պառկացնե-
լով յետ են եկել շատ անյոյս խեղդածներ :

45. Խեղդածի յետ գալու նշաններն են՝ կամաց կամաց
կաշույ կակղանալը, մարմնու տաքանալու նշանները, քիչ քիչ
սրտի զցելը, կամ թփթփալը, քիչ քիչ աչքերի կուպերու և
կուրծքի շարժելը, երեսահարքի և պանկների կարմրիլը, շունչ
քաշելը և հոգւոց հանելը, դողալը, հաղալը, փռնկտալը, բե-
րանիցը փրփուր գալը, կամաց կամաց խօսիլը և այլն :

46. Խեղդածը չպիտի դնեն սաստիկ տաքացրած տան մէջ
և ոչ թէ կրակից մօտիկ, և ոչ այնպիսի տեղ: ուր բամի է
փշում: Այլ կամաց կամաց տաքացնեն մարմինը տաք շալ:
կամ տաք մահուդ քսելով: Վիզբից սաստիկ և զօրաւոր հը-
նարքներ չէ հարկաւոր գործ դնել, զորօրինակ՝ խոզի ստե
(Չագառ) քսելը, եղինջով ձեծելը, արիւն թողնելը, որոնք
սաստիկ վնասակար են խեղդածի համար: Բայց թէ որ խեղ-
դածի երեսահարքը կապտացած է, կամ կարմրացած, կամ
փառք ընկած, կամ ուռած, և կամ թէ որ լիբը արեան տէր է,
էն ժամանակը օգտակար է աջ թեկից արիւն թողնել մէկ ստիլի
չափ, կամ փոքր աւելի, և կտրած տեղը պինդ կապել: Եթէ
արիւն թողնողը ճանաչէ տեղը, առաւել լաւ է վըզի առաջի
տամարից արիւն թողնել:

47. Խեղդածին յետ բերելիս հարկաւոր է ձեռաց պատ-
րաստի ունենալ. Ա. ճախտ, դռչակ, վերմակ (լէհէպ), բարձ,
երեսարբիչ, մահուդի կամ շալի կտորտանք, վալաններ, խոզի
ստե. Բ. մկրատ, դանակ, դղալ, զրեխ տալու պատրաստու-
թիւն, բազի կամ հաւի խոշոր փետուրներ և արիւն թողնելու
նշտրակ. — Գ. տաք ջուր, պղինձ, չայշան, փնջաններ. — Դ. ա-
րալ քացախ, ձէթ, սապոն, հոտ քաշելու ողի, լոբմանի ողի,
քափուրի ողի, — Ե. կակղույ կամ թանթրվիւնույ, կամ երիցուկի
ձաղիկ, և կամ անանուխ :



Քունաւոր ճանճի կծածի վրայ:

48. Մեղուի և ուրիշ տեսակ թունաւոր ճանճերու կծած տեղը ուռչում է, կարմրում, ցաւում, մրմնջում. տաքու թիւն տալիս և մրսացնում:

49. Թէպէտ թունաւոր ճանճերու կծածի համար համարեա՞ թէ ամէն տեղ զանազան հնարներ և տնական ղեղեր գործ են ածում, բայց և աւելորդ չեմ համարում մէքանի օգտակար խրատներ դնել սրա համար: Ա՛ռ արձձի ջուրը (տես համար 86.) կամ կէս մսխալ անուշադր, չորս փնջան սառը ջրումը խառնէ՛, երկու տակ ծալած քաթանը մէջը դրջէ՛, դիւր վրէն և շուտ շուտ փոխէ: Ուռուցքը կտրելէ նրստացնել նաև սառուց քսելով և տաքացրած արձիճ՝ դնելով: Շատ օգտակար է նաև կծած տեղը օրը վեց անգամ ձէթ ներոյ իւղ քսել և նոյն ձիթ ներոյ իւղից օրը երեք դրալ խմայնել: Կարիճի կծածի համար էլ շատ օգտակար են վերոյիշեալ ղեղերը. բայց երբ մէկին մեծ և սև կտրիճ խայթէ, ա՛ռ մէկ պճեղ սխտոր, ծեծէ՛, քիչ աղ ցանէ՛ վրէն, շորի վերայ քսէ՛ և դիւր վրէն, խեղոյն կանցկացնէ: Արա փոխը անձամբ տեսել եմ, միայն անցկենալուց յետոյ, էլի աշխատիլ պէտք է, որ հիւանդը շատ քրանի և պատրաւ կենայ կերակրեղէնից և խմիչքից:

Օձի կծածի վրայ:

30. Շատ տեղ մանուսնեղ տաք երկիրներումը սնդգուշու թնկից շատերին կծում է օձը, և շատ նեղութիւն ու անհանգստութիւն է պատճառում նրանց:

31. Օձի կծած մարդոյ գոյնը կթռչի, կդեղնի, կմրսացնէ և կդողացնէ. սառը քրաինք կ՛գայ վրէն, սիրտը կնեղանայ և մեղմադճոտութիւն (սևդայ) կ՛գայ վրէն՝ անհանգիստ կլինի, բերանիցը կփոխէ, սիրտը կդողայ և կթրթռայ և եթէ շուտով օգնութիւն չեն հասնիլ, խեղճ հիւանդը կեանքից էլ կզրկուի:

52. Պէտք է աշխատիլ շուտով թոյնի փնասակար զօրու թիւնը քշացնել. ուստի և կծած տեղը գաղէ՛ տաք երկաթով. կամ կոտոշ քաշէ՛, յետոյ արծիլիով խորը թլատէ՛, և կէս թուն- զի ջրի մէջ հինգ մնխալ անուշադր, կամ սոլ խառնէ՛, որ լաւ հաղուի, և նրանով շուտ շուտ լուս, որ շուտով թարախ բռնէ և խտակուի: Յետոյ մինչևի քսան օր մհլամ՝ պէտք է զննս վրէն և բանացնենս (տնս համար 82.) որ լաւ խտակուի: Քայց էս մհլամի մէջը պէտք է լինի խառնած կէս մնխալ ճեծած խարտնադեղ (սպանիոյ ճանճ), կամ ճեծած սև սղպիղ:

53. Առհասարակ փորձով հաստատած է ձիթենեոյ իւզի օգտակարութիւնը փնասակար թոյնը կորելլու համար. վասնորոյ հարկաւոր է օրը չորս անգամ մէկ մէկ գդալ խմացնել և ուր որ ձիթենեոյ իւղը չ'գտնուի. կուռահատի նոր հանած ձէթն էլ կարող են գործ ածել, և կծած տեղի չորս կողմը տաք ձիթով կամաց տորթեն, կամ քսեն, շատ օգուտ կբերէ: Առաւել լաւ կլինի, եթէ օրը երեք անգամ քսեն նաև բոլոր մարմնոյն գափուրի ձէթ: Խմելու պէտք է տան օրը երեք անգամ մէկ մէկ սիսեռի չափ քափուր և վրէն խմացնեն կակղւոյ կամ թանդրվենեոյ չայ և պատրաստ սրահն տաքացնող խմիչքից և ուտելիքից: Եթէ ամբողջութիւն ունենայ պէտք է հողնայ տալ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ձրալսխութեան, կամ կատաղած շան կծածի վրայ, *

54. Փորձով հաստատած է կատաղած շան, կամ գայլի կամ ուրիշ գաղանի կծելուց մարդուս էլ պատահումէ միև

*) Կատաղած շունը ուշքը կորցնում է, ախորժակ չէ ունենում, ջրից և ամեն սպաղուս բաներից վտխում է. զղուում և տարակուսածի ոչև ման գալիս, պոչը և անկաջները քաշ թողած, բերանիցը շողինք (փսխնք) վազում է, աչքերը արիւնով լքցուում, և հիւանդութիւնը քանի որ սաստկանում է, սպորտում է հով և մութ տեղը բացց էլի չէ հանդատանում. իսկոյն վերէ թռչում վախեցածի պէս շտապով վազում է և էս ժամանակին շափազանց սաստկանում է կատաղութիւնը, ով հանդիպի վրայ է թռչում և կծում: Եան կատաղութիւնը պատահում է ամառուան սաստիկ տաք օրերումը: Երբ շունը կծէ

նոյն ցաւը և էն ժամանակը ջրից և ամէն տեսակ հեղանմութից հրաժարում է ու ինքն էլ կատարում:

55. Էս հիւանդութիւնը երկու եղանակ է փոփոխուում. նախ՝ կծած տեղը ուռչում է, կարմրում, ցաւում և սաստիկ տաքութիւն. նեղութիւն և անհանդստութիւն տալիս քնում է անհանգիստ և տեսնում է ահռելի երազներ, և առանձնութիւն է ուզում:

56. Յետոյ ջրից և ամենայն տեսակ պսոզուն բաներից զզուանք է զգում. որ ոչ միայն չէ ուզում խմել, այլև մինչև անգամ չի կամենում վրէն մտիկ տալ, և երբ տեսնէ սաստիկ կ'զողայ և կ'վախենայ և տեսնը անգամ ընելը սարսօտ փանք է բերում. վերջը կ'զայ վրէն սաստիկ տաքութիւն, անդամները կ'թմրի և երբեմն էլ մահ կ'պատճառէ:

57. Սկիզբը, քանի որ թոյնը միմիայն կծած տեղումն է, պէտք է շտապին զեղ անել առանց միջոց տալու, որ չտարածուի: Ածելով խորը թլւտն կծած տեղը և կոտոշ կայնեն, բաւական արիւն հանեն և կարած տեղը բարութ ամեն, և կրակ տան, կամ լուանան ջրումը հալած անուշադրով, կամ սաստիկ աղաջրով և կամ պարզ ջրով: Տաքացրած երկաթով պաղեն էլ շատ լաւ է: Երբ վերքը թարախ բռնէ, թոյնը հանելու համար պէտք է մինչևի մէկ ամիս 82 համարաւ մըհլամը գործ ածել, մէջը խառնելով քիչ խարանագեղ, կամ ծեծած պղպեղ:

58. Մինչևի վերքի թարախ բռնելը, որպէս զի չ'պատահի էն երկիւղալի փոփոխութիւնը, որ գրած է 55 և 56 յօդուածումը, պէտք է տաննեղու օր կամ աւելի 92 համարաւ զեղը առաւօտ երեկոյ խմացնել թանթրվնոյ կամ երիցուկի և կամ կակղոյ չայի հետ: Էս գեղորայքը կարեն օյն'լ կա-

մարդուս և ւնի կասկած նորա կատարած լինելուն վրայ, իսկոյն պիտի բժշկի դեմն, որ և երբ վրայէ թէ կատարէ, նրա կծած կենդանիքը իսկոյն սպանեն և խորը թաղեն, չատ տեղ ոտխորթիւն տնին, որ երբ անձանթ շունը մէկին կծէ, առանց հարցուփորձի զեղ կընդունին: Էս տեսակ վարտիլը առողջ դատողութեան ընդդէմէ: Իթէ ստոյգ կատարի շունը զիպի մարդուս, կամ շողինքը քովէ շորերին, թո՛ղ շորերը գեանումը թաղէ, իսկ իրան օշինջ զեղ չէ հարկատու բայց եթէ սկսէք ման զիպի, այն ժամանակը իսկոյն պէտք է զեղ ընդունէ, մանաւանդ եթէ վերոյիշեա նշանները շան վրայ նկատուին.

տաղելուց առաջ: Երբ ժամանակ կատարելու հաստատ նը-
շաններ երևին, էն ժամանակը համարեա՛ թէ յոյս չ'կայ օդ-
նելու: մանաւանդ առանց հմուտ բժշկի: Այս պատահմունքի
համար գրում են անուանի բժշկները զանազան փորձած ղեղեր:*

*) Պ. Ղ. ինն և Տուրքինեզ երեւելի բժիշկները և Ե. Պետերբուրգի Վիրարու-
մական Ծրագիրը միարան վկայում են, թէ շատ օգտակար է ընդդէմ կա-
տարած շան կծածին Հոլանտիոյ խոտի տակոնին, օգոստոսի մէջ քաղած, լաւ լուս-
ցած և չորացրած շուքում: Էս խոտի տակոնին սնմէկ հաս, և և՛ մէկ փոքր լինի,
երկու, կամ երեք հատ. ձեռք, փոշի արած նոյնպէս սնմէկ կտոր հաց, կարագ
քա՛ն և վրէն ցանէ պատրաստած փոշին և տուր հիւանդին, որ ուտէ: Այսպէս
երկու, կամ երեք անգամ կրկնելը բաւական է թոյնը ոչնչացնելու համար, ինչքան
կողէ ցաւը սաստիկ լինի, նաեւ թէ որ հիւանդը ջրից վախենալու և կատա-
ղած լինելու աստիճանում լինի: Էս տակոնին նոյնպէս սոյն կրանակաւ գործածե-
լով օղնում է կատարած շան կծած անասուններին էլ: Մոսկովայի «Вѣдомости»
գրագիրը 1818 ամի Յունվարի 25-ին հրատարակած է, թէ Արցածին խոտը
ունի միեւնոյն զօրութիւնը, միայն կատարելուց առաջ և ցաւը նոր սկսելիս:
Պետք է ձողովել, քանի որ դեռ ձողիկը կոկոն է, չորացնել ու մէկ բուռը եփ
տալ երկու բաժակ ջրումը էնքան, մինչև որ ձեռք մէկ բաժակ, քա՛նը և
խմացնել առատ և երկուայ: Այսպէս անելու է մէկ քանի օր շարունակաբար:՝

Բժշկական Արտարանութեան Բաւարանում Յովհաննէս Զիդլիրս Գօքտօրի
շինած և 1860 թուին տպած **Медицинский Терапевтический Лексиконъ**

Доктора Югана Зигерта) 324 երևումն գրած է, թէ մէկ խոտացի ազ-
նուական կին, անունը Բերթա, երկար ժամանակ կատարի շանից, գայլից, անից,
կարծից և սարդից կծած հիւանդներին ղեկ անելով մեծ անուն է ստանում, և և՛
իրա հնարքը պահում է ծածուկ: Ես ունենում է Ֆիլիպ անունով մէկ բարեկամ,
վերջապէս սրանէ յայտնում: Սա էլ գործ է անում էն հնարքը և շատ յա-
ջազում է: Երանուկ պահած հնարքը այս և. սն կշիւր առաջիտուր ուրբը լայն կիկո-
տը խոտակէ, կաշին և միւր քերթէ, և ծուծը մէջը թոյլ, վրէն շաղալած կա-
ծեփէ, դիր փոռումը, էնքան կենայ, մինչև որ միջի ծուծը և եղը կտուր, իսկ
սկստը լաւ ճերմակի, միայն պէտքէ զգուշ կենայ, որ սկստը շատ չը կշիւր և
գործի չդառնայ: Յետոյ փէջիցը հանրը և վրէն ձեկած կատուը դէր բաց օ-
ղումը, մինչև լաւ ստիւր յետոյ կաւը փշրէ, խոտակէ, կտուրէ և պահիր փոր-
ձելու համար վեր կալ մէկ կտոր կրած սկստից և լեղուից կայցրու, և՛ մէ
պինդ կպաւ, հասկացիր, որ լաւ է պատրաստուել: Եթէ կատարի շնից՝
գայլից, անից, կարծից, սարդից (*Tarantula*) կծած ըլի՝ սքափն, իրեան մէկ
սուր ձեքաւոր զանակով կծած տեղը լենացրու, և ձեռքով շորս կողմը հուփ
տուր, որ արիւն դուրս գայ. քայտախով լուս և յետոյ էն պատրաստած սկստից
մէկ կտոր կպտուս վրէն, իսկոյն պինդ կրկուրի և ձեռքով կընանէ վերքից թոյնը:՝
Մի քանի բուստից յետոյ պէտք է պակել և կայցնել տրիշ կտոր: Առաջուան
կայցրած կտորը կարելի է դնել մի քանի բուստ մառունի մէջ, յետոյ հանել, ցա-
նի մաս: Յետոյ պէտք է կծածի շորս կողմը դնել խարանայեղ, ինչպէս ասած է
109 համարումը և էսպէս գործողութիւնը վերջանում է: Ֆիլիպը ասում է, թէ
փորձը յոյց տակեց, որ էս հնարքը կատարի շան կծած մարդուն բուրդովին ա-
ղատում է:

Կատարի շան կծածի համար տես նաև Վրանէկ Հայր Սէխարճի ամսագրումը,
1860 թուի, 319 երևումը:

Գործըս հոտից բռնուածի վրայ :

59. Հասարակ ժողովրդեան մէջ շատ է պատահում գործը-
լու կամ վառարանի հոտից զլիւի բռնուելը, որովհետեւ ծրխ-
նելոյցը (Կրծն , մուխը անց կենալու ճանապարհը) ծած-
կում են շուտով և չեն համբերում . որ փէտը լաւ էրուի . կամ
չ'գոյխրած (լաւ չաղ չէլած) գործլիններս են բերում . էս փոր-
ձանքի առաջը աննելու համար պէտք է զգուշանալ յիշեալ
պատճառներից :

60. Գործըս . կամ վառարանի հոտից բռնուողի զլու-
խը կ'ծանրանայ և սաստիկ կ'ցաւի . սիրտը կ'ղողայ . դը-
լուխը կ'սկսի պտուտ գալ . աչքերը կ'մթնի . կշփոթուի և
սիրտը կերթայ և թէ շուտ օգնութիւն չ'հասնին . մինչև ան-
գամ մահ էլ կ'պատահի :

61. Էս փորձանքը պատահելիս խկոյն պէտք է զուրս տա-
նին . կամ տեղափոխեն մէկ ուրիշ օթախ . շուտ շուտ հոտ քաշել
տան քացախ . կամ անուշադրի ողի . կամ քացախով շաղախած
մանանիս . շուտ շուտ խմայնեն սառը ջուր . քիչ քացախով .
կամ լիմոնի ջրով . կամ նոան քամոքսով խառնած . զլիւին
ձիւն . կամ սառուց քսնն . կամ սառը ջուր և քացախ խառ-
նած և քաթանը մէջ դրջած զլիւին . կամ ճակատին դնեն . որ
և քանի տաքանայ . փոխեն . մինչև ի ուշքի գայ հիւանդը :

62. Եթէ սաստիկ սիրտը գնում լինի . էնպէս՝ որ ամենեկին
ուշք չունենայ . էն ժամանակը պէտք է զուրս տանին . շորե-
րը հանեն և պառկացնեն որ և իցէ փռուածքի վրէն . և սառը
ջրումը . կամ քացախումը թաց արած մահուաի կտորով .
կամ շաղով շիկն բոլոր մարմինը . առաւել ձեռքերը . ոտնե-
րը և կուրծքը : Բթի առաջը բռնեն քացախ . կամ անու-
շադրի ողի . կամ անանուխ քացախով շաղախած . և հետն էլ
հաւի փետուրով խուտուտ ածեն բերանը : Եթէ էս հնարք-
ները ոչինչ օգնութիւն չանեն . էն ժամանակը կռնիքը բաւա-
կանաչափ արիւն թողնեն և դրեխ տան էնպէս . ինչպէս զը-
րուածէ 20 կամ 21 համարումը . կամ մատի հաստութեամբ
սապոն . ձէթ քսած վրէն . նստելու տեղիցը ներս տան : Եթէ

էս դեղորէիւք էլ ոչինչ օղնութիւն չլինի, ևն ժամանակը հարկաւոր է բժիշկ կանչել: Մինչևի յատուկ մահի նշաններ չըլելն չ'պէտք է թաղել:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Քոտի վրայ.

63. Քոս ևն ասում մարմնոյ վերայ գուրս տուած մանր խոցերու պէս կոծիծներին, որոնք սխուժեն բոր գալ, մանաւանդ ևն ժամանակը, երբ մարմինը տաքանում է, կամ շորում և կամ քրտնում:

64. Քոտաուկը առաւելապէս նրանց է պատահում, որոնք խտակ չեն ապրում. զորօրինակ՝ շորերը ուշ ուշ են փոխում, տունը խտակ չեն պահում և գործ են անում ֆեստուած կերակուր, այսինքն՝ հոտած կամ փթած ուտելիք և խմելիք: Էս հիւանդութիւնն փոխադրական է. սկիզբը լուսէքնկնում ձեռքի մատների մէջ տեղը, յետոյ ոտներին, ծնկներին ներքև, ևս և ուրիշ տեղերումը, բացի երեսահարքից:

65. Էս հիւանդութիւնից ազատուելու համար պէտք է օրը երեք անգամ 93 համարի դեղը տան և առաւետ ու երկոյնի տեղ որ բոսը գուրս տուած է, լուանան էփած օշինդրի, կամ թրթնջուկի ջրով: Բորք անուշադր, կամ աղ մէջը խառնած. կամ լուանան ծծումը խառնած ջրով (տես համար 94):

66. Քոտը երբ ծրծումըով բժշկում ըլիս, թէ խմացնելով և թէ քսելով, պէտք է շաբաթը մէկ անգամ տաս ստամբար և աղիքները խտակելու դեղ. համարաւ 5. կամ 7. և խմացնես օրը երեք անգամ երկու երկու բաժակ, 50 համարաւ դեղից:

67. Հիւանդը պէտք է լինի շատ խտակ, շորերը շուտ շուտ փոխէ, ամէն օր գնայ բաղնիս, կամ տանը տաք ջրով լեղանայ և եթէ եզանակը լաւ լինի, գուրս գնայ կամաց կամաց ժուռ գալու: Հիւանդի կացած տեղը պէտք է լինի շատ մաքուր, ուտելիքը լինի կաթը, թարմ բանջարեղէն, բիշ կարագով. կամ լաւ ձիթով պատրաստած: Աղի, թթու, և կծու բաներից և առհասարակ ամէն տեսակ թունդ խմիչքից և սրանց նմաններից պատրաստ կենայ:

Քթիցը արիւն զնալու վրայ:

68. Քթից արիւն զնալը պատահում է լիքը արիւնի տէր մարդիկներին, կամ բորբորում, մանաւանդ սուրափանդ (սքորքութ), վատ ուժ և փթած տենդ ունեցողներին:

69. Շատ արիւնի տէր մարդկանց, կամ տաքութիւն ունեցողներին համար քթից չափաւոր արիւն զնալը օգտակար է. բայց սուրաւանդ հիւանդութիւն, կամ փթած տենդ ունեցողներու համար շատ փնասակար է. պատճառը՝ որ շատ կը նուազայնէ և միեւնոյն ժամանակումը հիւանդի ռանդը կ'իժռէ, երեսը կ'զկնի և շուտ շուտ սիրտը կ'իժուլանայ, ոսկերը և ձեռներն կ'սառչին և բազկի երակը կ'զարնէ թոյլ: Կս նշաններից հասկացուում է, որ հիւանդը նեղ դրութեան մէջ է:

70. Քթի արիւնը չէ հարկաւոր աշխատիլ շուտով կրտրելու. եթէ արեան շատութիւնիցն է պատահել, կամ սաստիկ տաքութեան միջոցին. բայց թէ որ շատ զնայ արիւնը և նուազայնէ, այն ժամանակը արիւնը կտրելու համար շուտ շուտ քսէ սառը ջուր, կամ սառուց դիր ճակատին, շինին զլիսին, և ծածուկ անդամին: Ար սինչից որ զնում է արիւնը, կոխէ մէջը քրքրած քաթան, կամ արէթ, քացախումը դըրջած: Մախտազ անունով հայ բժիշկը դրում է. առ երեք մսխալ պողլից, ծեծէ, չորս փնջան սաստիկ սառը ջրումը հալէ, շորը մէջը թաց արս, զիր ճակատին. քանի որ տաքանայ նորէն փոխէ, մինչև որ կտրուի քթի արիւնը: Եթէ փորումը կապ լինի, տուր լու ալիբուխարու, կամ սև ճանձուրի ջուր, երկու փնջան: Բժշկարանիս վերջին մասումը, ինչ տեղ զանազան օգտակար խրատներ են դրուած, կ'տեսնես և քթի տրիւնը կտրելու դեղ:

Ակռեքացաւ վրայ:

71. Ակռեքացաւը պատահում է տեսակ տեսակ պատճառներից, առաւել մրսելուց, կամ ակռեքների փնասուելուց, կամ

ակռէքների կշտին ժողոված փաստակար մաղասից :

72. Անաստակար մաղասից և ցրտից յառաջացած ակռէքացաւը չի անց կենալ, մինչև չբարատուին նրա պատճառները. ուստի որ կողմի ակռէքը ցաւում է, պէտք է, էն կողմի թշի վերայ դնեն փոքր պարկով տաք երիցուկի, կամ թանթրովնեոյ ծաղիկ, կամ խոտի կրճճնք, փոքր ինչ քափուր խառնած, որ և պէտք է շուտ շուտ փոխեն. քանի որ սառի : Նոյնպէս բերանը շուտ շուտ ողողել տան թանթրովնու, կամ երիցուկի ծաղիկից եփ տուած չայով, մէջը քելչ անուշադր, կամ շնչորակ խառնած :

73. Եթէ վերայիշեալ դեղորայքը չ'օգնեն և հետզհետէ ցաւը աւելանայ և դողի նշաններ լուս ընկնի, էն ժամանակը, ինչ տեղ որ ցաւում է, էն կողմի ըտտերքին կպցրու մէկ կամ երկու տըզրուկ : Տղբուկը կպցնելուց յառաջ ոտները դիր տաք ջրումը, և երկու էրաթաթի մէջ տեղումը կպցրու թթու խմոր, մանանխով պատրաստած, (տես համար 95.) և թո՛ղ էնքան, մինչև հիւանդը էն տեղը զգայ կակիծ. յետոյ վեր սու և տեղը քսէ ձիթնեոյ իւղ : Երբ ժամանակ ակռէքի մօտ ժողոված մաղասից լուս ընկնի ըտտերքից մօտիկ ուռուցք, դիր վըրէն թղի չիր, կաթնով էփած, կամ շուտ շուտ մեղր քսէ, մինչև հասնի և պատուռի ուռուցքը և բերանն էլ ողողել տուր անանուխի, կամ եղիսպակի, կամ երիցուկի էփած ջրով, փոքր ինչ քացախ և մեղր խառնած :

74. Ակռէքացաւը եթէ ակռէքի փնասուելուց, կամ փրթելուց յառաջացել է, պէտք է չիրուխ քաշել, կամ բերանը շուտ շուտ ողողել կակղւոյ, կամ երիցուկի, և կամ վայրի կակաչի եփած ջրով : Երբ սաստիկ է ցաւը, էն ժամանակը սու խակ խաշխաշ՝ չորս մնխալ, բաւականաչափ ջրումը եփ տուր և ջրովը ողողէ բերանը, Եթէ ակռէքը փթած լինի, բամբակի, կամ քրքրած քաթանի վերայ քսէ կուպր և օրը երեք անգամ դիր ակռէքի վերայ : Ամիրդովլաթ Հայբօիշկը խորհուրդ է տալիս, թէ սպիտակ թութի և ընկուղի ծառի տակու կեղևը մանր կտտորէ, ջրումը եփ տուր, և բերանը նրանով ողողէ. կամ վայրի թարխունի արմատը մէկ ոլոռնաչափ կտրէ, և դիր շաւած ակռէքի վերայ և թո՛ղ բա-

ւահան ժամանակի Եթէ յիշեալ զեղերից ոչ մէկն էլ չօգնէ,
էն ժամանակը վարժ մարդու ահաւերը հասնել տուր:

75. Ահաւերացաւից պահպանելու շատ գովական միջոցն
այս է առհասարակ: Ա՛ռ թուլ արագ՝ մէկ չարէք, մէջը քերէ՛
երեք հատ կծու իճի տակաւի, կամ մէջն ածա՛ մէկ ստիլ ծե-
ծած մանանեխ, և պահէ՛ տասն օր, յետոյ քամէ՛ և նրա ջրով
բերանը ողողէ՛ օրը երկու անգամ, մանաւանդ երբ անձրեւա-
յին և թաց եղանակ լինի, նոյնպէս և ահաւերների վրէն քո՛ւ,
96, կամ 97, համարաւ զեղը:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Աչքացաւի վրայ.

76. Թէ որ աչքը բիչ կամ շատ կարմրում է, կոպե-
րը ուռչում և ցաւում, և սկսում է շարունակ արտասուք
գնալ, կոչուում է բորբոքային աչքացաւ:

77. Աչքացաւ բնկնողը սկզբիցը մինչև լաւանալը աչքե-
րումը զգում է տաքութիւն, քոր դալ, ցաւիլ և ծանրանալ,
այնպէ՛ս, որ կարծում է թէ աչքումը մէկ բան է բնկել. եր-
բեմն էլ աչքացաւի հետ ի միասին գալիս է գլխացաւ և դող:

78. Ի՞ստ անտակ աչքի բորբոքումը պատահում է երբեմն
ներքին և երբեմն արտաքին պատճառներից: Արտաքին պատ-
ճառներն են ամառուան շարունակ շոքից պատահած օդի չո-
րութիւնը, մուխը, կրի հոտը, փոշին (թողը) և աչքումը բան
բնկնիլը: Ներքին պատճառներն են՝ արեան շտուրթիւնը,
աղիքների և ստամոքսի անմաքրութիւնը, ներսնային փնասա-
կար մաղասի և կեղտի դէպի աչքերը քաշուիլը, ևս առաւել
քոսը, ծաղիլի, սուրավանդի և գաղղիական ախտի հիւանդու-
թիւնները և ուրիշ սրանց նման պատահմունքները:

79. Արտաքին պատճառներից առաջացած աչքացաւու-
թիւնը լաւացնելու համար սկզբումը պէտք է հոգս տանին հե-
ռու պահել հիւանդին այն ամէն պատճառներից, որոնք աչ-
քացաւը զօրացնում են, ապա խտակ քաթանի կտոր զրջնն
սառը ջրումը, կամ 98 համարաւ զեղումը, գնեն աչքերի

վերայ և փոխեն շուտ շուտ, քանի որ ցամաքի: Այս հնարքը գործ դնելով շուտ անց կ'իկնայ աչքացաւը, թէ որ առանց սաստիկ ցաւի է և առանց բորբոքումի:

80. Եթէ աչքացաւի հետ աչքերը չափազանց կարմրել է, բորբոքում է և շատ ցաւում, գողցնելով և զլիսացառով և հիււանդի արիւնն էլ շատ է, կոնիցը պէտք է բաւական արիւն թողնեն, և առաւօտ երեկոյ տան կէս կէս մսխտլ շնչբորակ, քիչ ջրումը հալած: Էսպէս կրկնել պէտք է, մինչևի գողը և աչքացաւը անց կենայ: Բայց եթէ աչքերը ցաւողը անզօր է, արիւն թողնելու տեղ պէտք է քներակների *, կամ ականջի կանէն կպցնեն երեք երեք տարուկ և յետոյ աչքերի վերայ զննն դեղ համարաւ 98, կամ ձուի սիպտակուց, քիչ պաղլեղով խառնած, ինչպէս զրած է 99 համարումը, և փոխեն էն ժամանակը, երբ ցամաքի:

81. Եթէ աչքումը բան ընկնի և կարմրութիւնը էնդուրից առաջանայ, պէտք է աչքերը խուփ անել և թաշկինակով (աղլուխ) կտպել բաւական ժամանակ. աչքերումը ընկած բանը ինքն իրան դուրս կ'զայ արտասուների հետ:

82. Դրսևի պատճառներից պատահած աչքացաւը կ'լաւանայ էս տեղ յիշուած հնարքներով. եթէ սրտացաւութեամբ խնամք տանին, միայն ներքին պատճառներից յառաջացած աչքի բորբոքումը չի լուանալ մէնակ դրսի դեղերով, բժիշկ կանչել կ'հարկաւորի: Աչքացաւը ընկնողը պէտք է ընտրէ կերակրելիքներից թեթեւ հեշտ մարսելու ուտելիք և զգուշանայ տաքացնող ուտելիքից և խմիչքից: Եթէ աչքացաւի հետ ունենայ տաքութիւն, կամ փորակապութիւն, քնելուց առաջ պէտք է ընդունի 100 համարաւ դեղը:

Գ. Ա. Ռ. Ի. Թ. Ը.

Արանջացաւի վրայ:

83. Արանջացաւը զպիս է սաստիկ ցաւացնելով. հետզհետէ ցաւը աւելանում է և լինում անտանելի: Արանջացաւի հետ

* Գլ. պի դրսի կողմը, ինչտեղ ունըր վերջանում է, մէ մտածաշարի հետո, մէկ փոքր երակ միջոտ արթում է. սա կոչվում է քներակ:

լուս են ընկնում դողի նշաններ, շարունակ տաքութիւն, գըլ-
խացաւ. երեսի կարմրիլ և սրտի մասնաւոր նեղանալ. բազկի
երակը գցում է սկզբից թոյլ և շուտ շուտ, և երբ ցաւը եր-
կարում է, գցում է պինդ և լիքը. շատ անգամ էլ պատահում
է, որ ականջումը թարախ է ժողովում, իրան իրան բաց է
ըլում և դուրս գալիս և նրանով ցաւը, կամ բողբոլին կը-
տրուում է, կամ քչանում:

34. Ականջացաւ յառաջանում է մրսելուց, երբ զլիսա-
բաց կանգնում են սառն քամու զխմաց, կամ զլուխը քրտնած
ցրտումը գդակը վեր են առնում, կամ տաք ջրումը լիզա-
նալուց յետոյ զլուխը մրսացնում են, նոյնպէս զլիսին ծանր
բան զիդշելուց, կամ շախազանց արխնի շատութենից, կամ
ականջումը ճիճու մանելուց:

35. Ականջացաւի դեղ անել պէտք է այսպէս: Տճւր
լուծելու դեղ համարաւ 4, կամ 5, կամ 6. ամէն զիշեր ոտ-
ները տաք ջրումը դիր և խմացրու դեղ, համարաւ 17 և ական-
ջի վերայ դիր կաթնով էփած 34 համարաւ կիսագոլ դեղը:
Նոյնպէս շատ օգուտ է երիիցուկը կաթնով եփել, ամէլ տաք
տաք մէկ նեղաբերան ամանում և բերանը դնել ականջի մէջը,
որ դողը շին (բուղը) մանէ ականջը: Օրը չորս. կամ հինգ
անգամ կրկնելու է այս հնարքը: Զօրաւոր դեղ է ականջա-
ցաւի համար հետեւեալ հնարքը: Ա՛ն դաւը նուշի իւղ մէկ
մսխալ, մէկ սիսեռնաչափ քափուր քերէ մէջը, քիչ տաքացնուր
և օրը երեք անգամ կաթացրու ականջումը երկերկու պուտ:
Քափուրի ձէթն էլ մէկնակ բաւական օդնում է այս կերպիւր գործ
ածելով:

36. Եթէ վերոյիշեալ դեղերից ոչ մէկն չօգնէ և ցաւը մը-
նայ մի և նոյն դրութեան մէջ, էն ժամանակը առ դեղ հա-
մարաւ 103, կէս շալու գդալ. քիչ տաքացրու և ամս ական-
ջումը. մէկ կտոր զգած բամբակ դիր մէջը, խտոյն անց կը
կենայ, որ շատ անգամ փորցած է: Արա գործածելու ժա-
մանակը պէտք է կպցնես շինքին թթու հացի խմորի հետ
շաղաղած մանանխա ինչպէս գրած է 95 համարում:

37. Ականջումը թէ որ ճիճու է մտած, էն ժամանակը
ոչ մէկ դեղ օգուտ չի անել. միայն պէտք է աշխատիլ. որ դուրս

զայ: Եթէ սաստիկ ցաւելուց յետոյ ականջից թարախ զնայ, չբպէտք է աշխատել շուտ կտրելու, այլ պէտք է վարուիլ էսպէս: Ա՛ռ ականամո՞մ՝ մէկ ընկուզաշափ և քրքրած քաւ թան, ինչքան հարկաւուր տրորէ՛ միասին, պատրուզներ շինէ՛ և ներս տուր ականջումբ առաւօտ և երեկոյ և այսպէս շարունակէ՛, մինչև որ թարախը մաքրուի:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Կարմիր քամու վրայ.

88 Այն կարմրագոյն և փայլուն ուռուցքը, որոյ վերայ երբ հուր տաս մատով, տեղը կտիպտակի և խեղճն էլի կ'կարմրի, ասուում է կարմիր քամի: Սա թէպէտ լուս է ընկնում մարմնոյ ամէն տեղը, բայց առաւելապէս երեսհարբի վերայ: Ըսկտում է քթի ծայրից, կամ աչքերի կողկից և հետզհետէ տարածուում է դլխի ամէն կողմը, և երբեմն էլ մէկ տեղից փախչում է միւս տեղը. հետն էլ ունենում է տաքութիւն, ախորժակը կապում է և դմբբեցնում, շատ անգամ ուռած տեղը բշտում է և դեղին ջրով լքցուում:


89. Էս հիւանդութիւնը պատահում է արեան շատութենից, երկիւղից, նեղութենից, մրսելուց, բարկութենից, տաքացնող խմիչք և ուտելիք չափազանց դործ ածելուց, և ըստ մեծի մասին նրանց, որոնք ունին վէրք (եարայ) և մրսացնում են, կամ որոնց մարմինը էրուել է:

90. Էս հիւանդութիւնը բժշկելու համար պէտք է հետեւեալ եղանակաւ վարուիլ: Հիւանդութիւնը բռնուած օրից սկսած մինչև ի լաւանալը, պէտք է աշխատիս՝ միշտ քրտինք բերել, ամէն օր փորկեցը լուծել տաս, ուստի և ամէն առաւօտ և երեկոյ խումայրու քրտնքի չայ, զորօրինակ՝ եփ տուած կակղու, թանթրուենու, և երկոյուկի ջուրը, չայու պէս պատրաստած լուծելու համար ամէն օր, կամ երկու օրը մէկ անգամ տուր 4, կամ 5, կամ 6, համարաւ դեղը: Ուռուցքի վերայ ածա՛ երկու ժամը մէկ անգամ 104, կամ 105, կամ 106. համա-

* Ակնամոմ ասում են այն նրթին, որով մեղր սնանները ձմեռը վէթաքի ծաւր ձեփում են:

բաւ դեղը և մինչև ուռուցքի քաշուիլը տաքութիւնը հովանալու համար տ՛ուր 48 համարաւ դեղը : Եթէ հիւանդը լիքն արեան տէր լինի և ուռուցք դուրս էկած լինի երեսի վրայ, էն ժամանակը երկու էրաթաթի մէջ տեղիցը կպցրու տասնուհինգ հատ տղբուկ, կամ կոնիցը չափաւոր արիւն թ՛ող : Եթէ հիւանդը սկսի շատ նեղանալ և խելքը կորցնել, էն ժամանակը պէտք է խմացնել դեղ, համարաւ 1, քառորդ ժամը մէկ անգամ, երկերկու զթալ, մինչև որ լաւ փսխէ և էլ աշխատիս, որ ոչինչ ջրայի կամ թաց բան չդիպչի ուռուցքին, ամէն տեսակ խմիչքից և գրդաող (տաքացնող) ուտելիքից սպարաստ պահէ, միայն կարող ես ուտացնել հաւ, կամ վառեկ բրնձով կամ ձաւարով էփած :

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ



ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ.

Հարկատու խրատներ զեղացուց համար, արուն թող-
նելու, լուծողականի եւ փոխողականի վրայ եւ մէ-
քանի կանոններ առողջութիւնը պահպանելու համար:

ԳԼՈՒԽ Ա.

Արտաքին հիւանդութիւնից ազատ մնալու համար պէտք է պահպանել հետեւեալ կանոնները. Ա. Ամառը գետի, կամ աղբիւր-
ների ջրումը լեղանալ, և ձմեռը բաղնիսումը: Բ. Շորերը փոխել
զոնեան շարաթը մէկ անգամ: Գ. Արեան փորացաւութենից
պատրաստ մնալու համար չուտել խակ մրգեղէն (պըտուղ)
մանաւանդ շոք ժամանակը. Դ. Որպէս զի չ'պատահի
փղձկալ կամ գժուարաշնչութիւն, պէտք է օրը չորս անգամ
բաց անեն լուսամուտը, կամ դռները, մանաւանդ աշունքը և
ձմեռը. Ե. Բակը պէտք է պահեն խտակ. առաւօտները ա-
նասունքը և հաւերը կերակրելուց յետոյ պէտք է աւելնն: Զ.
Գործը հոտը զխաչելուց ազատ մնալու համար չ'պէտք է
ծածկեն ծխնելոյզը (բուխար), մինչևի կրակը լաւ նստի և
զգուշութեամբ մտիկ տան, որ ածխակոթ չ'լինի մնացած: Ը.
Յրաի տանելից զգուշանալու համար, երբ ցուրտ ժամանակ հար-
կաւորի դուրս տեղ գնալ, պէտք է ճրագու, կամ ձէթ քսն
քթին, երեսահարքին, ականջներին, ձեռի և ոտի մասներին
և էլ տաք հաքնութիւն: Ը. Կուրծքի խէթքից և փողացաւից պատ-
րաստ մնալու համար, եթէ անձրևիցը թաց ըլին, պէտք է
շուտ փոխեն շորերը, և թէ երկար ժամանակ թաց շորը
հագին է մնացել, հանեն շորերը և քսն բոլոր մարմնայ վերայ
հացի կամ հասարակ արաղ. տաք տաք չայ խմացնեն և թա-
զայ սոխ, կամ բողկ ուտացնեն շատ, որ արտաշնչութիւնը
բաց ըլի: Թ. Թոքի բորբոքումից, կամ բորբոքային տենդից ա-
զատ մնալու համար շոք օրերը, երբ մարմինը եւ ըլի գալիս,
մանաւանդ յանդումը (աշխատելուց և ձմեռը շատ բան

Հինգուց քրտինք բլի եկած, չ'պիտի խեղոյն սաստիկ սառք ջուք խմեն, այլ բլիչ քիչ միջոց տալով: Ժ. Գլխացուից, աչքի բորբորումից, ականջի վժըթացից ազատ մնալու համար արեւումը գլխորաց չ'պիտի աշխատին: ԺԱ. Սուրաւանդից (սքորբութ) ազատ մնալու համար չ'պիտի խմեն և ո՛չ կերակրումը բանացընեն երկար ժամանակ մէկտեղ կանգնած գրի ջուր, ուր գետ, կամ աղբիւր չ'լինի, խորը հորի ջուրը լաւ է: ԺԲ. Յը խտակելու համար պէտք է գիւղերումը շուկաների (քուչայ) երկու կողմն էլ տնկել կեչի կամ ուռի ծառեր, չորս, կամ վից քայլաչափ մէկը միւսից հեռու: ԺԳ. Խոնաւութենից (նամ), զողացնելուց և ջրզողութենից պատրաստ մնալու համար պէտք է փորեն առու տան և ծառերի բողորքը, մանտանդ էն տեղերումը, ուր բնակարանները փոս ընկած տեղ են շինած: ԺԴ. Փթած և տարափոխիկ տնեղից ազատ մնալու համար, էնտեղ, ինչ տեղ մեռել դրած լինի, չ'պէտք է կրակ վառեն. դուռը և լուսամուտը բաց պահեն, քանի որ մեռելը էնտեղ է: ԺԵ. Փրղձկալուց ազատ մնալու համար, եթէ երկար ժամանակով ծածկած գետնափոր տեղեր և հոր մանկ հարկաւորի, պէտք է առաջ մէջը յարդի ծղոտով (ղարման) կրակ տալ, որ թանձրացած օդը խտակուի և յետոյ մտնել: ԺԶ. Երկու հողիս կրճիկը փոր աւերելուց ազատ մնալու համար, չ'պիտի վեր կայնէ ծանր բան և չ'պիտի զուս թռչի որ և իցէ լէն տեղի և առուի վրով. ազատուելուց յետոյ, որպէս զի չ'ստանայ զաւակատան խէթը. և թուլութիւն, շուտով չ'պիտի աշխատանքի ձեռը տայ, մանաւանդ ծանր գործի, մինչև որ զօրութիւնը տեղը գայ: ԺԷ. Աղջկերքը առաջին անգամ կնիկ արմատի կարգը տեսնելիս, կանացի յաւերից ազատ մնալու համար, պէտք է զգուշանան սառը ջրով լուացուելուց և մրսելուց:

Գ. 1. Ուի Բ.

Արիւն թողնելու վրայ,

Շատերը կան, որ արիւն թողնելը համարում են ճար ամէն տեսակ հիւանդութեանց, անխախր որ և իցէ ակարութիւն պատահելիս արիւն են թողնում, որով փոխանակ օդնու-

Թիւն զանելու: շատ անգամ պատահում է, հիւանդութիւնը ծանրացնում են, կամ նոր տկարութիւն ևս աւելացնում առաջին ցաւի վերայ: Տխոտ երեւելի բժիշկը խորհուրդ է տալի միմիայն հետեւեալ դիպուածներումը արիւն թողնել: Ա. Ինչ ժամանակ յայտնի երեւում է, որ մէկը լիքն արեան տէր է և երակները ձգուում են և տաքում (ճիպտուում): Բ. Երբ մէկը ունենայ սաստիկ բորբոքում, կամ բորբոքային տենդ: Գ. Երբ երկիւղ լինի բորբոքում առաջանալու, զսրօրինակ՝ մեծ վէրք ստանալու, սաստիկ ջարդուելու, բարձր տեղից վէր ընկնելու և էլ երկուհոգիս կնկան չափազանց սաստիկ հազացանելու ժամանակներումը: Գ. Երբ չափազանց ցաւ, կամ խէթք շարունակուում լինի երկար: Ե. Եթէ հիւանդը զգում է մարմնումը յանկարծ եռ գալ և էնպէս կարծում է, թէ երակներ լի մէջ կէծ ջուր է ման գալիս: Զ. Եթէ մէկը ունենայ սաստիկ մարման ջուռն բոլոր մարմնոյ վերայ, որ և շուտ շուտ կրկնուում լինի էն ժամանակը, երբ մարմնը տաքանում է: Է. Եթէ անտօլոր արեան հոսում պատահի:

Չափազանց անօգուտ է և մանաւանդ մեծ վնաս արիւն թողնելը հետեւեալ նշանները լուս ընկած ժամանակը: Ա. Տարիքը առածների և առաջին անգամ յղացած կանանց համար: Բ. Նրանց, որոնք որ բնականաբար տկար կազմոււացքի տէր են, կամ երկար հիւանդութենից և այլ պատճառից նիհարացել են: Գ. Ռանգը թուած արձձագոյն մարդկանց, որոնց մաջէն զցում է մանր (նազ), մեղմը, անուժ, և միջահատ: Գ. Որոնց ձեռները և ոտները շուտ շուտ թուլանում է և միսը հալուում: Ե. Որոնք երկար ժամանակ քիչ ուտելու ստիպուած են, կամ գործ են ածում քիչ անունդ տուող կերակուրներ, և իրանք նուազած են տեսակ տեսակ հոսմունքից: Զ. Որոնց ստամոքսը խանգարած է և մարսողութիւնը տկար և բնականաբար արիւնը չէ աւելանում: Է. Նրանց, որոնք սովորականէ զուրս լուծում են արիւն, տեսակ տեսակ պատճառներից, կամ ունին փորբացութիւն, կամ միզահոսում (շուտ շուտ շուտ) կամ փսխում են, կամ շատ քրտնում: Ը. Եթէ դք երկար ժամանակ հիւանդ է եղել և վատուժ, փորումը ուռուցնքեր, կամ խուլիբ ունի կամ փիծեկը սոււել է, կոշտացել և ար-

զելումէ արեան շրջան անելուն: Թ. Եթէ որ ունի կանացի
Հիւանդութիւն, կամ զաւակատան ցաւեր: Ժ. Երբ որքան զօրու-
թիւնը նուազած ըլի անկարգ մերձադուրութենից կանանց հետ,
կամ մարմնաշարժութենից, կամ օւրիշ պատահմունքից: ԺԱ.
Երբ արիւնը ըլումէ նոսր և զեղնադոյն: ԺԲ. Եթէ որ ունի
նեխած տենդ: ԺԳ. Եթէ որ մարմնոյ վերայ ունի մանր դուրս
տուած:

Երբ հարկը պահանջումէ արիւն թողնել, չէ պէտք թող-
նել աւելի քան 50-ից ց 100 մսխալ.— լաւ է քիչ քիչ, երկու և
երեք անգամ թողնել, քան միանգամ և շատ, որով հիւանդը
ուժից կընկնի:

Եթէ շլինի արիւն թողնող, և հարկը պահանջում լինի,
կարեն կպցնել տղրուկ տանուհինգ կամ քսան հատ շնքին,
մէջքին, կամ ինչ տեղ հարկաւոր է: Հիւանդի կազմուածքին
մտիկ տալով, եթէ արիւնը շատ է, կարելի է շատ թողնել:
Վատ ուժ մարդից պէտք է թողնել արիւնը թեկն ընկած:

Եթէ արիւն առնելու ժամանակը պատահի սրտի գնալ,
խսկոյն թող բաց անեն լուսամուտը և դուռը, որ տան միջի օդը
նորոգուի, և ձեռք թաց անեն սառը ջրումը, սրսկն երեսի վը-
րայ, բացալս հոտ քաշել տան, սառը ջրումը քիչ քիչ քացալս
կաթացրած, խմացնեն և յետ պառկացնեն:

ԳՆՈՒԽ Գ.

Լուծողական ընդունելու վրայ:

Լուծողական ընդունելը օգտակար է միտիայն հեռեկալ պա-
տահմունքներում: Ա. Երբ մէկը փորը ունի վքնած և ծանր:
Բ. Ինչ ժամանակ զալիս լինի շուտ շուտ և երկարատե փո-
րակապութիւն: Գ. Երբ մէկը ունենայ երիկամունքի (պոլոճիկ)
ցաւ ու մանգալու ժամանակը թուում ըլի, թէ ծնկները
ծանրացած է: Դ. Թէ որ զգումէ թուլութիւն և անհասկըս-
տութիւն, և թէ որ ըլումէ տրտում և տխուր: Ե. Երբ փորումը
ունենայ խէթք և իրան սովորական կարգին չլի բանեցնելիս, այս-
ինքն՝ երբեմն շատ և նոսր, և երբեմն պինդ: Զ. Երբ կերածը
որտին ծանրանում է և բիկացնում, կամ սիրտը խառնում:

Ընդհակառակն լուծողական դեղ ընդունելը փնտսակար է. Ա. երբ նորա տեղը հարկաւոր է տալ փսխողական, կամ քրտինք բերող դեղ: Բ. երբ մէկը երկար հիւանդութենից նոր ազատուել է: Գ. երբ բոլոր մարմինը ցամաք է և չափազանց տաք բորբոքում ունի, կամ սառտիկ տենդ: Դ. երբ բնութիւնը ինքն իրան աշխատում է դուրս փնէլ քրտինք, ամառային հոսմունք և այլն. նոյնպէս փնտսակար է լուծողական ընդունել մարմնոյ վերայ մանր խոցեր դուրս տալու: յօդուածացաւութեան, 1 և ոսնա- ութութեան 2. Ժամանակը: Ե. երբ ջըղերը կարգից դուրս վատու- Ժացած է: Զ. երբ փիծեղը ուռած է, կամ կոշտեր են գո- յացած փորումը. լուծելու դեղը ոչինչ օգուտ չի տալ. այլ ընդհակառակը կ'սաստկացնէ: Է. երբ զգում է ծանրութիւն սրտի գդալի կշտին և առամըքումը և ոչ թէ փորումը: Ըու- ծելու դեղը երբ գործ են ածում բորբոքային տենդի և բոր- բոքումի դէմ, պէտք է ընտրեն թեթեւ և հովացնող լուծո- ղական, օրինակ՝ չորացրած սև դամնն, ճանձուր, դամասի- գինւոյ աղ, կամ գինւոյ աղով կտրած կաթի շիճուկ (կրտ- բած կաթի ջուր,) աղը դրած վարունգի (խիար) ջուր, կամ թրթխջուկ, հաղարջ, խաշնդեղ, մանր չամիչ, ամէն տեսակ պատուան, մանաւանդ շնածանձի (գէնադերչակի) ձէթ, անդ- դիոյ աղ, գլաւբերեան աղ, մանանայ (սրխիշա), և սովորական կերակրումը գործածական աղ:

ՔԼՈՒԽ Դ.

Փսխողական ընդունելու համար

Շատերը անխոհմտութեամբ գործածելով փսխողականը, վը- նասում են իրանց: Փսխել տալը հարկաւոր է, երբ հիւանդի վերայ տեսնում են հետևեալ նշանները: Բ. երբ լեզուն և ակ- ուէքը կեղտոտ ընին և բխկալու ժամանակը քիչ հոս գալիս ըլի: Գ. երբ բխկալու պատճառը ստամոքսիցն է, փորը վընած է, պինդ է և ձգուած: Դ. եթէ ախորժակը կապուել է և հետ- դհետէ պակասում է, զգուում է ամէն տեսակ կերակրից և բեր- նի համը կորցրել է: Ե. եթէ առաւօտը անօթի օրցիւում է և

1 Բեյժատիպնու վազու, 2 Պտուպա:

սիրտը խառնում, նոյնպէս և ցերեկը, և պատճառը երկու-
 հոգսութենից չէ, կամ ուրիշ ուրիշ հիւանդութենից: Զ. Եթէ
 փսխում է դառը և վատ խորխ: Է. Եթէ գլուխը ցաւում է
 սաստիկ և լեզուն դեղին ունի: Ը. Եթէ շուշուր շատ դեղին է,
 ձեռները և ոտները մրսում է և ընկները կապտացել է: Թ. Եթէ
 աչքերի ձերմակուցը և մարմնոյ մորթը դեղնազոյն է: Երբեմն
 կարելի է կրկնել փսխողականը միւս օրն էլ, եթէ հարկաւոր
 համարուի:

Չդէտք է տալ փսխելու դեղ. Ա. Եթէ հիւանդը արիւ-
 նային կազմուածքի տէր է: Բ. Երբ բորբոքում ունի, կամ
 երբ սաստիկ բորբոքած է կուրծքը, թոքը, կամ ուրիշ տեղե-
 րը: Գ. Նոյնպէս փսխողական ընդունելուց պիտի զգուշանան
 նրանք, որոնք քթիցը շուտ շուտ արիւն է գնում, կամ ու-
 բոնք արիւն են թքում: Դ. Առաւել փնասակար է նրանց,
 որոնց պատահում է արիւնախտան փսխել: Ե. Երկու-հոգիս կա-
 նանց, մանաւանդ նրանց, որոնք ամային հոսմունքը շուտ շուտ
 և շատ շատ տեսնում են: Զ. Նրանց՝ որոնք սղէթափու-
 թիւն (աղափ) ունին ակուէքներումը և պրտումը: Է. Նրանց՝
 որոնք երկար հիւանդութենով թուլացել և նուազել են: Ը. Ու-
 բոնց բոլոր մարմինը չոր է, չափազանց տաքութիւն ունին, և
 սաստիկ տենդ: Թ. Երբ բնութեան ներդործկողը, ուրիշ օգ-
 տաւէտ հոսմունքներ զարթել են հիւանդի մէջ: Ժ. Եթէ մէ-
 կի ջղերի ուժը հասել է և ԺԱ. Նրանց, ում շլինքը կարծ
 է և փորը հաստ:

ԳԼՈՒԽ Ե.


Սուրճի (դահլէի) և Չայի դորձածութեան վրայ:

Եթէ բարակ քննուք սուրճի* ներդործութիւնը, էն ժամա-
 նակը կ'համոզուինք, որ լաւ է բոլորովին հրաժարուիլ նորա գործ

* Սուրճի դորձածելու ուղիւթիւնը առաջին անգամ Ալարիայումը սկսուեց:
 Ասում է պատմութիւնը, թէ՛ մէ քանի հովիւ Ալարիայ մէ անապատից դուրս քչե-
 ցին ուգոսմներին արածելու, որոնք սուրճի սերմը ուտելով, էն դիշերը մէնատա-
 նումը սկսեցին բզուել և շիթուիլ. անապատի կասալարի: Երբ հասկացաւ,
 թէ ուզուեաւ այսպիսի անհանգստութեան պատճառը սուրճ ուտելուցն է:

ածելուց որովհետև փորձով յայտնի ելած է որ շուտ շուտ և ամէն օր սուրճ գործ ածելուց յառաջանում է բոլոր մարմնոյ ցնցում, սրտի թրթռալ և ջերի անզօրութիւն. պակասացնում է տեսութիւնը. քչացնում է ցանկութիւնը, թանձրացնում է արիւնը և երբեմն էլ պատճառում է կաթուած*, քունը փախցընում և ախորժակը փակում: Այս պատճառաւ բժշկները և նրանք որոնք հասկանում են սուրճի այսպիսի վնասակար հետեւանքը, արգելում են նորա գործածութիւնը. ուստի նրանք որոնք հաստատուն սովորութիւն են արել սուրճի գործածութիւնը, լաւ կանեն, որ նրանումը խառնեն բոված ելերդի տակոի, կամ տակդին (զազար) կամ գարի (տես համար 107): Բժշկները սուրճը իրրեւ դեղ խմելու խորհուրդ են տալիս նրանց, որոնք նատուրական կեանք են վարում, անգործ, անշարժ և քնելով. գէր են մարմնով. և բնութեամբ թոյլ և աւելիկային: Շատ օրինակներ կան, որ սուրճը այլ և այլ կերպով գործածելով, գործօրինակ՝ հոգնայ տալով, նրա ջրումը լեղացնելով, առանց բովելու գործ ածելով և էլ ուրիշ դեղերի հետ խառնելով, օգնութիւն են ստացել հիւանդները, ինչպէս, լուսնոտք (թուլացկոտ), ջրգողի, սեւամաղձի (սեւդայ) փորաբացութեան, և ջերմի տէրերն և սրանց նման հիւանդութիւնք ունեցողներն:

Չայի համար կարելի է ասել, թէ շատ օգտաւէտ է, եթէ գործածուի իրրեւ դեղ, որովհետև շատ կօզնէ փորի հիւանդութիւն (ջերմ) ունեցողներին և ջրգողին, շեւք բաց անելով նոյնպէս դժուարաշնչութեան, սուրալանդի (սքորբուտ) սակոբացաւի և այլն: Բայց որովհետև այժմ ընդհանուր և ամէնօրեայ սովորութիւն է դառել վանորոյ էլ չէ ներգործում նրա օգտակար զօրութիւնը. ընդհակառակն՝ յառաջացնում է չափազանց վնաս և հիւանդութիւնք, որովհետև չորացնում է կուրծքը, տկարացնում է ստամոքսը և տանում է ուժը:




փորձելու համար թմրած և քնուկ հոշորակամներին սկսեց խմացնել սուրճ, որպէս զի դուարթեման և պիտիին: Էս ժամանակից սկսաւ սովորութիւն դառնալ սուրճի գործածութիւնը ողջ Արարիայումը և էնտեղից անցկացաւ Կոստանդնուպոլիս և յետոյ բոլոր Եւրոպիա:

* Լատիներէն արտիքը քաթա. Apoplexia

Թէ՛ժ (Թունդ) խմիչքների չափազանց գործածութեան
Ֆլասները եւ չափաւոր գործածելու օգուաները

Այն ամէն տեսակ տեսակ պատրաստած արաղները, օրինակ՝
ռօմ, լիկէր, հացի արաղ, և միւս սրանց նմանները, էնպէս էլ
ամէն տեսակ զինիները չափաւոր և իր ժամանակին գործա-
ծելը շատ օգուտ է. որովհետեւ կ'հաստատէ մարդկային ուժը,
կուրախացնէ և կարիայնէ ընդդէմ տարախոխիկ հիւանդու-
թեանց. էտուր համար հին բժշկներն էլ խորհուրդ էին տա-
լիս ամէնին չափաւոր գործածել իբրև դեղ և իբրև պահպանող
միջոց տարախոխիկ հիւանդութենից: Ինչքան օգուտ է խմիչքի
չափաւոր գործածելը, էնքան էլ ֆլասակար է չափազանց խը-
մելը: Փորձով զիտենք, որ եռ է բերում և տաքացնում արիւնը
և սրանից պատճառում է չափազանց անզօրութիւն: Էս պատ-
ճառաւ շատ անգամ մեռնում են նրանք, որոնք շատ խմելով և
հարբելով ուղում են արիութիւն, կամ աներկիւղութիւն ցոյց
տալ՝ կրկնում են, որ բոլորը էս խմիչքների չափսով գործ-
ածելը շատ օգտաւէտ է և հարկաւոր էն մարդիկներին.
որոնք տկար կազմուածքի տէր են և ծեր, առաւել ճը-
մեռուան օրերումը և օդի թաց ժամանակը: Առաւելադէս գա-
ված է լաւ հին կարմիր զինին, իսկ ժանտախտի ժամանակը՝
ռօմը, կամ լաւ արաղով շինած փունջը, չափաւոր թրթու-
րան հետը խառնած. իսկ քալցըր զինին, նոր զինին (մաճար),
գարեջուրը և սրանց նմանները գործածելը ֆլասակար է ու-
րովհետեւ փորը փքում է, մանաւանդ ժանտախտի և խօլերայի
ժամանակը:



Քժշկարաննիս մէջ յիշուած դեղորայքը պատ- րասարկու և գործածելու կերպը:

Համար 1.

Ա՛ն տորտ որժացուցիչ երեք ցորենաքաչ, աման մէկ փնջան ջրու-
մը, զգալով խառնէ ու տուր հիւանդին երկերկու զգալ, կէս ժամ մի-
ջոց տալով, մինչև որ բերանիցը բանացնէ, երբ սկսի բանացնել, խմա-
ցրու կաթնազոլ ջուր, կէս կէս փնջան, միջոց տալով:

Համար 2.

Ա՛ն մէկ զգալ թարմ (թագայ) ձէթ կտուահատի կամ ձիթենոյ, կէս
զգալ ձեծած աղ, վեց զգալ տաք ջրումը խառնէ, առաւօտը անօթուց
բոլորը միասին խմացրու:

Համար 3.

Ա՛ն ոսկւոյ արմատ կէս մսխալ, վեց զգալ գոլ ջրումը հարէ, ա-
նօթի փորանց խմացրու:

Համար 4.

Ա՛ն կէս դրփանքա չորացրացրած սև դամն, կամ ճանճուր, զիր
խտակ ամանումը և վրէն աման չորս բաժակ ջուր, էնքան եփէ, մին-
չև երկու բաժակ մնայ. խտակ քամէ և մէջն աման շատ բարակ
ձեծած զինուոյ աղ, մէկ զգալ, (եթէ չգտնես զինուոյ աղ, էն ժամանակը
մէջը խառնէ ութ մսխալ մանանայ), և խմացրու պակկելու ժամանակը
կէսը. մինչևի չորս ժամ եթէ չլուծէ, մնացածն էլ խմացրու:

Համար 5.

Ա՛ն դորմանալի աղ, կամ Անդլիոյ աղ ութ մսխալ, հալեցրու մէկ
բաժակ տաք ջրումը. սառելուց յետոյ առաւօտը անօթի փորուց իմիա-
սին խմացրու:

Համար 6.

Ա՛ն մէկ մսխալ ձեծած լաւ խաշնդեղ, խառնէ կէս փնջան ստոր
ջրումը, առաւօտը անօթի բոլորը իմիասին խմացրու:

Համար 7.

Ա՛ն երեք զգալ լաւ ձիթենուոյ, կամ կտուահատի ձէթ, և երկու զը-
ղալ մեղր, իմիասին խառնէ, առաւօտը անօթի խմացրու:

Համար 8:

Առ մէկ բաժակ աղը դրած խնձորի ջուր, եւ երկու զգալ մեղր, իմրախն խառնէ, եւ առաւօտը անօթուց խմացրու: Առաւել լաւ է խմացնել ձկն շնաճանճի վեց մսխալ, կէս բաժակ զով ջրով:

Համար 9:

Առ կէս մսխալ ծեծած անուշադր, երեք բաժին արան, մէմէկ բաժինը ջրով խմացրու հիւանդին, առաւօտանց, ճաշին եւ երեկոյեան, եւ մինչեւ լաւանալը այսպէս կրկնէ ամէն օր:

Համար 10:

Առ կէս բուռը կակղու, կամ թանթրվենու, կամ երիցուկի, կամ կետորոնի ծաղիկ, կամ անանուխ. դիր խառակ ամառուս եւ վրէն աման հինգ բաժակ կէծ ջուր, ծածկէ. կէս ժամից յետոյ շաքով քամէ, մեղրով քաղցրացրու եւ շուտ շուտ խմացրու:

Համար 11:

Առ փշրած օշինդր, առաւոյտ, զենտեան, մէմէկ բուռը կամ սըբանցից որը որ գանես. դիր շուշուսը եւ վրէն աման շաք բաժակ զինի, կամ ջուր. դիր տաք տեղ, երկու օրի ցիտոյ խառակ շաքով քամէ, եւ սուր հիւանդին, օրը շորս անգամ, մէմէկ զգալ:

Համար 12:

Առ ծեծած դառնիճի կեղեւ, ութ մսխալ. դարսենի՝ կէս մսխալ, փշրած օշինդր՝ երկու մսխալ. դիր շուշուսը եւ վրէն աման կէս շաքով լաւարմիր զինի, կամ ջուր. դիր երեք օր տաք տեղ, յետոյ քամէ, օրը շորս անգամ երկու երկու զգալ խմացրու հիւանդին, մինչեւ լաւանայ:

Համար 13:

Առ ծեծած դառնիճի կեղեւ՝ ութ մսխալ, փշրած օշինդր՝ մէկ մսխալ. դիր կաւէ ամանուսը, վրէն աման երեք բաժակ ջուր, եփէ էնքան. մինչեւ որ կէսը մնայ. քամելուց յետոյ խառնէ մէկ զգալ մեղր եւ օրը վեց անգամ խմացրու հիւանդին մէմէկ զգալ:

Համար 14:

Առ վայրի կաղնի ծառի կեղեւը՝ ութ մսխալ, դիր կաւէ ամանուսը, վրէն աման վեց բաժակ ջուր. էնքան եփէ, մինչեւ որ մնայ կէսը. խառակ քամէ, աման մէջը մէկ բաժակ զինի եւ օրը շորս անգամ երկու երկու զգալ խմացրու հիւանդին:

Համար 15:

Առ դառը նուշ, կամ զեղձի կորիզի միջուքս շորս մսխալ, փառք հանէ, ծեծէ, դիր կաւէ ամանուսը, եւ աման վրէն կարմիր լաւ զինի:

կէս չարէք. մէկ եփ տուր եւ քամէ շորով. շաքարով, կամ մեղրով քափոցրացրու եւ խմացրու հիւանդին օրը շորս անդամ, երկերկու զըղալ մինչևի լաւանալը:

Համար 16:

Ա՛ն ծեծած երիցուկի ծաղիկ, հրեշտակախոտ, կամ մարխամածամիք երկերկու մոխալ, քինաքինի կեղև՝ երեք մոխալ, լաւ մեղր՝ ինչքան հարկաւորի. խիասին խառնէ, մաջու՛մ շինէ եւ տուր հիւանդին, օրը որս անդամ, մէկմէկ ունարի չափ, կամ մէմէկ շայու զղալ:

Համար 17:

Ա՛ն ծեծած գարի կէս բուռը, դիր կաւէ ամանու՛մը, եւ վրէն ածան կէկ չարէք ջուր. լաւ եփէ եւ քամէ, մէջը խառնէ մէկ մոխալ շնչորակ եւ երեք զղալ մեղրաքացախ (տես համար 25) եւ տուր խմելու օրը վեց անգամ, երկերկու զղալ, մինչևի տաքութիւնը հովանայ:

Համար 18:

Ա՛ն ծեծած գարի մէկ բուռը, դիր կաւէ ամանու՛մը եւ վրէն ածան մէկ չարէք ջուր. լաւ եփէ, յետոյ քամէ եւ մէջը խառնէ երեք զղալ մեղրաքացախ (տես համար 25). եւ խմացրու հիւանդին ջրի տեղ:

Համար 19:

Ա՛ն կանեփի, կամ ձմերուկի սերմը՝ ութ մոխալ, կամ քաղցր Նուշ՝ սասը մոխալ. ծեծէ լաւ, եւ ծեծելիս քիչ քիչ ածան սառը ջուր՝ երեք բաժակ. քամելուց յետոյ էս սերմի կաթնու՛մը խառնէ կէս մոխալ շնչորակ եւ մէկ զղալ լաւ մեղր. ծափը մէկ անգամ մէկմէկ զղալ խմացրու, մինչևի տաքութիւնը հովանայ:

Համար 20:

Ա՛ն շորս փնջան տաք ջուր, կէս զղալ ծեծած աղ, շորս զղալ կըտուահատի ձէթ, խմասին խառնէ եւ հոքնայ տուր հիւանդին.*

Համար 21:

Ա՛ն երիցուկի ծաղիկ կէս բուռը, երեք մոխալ քերած հաւարակ խտակ սապոն, ծեծած աղ կէս մոխալ. խիասին խառնէ, ածան խտակ ամանում եւ վրէն ածան երեք բաժակ ջուր, մէկ եփ տուր, յետոյ քամէ եւ մէջը խառնէ, երեք զղալ կտուահատի ձէթ եւ էնպէս հագնայ տուր:

* Հոքնայ պէտք է տան կլէկից շինած յատուկ գործիքով, կամ եզան փամբուշտի բերանումը կապեն միւ (խողովակ) կամ գամբշ, ձէրը կտկած, եւ էնպէս տանքայ պէտք է զգուշանան, որ հոքնայ սապոն զեղը չլինի տաք կամ սառը այլ զուր:

Համար 92:

Առ կէս բուռը երիցուկի ծաղիկ եւ մէկ մէկ բուռը թանթրվենուոյ ծաղիկ, փշրած անանուխ եւ առաւոյտ. կամ սրանցից մէկնումէկը, որը զանաւի, չորս բուռը, եւ երկու բուռը թեփ՝ եւ կէս մսխալ քերած քափուր, խմխմին խառնէ լքցրու փոքր պարկերումը եւ դիր, ինչ տեղ ասած է:

Համար 23:

Առ թըթու հացի խմոր. քսէ շորի վրէն ձեռի ալի չափ, վրէն ցանէ ձեծած կանանչ խարսնածանձ, կէս մսխալչափ, կամ մտ թըթու հացի խմոր, մէջը խառնէ ձեծած մանանխ, կծուիծի արմատ, կամ մէ քանի պճեղ սխտոր, կամ փոքր ինչ աղ. կպցրու, ինչ տեղ հարկաւորութիւնը պահանջէ:

Համար 24:

Առ դեղին մեղրամոմ հինգ մսխալ, հատիկ ձութ՝ կէս մսխալ, այծի, կամ եզան ճրագու՝ մէկ մսխալ. ձիթենուոյ ձէթ, կամ սղանի կտրագ, ինչքան հարկաւոր է. կրակի վրէն հալէ, սառելուց յետոյ քսէ շորի վրէն եւ էնպէս գործ ասան, ինչպէս ասած է:

Համար 25:

Առ երկու բաժին լաւ մեղր, մէկ բաժին լաւ դինուոյ քացախ. խտակ կլէկած ամանում եփէ, մինչեւի փրփրիւը. կտանց կամաց եփ տուր. երբ հովանայ, ասան մէկ խտակ ամանումը, պահէ, հարկաւորութեան ժամանակը գործ ասան, ինչպէս ասած է:

Համար 26:

Առ երկու մէկ, կամ թանթրվենուոյ ծաղիկ, կամ առաւոյտ, կամ եղեսպակ, կամ կեստրոն. կամ սրանցից մէկնումէկը, որը զտանես. երկու բուռը դիր կաւէ ամանումը եւ ասան վրէն կէծ ջուր, երկու բաժակ. յետոյ խեղոյն մէկ թերթ հաստ թուղթ փաթաթէ շաքարի գլխի պէս, լէն բերանը ձածկէ ամանի վրէն, նեղ բերանը դիր հիւանդի պառնկներին մէջը, որ նրա միջով եկած գոլորչին (բուղ) քաշէ դէպի իրան. էսպէս թող անէ օրը երեք անգամ:

Համար 27:

Առ 26 համարու դեղը, քամէ մէկ բաժակ, եւ մէջը խառնէ մէկ զըղալ մեղրաքացախ, ինչպէս գրած է 25 համարումը. տուր, որ հիւանդը բուկը ողողէ:

Համար 28:

Առ թանթրվենու ծաղիկ, մէկ բուռը. սևատեսուկի սերեւ՝ վեց մըսխալ. դիր ամանումը, վրէն ասան կէծ ջուր. երեք բաժակ. մէկ եփ տուր եւ վեր մտ, որ հովանայ. ապա քամէ եւ մէջը խառնէ տանու վեցմըս-

խալ սեւ թութի օշարակ (շարքաթ). եթէ չգտնես, մո 25 համարու
ղեղիցը՝ չորս զգալ, խմիասին խառնէ եւ գործ աման բուկը ողողելու :

Համար 29:

Առ 26 համարու զեղը, քամէ մէկ բաժակ, եւ մէջը խառնէ մէկ քա-
ժակ կաթը, տուր բուկը ողողելու շուտ շուտ :

Համար 30:

Առ երկու մսխալ քափուր, քերէ դանակով, աման ձիթենույ, կամ
կտուահատի ձիթի մէջը. որ լինի չորս զգալ, միասին հարէ, զիր տաք
տեղ, յետոյ, երբ հարկաւորի, գործ աման Էնպէս, ինչպէս ասած է՝ զըր-
սեւից քսելու համար :

Համար 31:

Առ կէս բուռը թանթրվնի, կամ երկոցուկի ծաղիկ, կամ ոճանուխ,
զիր մէկ խտակ ամանում եւ վրէն աման չորս բաժակ կէծ ջուր ու
ծածկիր. երբ հովանայ, խտակ շորով քամէ եւ մէջը խառնէ երկու մը-
խալ չնչ քորակ եւ երկու զգալ լու մեղր, տուր խմելու հիւանդին եր-
կու ժամը մէկ անգամ, երկերկու զգալ, մինչեւի տաքութիւնը հովանայ :

Համար 32:

Առ դարասերեւ. մոլոշ, կիտորոն, եւ մասիտակ՝ կէս կէս բուռը. զիր
խտակ ամանում եւ աման վրէն կէծ ջուր, տասը վնջան. երբ հովա-
նայ, քամէ եւ տուր խմելու շուտ շուտ՝ ջրի տեղ, զոլ զոլ, եւս առաւել
էն ժամանակը, երբ գալիս է հաղը :

Համար 33:

Առ դարասերեւ, անանուխ, կակաշ, չոր յունար, կէսկէս բուռը,
եւ կէս մսխալ անխոն կամ սամիթի սերմը. զիր խտակ ամանում եւ
վրէն աման չորս բաժակ կէծ ջուր, եփ տուր եւ քամէ խտակ չորով-
եթէ ունենաս քիչ սառը շաքար, խառնէ եւ տուր հիւանդին խմելու,
ժամը մէկ անգամ, երկու զգալ. եթէ հազալու ժամանակը խուխը չէ
գալի հետ եւ նոսր, էն ժամանակը խառնէ մէկ մսխալի չորս բաժնից
մէկը անուշադր, ու էնպէս խմացրու :

Համար 34:

Առ ծեծած կտուահատի սերմը, մոլոշ եւ հացի միջուքս, մէկմէկ
բուռը. կամ սրանցից մէկեմէն, որը գտնես, չորս բուռը. աման վրէն եր-
կու բաժակ կաթը, եփէ մինչեւի թանձրանայ, յետոյ քսէ չորի վրէն,
զիր տաք տաք, ինչ տեղ հարկաւոր է, եւ ինչպէս ասած է, եւ շուտ շուտ
փոխէ, որ չը սառնի :

Համար 35:

Առ անանուխ մէկ բուռը, զիր խտակ ամանում, աման վրէն հինց

փնջան կէծ ջուր եւ ծածկէ. սառելուց յետոյ քամէ եւ մէջը խառնէ քառասուն կաթիլ լոքմանի ողի. կամ սորա փոխարէն խառնէ մէջը երեք զգալ լաւ զինի, կամ մէկ զգալ ոսօմ. յետոյ շաքարով կամ մեղրով քաղցրացրու եւ տուր օրը չորս անգամ, երկերկու զգալ:

Համար 36:

Առ բրդուլ երեք բուռը, կամ բոված գարու ալուր. վրէն անձ ջուր էնքան, որ լաւ էփվի շորվի նման. յետոյ խառնէ քիչ կարագ, կամ լաւ ձէթ եւ շուտ շուտ խաչտեղ տուր հիւանդին:

Համար 37:

Առ տասը մսխալ տուղտի արմատ, դիր կլէկած պղնձում, եւ անձ վրէն մէկ շարէք ջուր. լաւ եփէ, քամէ, յետոյ մէջը խառնէ կեռասի (ալուրալու) խէժ ձեծած, երեք մսխալ. կրկին քամէ եւ խմացրու հիւանդին ջրի տեղ:

Համար 38:

Առ մէկ մոխալ ձեծած խաշնդեղ, դիր փնջանումը եւ վրէն անձ չորս զգալ կէծ ջուր. ծածկէ մինչեւի հովանայ, յետոյ քամէ եւ տուր հասակն առած մարդուն օրը երեք անգամ, մէկ մէկ զգալ, իսկ երեխին փորկապուփեան ժամանակը, մէկ մէկ փոքր շայու զգալ:

Համար 39:

Առ մէկ բուռը ցորենի թեփ, դիր կլէկած պղնձումը, եւ վրէն անձ եօթը փնջան ջուր. եփ տուր մինչեւի կէսը պակասի, յետոյ քամէ եւ խառնէ մէջը մէկ զգալ ձեծած գործի եւ էնպէս գրեխ տուր:

Համար 40:

Առ երկերկու մսխալ ձեծած խունկ եւ զեանամուշկի սերմը, խմասին խառնէ եւ դործ անձ ինչպէս ասած է, Մէնակ խունկն էլ կարող ես դործ անել:

Համար 41:

Առ մէկ բուռը փիճոյ ծաղիկ, դիր խափակ ամանում եւ անձ վրէն մէկ շարէք ջուր, եփ տուր էնքան. մինչեւ կէսը ցամաքի. յետոյ քամէ, մէջը խառնէ մեղր, էնքան, որ քիչ քաղցրանայ. օրը չորս անգամ մէմէկ փնջան խմացրու:

Համար 42:

Առ կէս թունկի կովի նոր կթած կաթը, եփ տուր, յետոյ անձ մէջը մէկ բուռը ջարթած թրթնջուկ խոտ, կամ երկու զգալ թունդ քացախ, որով կաթը կը կարուի, յետոյ քամէ եւ մեղրով քաղցրացրու եւ ջրի տեղ խմացրու:

Առ նոր քաղաք անձըխտու, եղերդի արմատ եւ թրթնջուկ՝ մէկ մէկ բուռը. լաւ լուան, որ վրէն հող չմնայ. յետոյ փէտէ ամանումը ծեծէ անջուր. քամէ խտակ շորով եւ խմացրու հիւանդին, օրը երեք անգամ, մէմէկ փնջան, Եթէ հիւանդը լինի վատուժ, կամ թոյլ կարմուսած քի տէր, էն ժամանակը էս խտակը քամուքսը մէկ եփ տուր, եւ էնպէս խմացրու, որ կլինի զեկոկտից առաւել օգտակար, էսպէս պէտք է գործածել, մինչեւի տասնուհինգ օր, *

Համար 44:

Առ կեչի ծառի նոր բաց էլած ծաղիկը եւ մրչխ, վեց վեց բուռը, ածան մէկ տոպրակում եւ բերանը կապէ, զցէ փայտէ լուացարանի (վաննայ) մէջ եւ ածան վրէն շորս կամ հինգ կուժ կէծ ջուր, ծածկէ, երբ հովանայ կխատաք մէջը նստացրու հիւանդին եւ թոյլ, քանի կարողութիւն ունենայ մէջը նստելու:

Համար 45:

Առ շորացրած վորդի թերթ եւ բարցուենիկ, կէս կէս բուռը. կամ որը գտանես՝ նորանից մէկ բուռը զիր կլէկած ամանում եւ ածան վրէն կէծ ջուր, շորս բաժակ, մինչեւի հովանայ. յետոյ քամէ եւ տուր օրը հինգ անգամ, մէկ մէկ փոքր փնջան:

Համար 46:

Առ կտուահատի եւ կանեկի սերմը մէմէկ բուռը. կամ քախքր նուշ եւ խաչխաչ կէս կէս բուռը, կամ սրանցից որը պատահի, ծեծէ լաւ եւ ծեծելումը քիչ քիչ ածան վրէն սառը ջուր, վեց փնջան. քամէ, յետոյ մէջը խառնէ երկու մոխալ շնչորակ եւ երկու մոխալ շաքար, կամ երկու զրդալ լաւ մեղր, (թէ չը գտանես շնչորակ, առանց նրան չինէ նուշի կաթից կամ յիշեալ սերմից,) եւ խմացրու հիւանդին ժամը երկու զրդալ:

Համար 47:

Առ գարի մէկ բուռ, զիր խտակ ամանում, ածան վրէն վեց փնջան կէծ ջուր, լաւ եփ տուր, քամէ, մէջը խառնէ երկու զրդալ մեղրաքաղախ, (տես համար 25) եւ խմացրու հիւանդին շուտ շուտ, կէս կէս փնջան:

Համար 48:

Առ գարի երկու բուռ. զիր խտակ ամանում, ածան վրէն կէս թուռդի ջուր եւ եփէ. լաւ քամելուց յետոյ ածան մէջը երկու մոխալ շնչորակ եւ շորս զրդալ մեղրաքաղախ, (տես համար 25) եւ խմացրու հիւանդին շուտ շուտ, կէս կէս փնջան: Տաքութիւնը կըմեղմացնէ եւ ծարաւութիւնը կառնէ եւ մէղր կարձակէ:

* Էս զիզը միայն ամառը կը շինուի եւ պէտքէ ամէն օր նոր ինորայ շինեն, որովհետեւ էս քամուքսը շուտ կը փաստուի:

Համար 49:

Առ տուղտի արևատ մէկ բուռը, կամ մոլոշի ծաղկէ՝ երեք բուռը, դիր խտակ ամանում եւ ածան վրէն կէս թունդի ջուր. եփէ մինչեւ որ կէսը մնայ, քամէ եւ զորժ ածան ինչպէս ասած է:

Համար 50:

Առ եղերդի, եւ կորոսանիճի տակոխի, զիճոյ փայտ կտրտած, ամէնիցր կէս կէս բուռը, մատիտակ եւ տատասկ երեք երեք մսխալ, դիր խտակ ամանում, եւ ածան վրէն մէկ չարեքից աւելի ջուր. եփէ էն քան, մինչեւ որ մնայ կէսը. քամիւոց յետոյ խմացրու հիւանդին օրը շորս անգամ, մէկէ քաժակ մինչեւ տասն օր. կամ աւելի:

Համար 51:

Առ տուղտի տակոխ մէկ բուռը, դիր խտակ ամանում եւ վրէն ածան կէս թունդի ջուր, եփէ մինչեւ կէսը մնայ. քամէ եւ մէջը խառնէ մէկ մսխալ ծեծած քրքում եւ էնպէս զորժ ածան, ինչպէս ասած է զրուսից յուանալու խրատումը:

Համար 52:

Առ ծեծած կտուահաստի սերմը, հացի միջուքս, մէմկ բուռը, կովի կաթը ինչքան բաւականանայ, եփէ մինչեւ որ թանձրանայ, եւ մէջը խառնէ ալանի կարագ մէկ զգալ, տաք տաք զորժ ածան զրուսից, ինչպէս ասած է:

Համար 53:

Առ բարակ քաթան, եւ կարէ փոքր տուղրակ*, էնպէս, որ մարդոյ ջուխտ ամորձիքը մտնի մէջը, ոչ աւելի եւ ոչ պակաս, տուղրակի առաջի կողմը, մէջ տեղից քիչ վերեւ կլոր ծակ թնոյ. էնպէս՝ որ անգամը դուրս հանած ունենայ, որ ջրովթ անելու չարղելէ. տուղրակի բերնի երկու կողմը կպցրու երկար եւ բարակ ժապաւէն. (շէրից, լէնթ)՝ ինչ ժամանակ տուղրակումը ձուաները կը դարսէ, էն ժամանակը քիչ պէտք է վեր քաշես ժապաւէններով, փորին եւ մէջքի վրէն փաթաթես, որ էնպէս վեր կապած ունենայ, մինչեւ լաւանայ բոլորովին:

Համար 54:

Առ երեք քաժակ ջուր եւ երկու փոքր զգալ արճիճի քացախ (ինչ պէս զրածէ 102 համարումը), իմխալին խառնէ, եւ զորժ ածան, կթէ չըղտնես արճիճի քացախ, սու երկու զգալ քացախ, մէկ զգալ արաղ եւ մէկ քաժակ ջուր, խառնէ եւ զորժ ածան:

* Էս տեսակ տուղրակներ պատրաստի կարող ես գնել զեղատանը (ափթէք) որ եւ կոչում են շափներէն Սասկենարում:

Համար 55:

Առ Տաղած ալուր՝ մէկ բուռը, տասը զլուխ խորոված սոխ եւ երեք զգալ մեղր. խմիստին հարէ եւ Էնպէս դործ ածան:

Համար 56:

Առ սպիտակ ծամելու մաստակ պաներկու մսխալ, կտուահատի ձէթ հինգ զգալ. շատ բարակ ձեծած կորնկանի տերեւ՝ երկու մսխալ կրակի վրէն հալէ եւ յետոյ քսէ շորի վրէն, զործ ածան ինչպէս ասած է:

Համար 57:

Առ եղբրդի արմատ, եւ կորտանիճի տակոյի վեց վեց մսխալ, գեղձ ամերիկացի չորս մսխալ, մատիտակ եւ կեղեւ մեղերէի՝ մէկ մէկ մսխալ. խմիստին խառնէ, քիչ ձեծէ, դիր լաւ կլէկած պղնձուս եւ ածան վրէն շարեքուկէս ջուր, հանդարտ եփ աուր, Էնքան՝ մինչեւ երեք վնջան մնայ. յետոյ քամէ եւ խմացրո՛ւ օրը երեք անգամ, մէկ մէկ վնջան, մինչեւ քսան օր:

Համար 58:

Առ օշինդր տասը բուռը, մանր կտորած դիւնոյ վայտ քսան բուռը, միստին խառնէ, դիր պղնձուս եւ ածան վրէն մէկ կուժ ջուր, կէժ արած, լաւ եփէ. յետոյ քամէ եւ նրա ջուրը գործ ածան դրսեւիցը ինչպէս ասած է:

Համար 59:

Առ բարակ ձեծած կատախտոտ, ութ մսխալ, տասնուվեց բաժին արան եւ օրը չորս անգամ մէմէկ բաժին ջրով տուր խմելու:

Համար 60:

Առ բարակ ձեծած պտերի տակոյի ութ մսխալ, տասերկու բաժին արան եւ տուր օրը չորս անգամ մէկ մէկ բաժին, ջրով:

Համար 61:

Առ բարակ ձեծած բուխտակի սերմը չորս մսխալ, օշինդր մէկ մըսխալ, կատախտոտ մէկ մսխալ եւ շատ բարակ ձեծած անալ երկու մսխալ, խմիստին խառնէ, վրէն ածան լաւ մեղր, ինչքան հարկաւորի գանգուած (մաջուն) դառնալու համար. ւետացրո՛ւ սոսաւօսը անօթի երկերկու զգալ: Եթէ յիշեալ դեղերը չըդատանես, մշնակ բուխտակի սերմը մեղրով շաղախէ եւ տուր:

Համար 62:

Առ քարի եղ քսան կաթիլ, երկու զգալ մեղր խառնէ մէջը եւ խըմացրո՛ւ, ինչպէս ասած է ճիճուի հիւանդութեան համար:

Համար 63:

Աս երեք պճեղ սխտոր, ծեծէ, քսէ չորի վերայ, դիր պորտին, մինչև որ տեղը լուս ընկնի կարմրութիւն. վեր առնելուց յետոյ քսէ թարմ եւ ալանի կարագ, կամ սեր:

Համար 64:

Աս խտակ եւ շատ բարակ երկաթի խարտուքս, (որ չպիտի լինի ժանկոտած) երկու մսխալ, շաքար երեք մսխալ, խմիասին սրէ յետոյ մէջը խառնէ երիցուկի ծաղիկ եւ տաք կոճ մէկմէկ մսխալ, եւ ածան վրէն լաւ մեղր, կամ վարդի քաղցրաւենի, (մուրաբայ) ինչքան հարկաւոր է զանդուած (մաջուն) դառնալու համար, եւ օրը երեք անգամ մէկմէկ ընկուզի շափ, կամ մէկմէկ շայու լիճը զղալ ուտացրու:

Համար 65:

Աս բարակ ծեծած լաւ խաշնդեղ, խտակած անուշադր մէկմէկ մըսխալ, շաքար, կամ մատխտակ ծեծած, կէս մսխալ, խմիասին սրէ եւ չորս բաժին արան, խմացրու առաւօտ, երեկոյ մէկմէկ բաժին, քիչ ջրով:

Համար 66:

Աս երիցուկի ծաղիկ՝ մէկ բուռը, եւ մէքուան չորս բաժնից մէկը մախիսինդի տակոխի, եւ մէկ զղալ կեռասի ծառի խէժ, զիր խտակ ամանում, ածան վրէն վեց բաժակ կէժ արած ջուր. երբ սառի, քամէ, եւ տուր, օրը երկու անգամ մէկմէկ վինջան, եթէ քիչ քրքում էլ խառնեա մէջը, աւելի լաւ կըլինի:

Համար 67:

Աս կորոտնիճ, կամ բարցուենիկ՝ մէկ բուռը, դիր կլէկած ամանում, եւ վրէն ածան կէժ արած ջուր՝ հինգ բաժակ, ծածկէ, եւ թոզ, որ սառի, քամելուց յետոյ, խմացրու օրը վեց անգամ, մէկմէկ վինջան:

Համար 68:

Աս շատ բարակ ծեծած ձուի կեղև, կամ խեցեղանի աչք, կամ շնչորակի հող՝ երկու մսխալ, շաքար եւ սամբիթի սերմը մէկմէկ մսխալ. խմիասին սրէ եւ տուր ծծմօրը խմելու օրը չորս անգամ, քիչ ջրով մէկմէկ փոքր զղալ:

Համար 69:

Աս շնչորակի հող՝ երկու մսխալ, շաքար եւ բարակ ծեծած անխտանի սերմը, կամ սամբիթի սերմը՝ մէկմէկ մսխալ, խմիասին խառնէ եւ տուր օրը չորս շայու զղալ խմելու, ինչպէս իր տեղը ասած է:

Համար 70:

Աս խտախ կրճոնք՝ երեք բուռը, դիր պղնձուճը եւ ածան վրէն կէժ:

* Զին խտա ուտելիս ինչտակը թողնում է վիշապ, նրան ստում են կրճոնք:

արած ջուր չորս բաժակ, քամելուց յետոյ թօց արան մէջը շաւի, կամ մահուղի կտոր եւ զիր փորի վրէն, տաք տաք, խնայէս ասած է, եւ շուտ շուտ փոխէ, որ չսառի, կամ նա օշինդր եւ անանուխ երկերիու բուռը, վրէն չորս բաժակ ջուր ածան, մէկ եփ տօւր եւ քամէ, մէջը խառնէ մէկ բաժակ զինի եւ էնպէս տաք տաք դործ ածան:

Համար 71:

Առ մաախտակ, երկու մսխալ, եղեգնահամեմ շորս մսխուլ, զիր խտակ ամանում, եւ ածան վրէն ջուր երեք բաժակ. մէկ եփ տօւր եւ քամէ, խմացրն հլահողին մէկմէկ փնջան, օրը երեք անգամ:

Համար 72:

Առ անալի կարագ եւ բարակ ձեծած երկդուկ՝ շորս մսխալ, խմասին լաւ հարէ, քսէ շորի վերայ, եւ դործ ածան:

Համար 73:

Առ չնչորակի հող՝ շորս մսխալ, բարակ ձեծած սամիթի սերմը՝ մէկ մսխալ, նարինջի կեղեւ, ներսի երեսը քերած եւ ձեծած, երկու մսխալ, չաքար ձեծած՝ երկու մսխալ, խմասին սրէ լաւ, եւ օրը շորս անգամ, մէկմէկ չայու զղալ, քիչ ջրով, կամ կաթնով խմացրն ձմարը. էստորով կաւիւանայ կաթը. Յիթ երկուէն ծիծ չլինի ուտելիս, էն ժամանակը էս ղեղից մէկ սիսեռի շափ կաթնի հետ պէտք է տան խմելու երեկին, օրը մէկ, կամ երկու անգամ:

Համար 74:

Առ ձեծած անուշադր՝ մէկ սիսեռի շափ, հալէ մէկ զղալ ջրումը, յետոյ էս ղեղումը թօց արան փետուրը, կամ մատղ, եւ քսէ, խնայեղ ցաւում է:

Համար 75:

Առ ձեծած կաուահատի սերմը, երկու զղալ, զիր փոքր ամանում եւ ածան վրէն երկու փնջան ջուր, եփ տօւր մինչեւ մնայ կէտը, քամէ եւ մէջը խառնէ երկու զղալ մեղր. թօց արան մէջը հալի փետուրը, կամ մատղ եւ էնպէս քսէ, խնայեղ սր ցաւում է:

Համար 76:

Առ շատ եփած տեսպղինի արզանակ (ղազարի խաշու), կամ խորոված շողղամի քամուքս՝ երկու զղալ, լաւ մուր՝ երկու զղալ, երկուսը խմասին խառնէ եւ տօւր մէկմէկ չայու զղալ խմելու, ինչ ժամանակ շիտթիւում է. կամ շինէ խաշխաշի սերմի կաթը եւ տօւր երկսին օրը մէկ, կամ երկու զղալ:

Համար 77:

Առ զինկի արջասով՝ երկու ցորենաքաշ, հալէ երկու զղալ ջրումը եւ մէջը խառնէ երկու զղալ մեղր, եւ տօւր խմելու երկսին, օրը շորս անգամ, մէկմէկ փոքր չայու զղալ:

Համար 78:

Առ չորացրած վարդ՝ մէկ բուռը, խոնկ եւ կնդրակ՝ կէս կէս բուռը, դարսենի եւ մշկահոտ ընկուզ՝ երկերկու մոխաւ, խմիասին խառնէ եւ քիչ խոժոր ծեծէ. յետոյ մաւ լաւ բորբոքած (չաղ արած) կրակ զիր մէկ թասի մէջը, վրէն ածան էս ղեղից, ծուխ տուր եւ ման ածան տան բուռը կտղձը:

Համար 79:

Առ զիհւոյ պտուղ ծեծած՝ չորս բուռը, չնչբորակ՝ մէկ բուռը, ծըծուսը՝ մէկ բաւն չորս մասից մէկը, չորացրած անանուխ՝ երեք բուռը խմիասին խառնէ, կրակի վրէն շաղ տուր եւ ինչպէս իր տեղը առած է, էնպէս ծուխ տուր տան մէջը, օրը մէկ, կամ երկու անգամ:

Համար 80:

Առ անուշադրի ողի, կամ հոտ քաշելու թէժ քացախ՝ չորս մոխաւ, ինչ ժամանակ հարկաւորութիւնը պահանջէ, հոտ քաշել տուր հիւանդին:

Համար 81:

Առ էրած ուղեռ չհանցրած կիր՝ մէկ զգաւ, եւ կէս զգաւ ծեծած անուշադր, խմիասին խառնէ եւ ածան շուշումը, բերանը լաւ պնդէ, հարկաւոր ժամանակը հոտ քաշել տուր, էլի շուտ բերանը խցէ, որ հոտը չերթայ:

Համար 82:

Առ ոսկիտակ ծամելու մաստակ եւ ղեղին մեղրամո՞՞ վեց վեց մոխաւ, ձիթենույ ձէթ՝ երկու զգաւ, զիր ամանումը եւ հանդարտ կրակի վերայ հալէ. երբ հալուի, վեր մաւ եւ վայսով խառնէ. յետոյ քսէ քաթանի վերայ եւ զիր ինչտեղ ասած է:

Համար 83:

Առ նոր ձուի մէկ ղեղնուց, ձիթենույ ձէթ եւ մեղր՝ մէկմէկ զգաւ, խմիասին խառնէ փնջանումը եւ գործ ածան ինչպէս ասած է:

Համար 84:

Առ զիհւոյ վէտ եւ կորտանիճի տակուի՝ ութ ութ մոխաւ, զիր չայդանումը, եւ ածան վրէն տասը փնջան ջուր, էնքան եփ տուր, մինչեւ որ կէտը, մնայ քամէ եւ խմայրու օրը չորս անգամ մէկմէկ բաժակ:

Համար 85:

Առ մէկ ստիլ պաղլիղ, զիր կեծացրած երկաթի կամ աղխի վերայ, եւ թոզ քանի որ գնումէ զօլորչի (բուղ). երբ գոլորչին կարուի, էն ժամանակը վեր առ, սրէ բարակ ու գործ ածան էնպէս, ինչպէս տասած է իր տեղումը:

Համար 86:

Առ տասը փնջան պարզ սառը ջուր, արճնի քաղսի՝ չորս զգաւ (սեւ

102 համարումը) խմբաբան խառնէ, եւ գործ անձն զրոսելոց, ինչպէս ասած է իր տեղը:

Համար 87:

Առ թէ՛ օղի (թուռնոց արագ) մէկ շարէք, անձն շուշումը, եւ մէջը խառնէք քերած քափուր՝ տասը մոխալ, զիբ տաք տեղ, մէկ օր, եւ գործ անձն էս քափուրի արագը զրոսելոց:

Համար 88:

Առ թթու խմոր՝ կէս շարէք, մեղր երկու դղալ, չորս դուխ խորոված սոխ, խմբաբան հարէ լաւ, ու գործ անձն, ինչպէս ասած է:

Համար 89:

Առ կտաւատի ձէթ՝ կէս շարէք, արծճի՛ քաղցախ երկու դղալ, (տես 102 համարումը) բարակ ձեւած անուշադր՝ մէկ մոխալ, խմբաբան խառնէ լաւ, ու գործ անձն ինչպէս ասած է:

Համար 90:

Առ քարի, կաթ բուսկնոց եղ եւ էնպէս գործ անձն բնչպէս ասած է:

Համար 91:

Առ թթու խմոր ձուր զեղնուցի չափ, մէջը խառնէ երեք մոխալ կախիճ (ճերմակ հող որ զերձակները գործ են անում). ու գործ անձն ինչպէս ասած է:

Համար 92:

Առ երկու սխեռի չափ քերած քափուր, եւ մէկ հատ մարերիճանճ, երեք մոխալ շաքար, խմբաբան լաւ ձեւէ, փոշի շինէ, բաժանէ չորս մասը եւ գործ անձն, էնպէս ինչպէս ասած է կատաղի շան կծածի համար:

Համար 93:

Առ բարակ ձեւած անուշադր երկու մոխալ, ծծումբ չորս մոխալ, զինոց աղ վեց մոխալ, խմբաբան լաւ խառնէ, օրը չորս անգամ մէկմէկ շայու դղալ անձն լեղուի վրէն, եւ ջրով խմել տուր:

Համար 94:

Առ մոխիր երկու բուռը, ձեւած ծծումբ մէկ բուռը, խառնէ եւ զիբ պղնձումը, վրէն անձն երեք շարէք ջուր եփէ էնքան, մինչեւի կէս թուռնի մնայ, շուտ շուտ խառնէ փէտէ դղալով եփելու ժամանակը, յետոյ քամէ ջուրը էնպէս գործ անձն ինչպէս ասած է:

Համար 95:

Առ կէս շարէք թթու խմոր, ձեւած մանանեխ չորս դղալ, խմբաբան խառնէ քիչ քաղցախով, էնպէս որ խաշիլի պէս դառնայ, եւ գործ անձն ինչպէս ասած է:

Համար 96.

Առ ծեծած գործը՝ երկու զգալ, ծեծած կեղև գառնիճի մէկ զգալ, ծեծած մեխակ՝ մէկ մոխալի չորս բաժնից մէկը. խմաւին խառնէ, լաւ սրէ եւ գործ անան առաւօտները այսպէս. մտ կէս զգալ էս դեղիցը, լաւ քսէ ակռէքնէրին եւ յետոյ բերանդ ողողէ ջրով :

Համար 97.

Առ էրած պաղլեղ՝ (տես 85 համարումը), կէս զգալ, դինուոյ սոյլտակ աղ՝ երեք զգալ, կէս մոխալ կարմիր հայկաւ (կարմիր խոզ), խմաւին սրէ, եւս Բէ գառնեւս անանուխի կամ մեխակի եղ, տանուէնից կաթիլ, խմաւին խառնէ եւ առաւօտները ակռէքներից քսէ էս դեղից, յետոյ բերանդ ողողէ ջրով :

Համար 98.

Առ երեք մոխալ պաղլեղ, հալէ տանն փնջան ջրումը, եւ էնպէս գործ անան, ինչպէս ասած է իր տեղը. կամ մտ մէկ բաժակ վարդի ջուր, մէջը խառնէ մէկ շայտ զգալ արճճի քացախ, (տես համար 102) եւ էնպէս գործ անան, ինչպէս ասած է :

Համար 99.

Առ երկու նոր անան ձուի սոյլտակուց, դիր խտակ ամանում եւ էնքան պաղլեղ խառնէ, մինչեւ մերտի, յետոյ քաթմանի վրէն քսէ եւ կպցրու աչքերին, ինչպէս որ ասած է իր տեղը :

Համար 100.

Առ շնչորակ խտակած եւ ծեծած՝ մէկ մոխալ, դինու սոյլտակ աղ եւ շնչորակի հող՝ երկերկու մոխալ, շաքար մէկ մոխալ, խմաւին խառնէ, սրէ եւ մէկմէկ փոքր շայտ զգալ էս դեղից, օրը երկու անգամ, խումացրու մինչեւի աչքերի կարմրութիւնը քաշուի :

Համար 101.

Առ լոխմանի ողի, տասը կաթիլ, շաքարով կամ ջրով, որտինեղանալու ժամանակը, կամ զլսի պտուտ գալու ժամանակը սուր :

Համար 102.

Առ դեղատանից արճճի քացախ, գործ անան ինչպէս ասած է կամ տանը պատրաստէ էս տեսակի Ա՛ռ. կէս գրուանքայ արճճի շաքար, մէկ քառորդ գրուանքայ արճճի քարմարցակ, խմաւին սրէ, բարակ փոշի շինէ. դիր մէկ շուշում եւ վրէն անան երկու գրուանքայից տանն ուղից մոխալ պակաս, ջրից քաշած ջուր, (ինչպէս արաղը քաշում են, էնպէս էլ ջրից ջուր քաշէ), եւ շուտ շուտ պէտք է շարմես, մինչեւ դեղին կարմրադոշն լինի տակը նստած թանձրութիւնը. յետոյ թոզ կենայ մէկ օր, որ սրարգուի. երեսի պարզ ջուրը անան մէկ շուշում, տակի տի-

լը զէն անն, քամանդ կրկին յետ քամէ հանդարտ, Անն էս է արճճի քացախը, Եթէ ուղենաս արճճի ջուր շինել, սա կէս դրուան քայպարզ ջուր եւ մէկ մսխալ արճճի քացախ միասին խառնէ, կլինի արճճի ջուր:

Համար 103:

Առ օձաձուկը ինչքան ուղենաս, զցէ ազաջրումը, որ սատկի, հանէ, սուր դանակով թլատէ ամէն կողմը, արեւումը քաշ արն. տակը մէկ աման դիբ, որ եղը մէջը կաթէ. էս եղը ժողովէ անն մէկ ամանի մէջ, երբ հարկաւորի գործ անն. ինչպէս ասած է, քաց առաւել լաւ կը լինի, թէ որ աղաջրիցը հանելիս մէկ օր քաշ անն, որ քիչ չորանայ ու յետոյ թլա- լատես, արեւումը կամ տաք թոնդրումը, տակը մէկ ամանով ջուր զը- նես եւ մէկ փոքր դարտակ աման էլ զնես ջրի երեսին որ ամանի մէ- ջը կաթի եղը:

Համար 104:

Առ կալճ ութ մսխալ, եւ հայկաւ երկու մսխալ, երկուսը խմիասին լաւ սրէ, յետոյ սա լաւ բարակ ձեծած երիցուկի ծաղիկ՝ երկու մսխալ, քերած քափուր՝ կէս մսխալ, խմիասին խառնէ. լաւ փոշի արն, կար- միր քանույ ուռուցքի վերայ դիր, ինչպէս ասած է:

Համար 105:

Առ կալճ ութ մսխալ, քերած քափուր՝ կէս մսխալ, խմիասին լաւ խառնէ, ժամը մէկ անգամ ցանէ կարմիր քանույ ուռուցքի վերայ, Մէ- նակ կալճ էլ կարելի է գործ անել:

Համար 106:

Առ կրի ջուր եւ ձիթենայ ձէթ՝ մէկմէկ փնջան, խառնէ խմիասին, լաւ հարէ, կէս ժամը մէկ անգամ քսէ հաւի փետուրով, Կրի ջուրը շինելու կերպը անս բժշկարանիս վերջը, Ակուս կալցիս բստի դիմացը:

Համար 107:

Սերմերից եւ տակոխներից սուրճ (զահվէ) պատրաստելու կերպը այս է, սա ստեղծիկն (զազար), եղերդի տակոխի եւ զարի, որանցից որը կա- մենաս, չորացրն մանր կտորէ, բովէ. լաւ ձեծէ եւ եփէ սորճի նը- ման եւ գործ անն, թէ կամենաս սորճի հետ խառնէ կէտուակէս, կամ սուրճի փոխարէն գործ անն բոված դիուց եւ խազակաղնոյ սպտղը: Սրանց գործ անելը յատուկ դեղ է ջրգողի համար:

Համար 108:

Առ դառնիճի աղ՝ կէս մսխալ, շաքար՝ երկու մսխալ, խմիասին խառնէ եւ սրէ, բաժանէ տասնուհինգ մասը, զողից եւ տաքութենից ազատ ժամանակը (հով վախալը) երկու ժամ մէկ բամբին քիչ ջրով՝ հալէ եւ խմացրն:

Համար 109.

Առ թիժու խմոր մէկ ընկուղաչափ, շորի վերայ քսէ, եւ վրէն ցանէ խարանաղեղ՝ կէս մնխալ. ձեռով տափփէ, որ լաւ կաշի. յետոյ ինչտեղ դուրս կողմնէ. փոքր ինչ քացախ քսէ եւ զիր վերան, թնոյ մնայ Յ ժամ կամ մինչեւի կաշին բշտէ, յետոյ կաշին վերսնաւ եւ օրը երեք անգամ ալանի կարող զիր, շորով մինչեւ լաւանայ:



Բժշկարանիս մէջ յիշուած քաշերու Համեմատութիւնը *

ՎՐԱՍՏԱՆԻ	Տաճկաց	ՌՈՒՍԱՅ
Լիտրը հաւասար է	2 հօխ. 353 ¹ / ₂ , դրամին. 9 ֆունտի:	
Չարէքը —	288 ¹ / ₄ դրամի. 2 ¹ / ₄ ֆունտի:	
Ստիլը —	57 ¹³ / ₂₀ դրամի. 43 ¹ / ₅ զօլտանիկի.	
Մսխալը —	1 ¹ / ₃ դրամի. 1 զօլտանիկի	
Մսխալը —	68 ¹ / ₂ ցորենաքաշ:	
Դրամն —	51 ¹ / ₂ ցորենաքաշ:	
Թուրքիկն հաւասար է մէկ լարի:		

* Այս դրքի մէջ յիշուած լիտրը եւ այլն, ընդունելու է Թիֆլիզու մէջ սովորաբար գործածեալը:

ԲԱՌՍՐԱՆ ԳԵՂՈՐԷԻՑ

Ա.

Արեթ, կամ լուցիկ. Հ. Գրեհ. դու, Տ. Գրեհ. ազարիկուս խորուրդուում, Լ. — Գրեհ:

Ախոսը, Հ. ամուլբարիս, կամ սուամա, կամ Թաթրի, ա. Սեմեն սուամա, կամ ԲՆուս քորիարիա, Լ. 1

Ածուխ, ամա գործի:

Ակոտն, ամա Թանթրվեհի:

Անայ, Հ. Սինամաքի, ա. Սեննայ, Լ. 1

Անամուխ, Հ. Նանա, ա. Հէրբա մէնթէ, Լ. 1

Անամուխի եղ, Հ. Նանա ետղի, ա. Օլուում մէնթէ, Լ. 1

Անդլիտ աղ, Հ. Ինդլիտ Թուզու, ա. Սալ Անդլիտում, Լ. 1

Անխոտ, Հ. Էնխոտ, ա. Սեմեն անխի, Լ. 1

Անձիտ, Հ. Շանթէրէ, ա. Ֆուամարիայ, Լ. 1

Անուշաղբ, Հ. Նիշաղբ Տ. Մուրիաթիս ամենի, Լ. 1

Անուշաղբի ողի, Հ. Նիշաղբ ունի, ա. Լիքուտ ամենի քառասոցի, Լ. 1

Առոյտ կամ առաւոյտ, ամա կորնկան:

Արճի շաքար, Հ. Քորչուն Թուզու, ա. Սախարում սառուրնի, Լ. 1 *

Արճի ջուր, Հ. Քորչուն սուի, ա. Աքուս սառուրնի, Լ. 1

Արճի քաջախ, Հ. Քորչուն սիրքեսի, ա. Ալտում սառուրնի Լ. 1

Բ.

Բարցունիկ, կամ բարցմանակ, Հ. Տարկաւան ա. Պանացետում, Լ. 1

Բեւեկնայ եղ, Հ. Թիլէմենթին ունի, ա. Օլուում Թէրէրինթինի, Լ. 1

Բարակ, կամ բարակ, կամ սակ բարակ, Հ. Թէնէքար, ա. Բարաք, Լ. 1

Բարնեհի, ամա մէկուտ ընկուղ:

Բարաակ, Հ. Խորասանի, ա. Սեմեն սանամիցի, Լ. 1

Գ.

Գաղի խժ, Հ. Քարասաղ, ա. Պիցիա կամ պիքս նիզրայ, Լ. 1

Գեղձ ամբրիկացի, Հ. Սարանայ ա. Խաղիք սարասաղիլլէ Լ. 1

Գեանամաչի սերմը, Հ. Գուրս այաղն Թոմու, ա. Ումեն լիկապոցի, Լ. 1

Գինախան, Հ. Չինթեան օթու, ա. Գենցիանայ, Լ. 1

Գի կամ գիհի սրտուղ, Հ. Արտն Թոմու, ա. Բաքթա խունի պերի, Լ. 1

Գիհի փայտ, Հ. Արտն աղաջը, ա. Լիզնում խունի պերի, Լ. 1

Գինայ աղ, Հ. Գրուր Թարթար, ա. կաէմօր տարտարի, Լ. 1

Գլարեբան աղ, Հ. Սալ միրարիլէ զլատրերի, Լ. 1

Գործելի, Հ. Բէտուր, ա. Կարբո լիզնի պրէպարատու, Լ. 1

1) Արան Թիֆլիզում առում են Թուրքու կարմիր եւ շատ քիչ սպուրներ է, չորացնում են եւ ձեռում քիչ համ տալու խորվածի կամ ուրիշ բանի վերայ ցանում են, ունի եւ փար կապող զորութիւն:

Գ.

- Գառլէ, Հ. Եսայան Նանէտի տ. կալամիւնիմ, Լ:
- Գասը նուշի եղ, Հ. Աճի բաղէմ հասը, տ. Յէլուս ամիգղաբարում ամա-
բում, Լ:
- Գարասեբեւ, Հ. Ասլան ժէնէնէտի, տ. Ֆլորէս ֆարֆար, Ե, Լ:
- Գարսենի, Հ. Գարշին, տ. Կարսէքս ցինամոմի, Լ:
- Գասնիճի կեղեւ, անս Կեղեւ պերուլիայի:
- Գասնիճի աղ, Հ. Քինասքինս սուղի. տ. Սուլթանս խնէիճի, Լ. (հասարակ-
բէն քինասքինս աղ):
- * Գոճի խէժ, Հ. Ռուրի սէլանդի, տ. Գումի դուստտ, Լ:

Ե.

- Եղեղնանմամ, Հ. Էղլը, տ. Ռաղիքս քաղամի, Լ:
- Եղեղակ, Հ. Գիշ օթի, տ. Սուլիխաս, Լ:
- Եղերդ, կամ եղերդնակ, Հ. Եսայան հինախոսաը, կամ քեռանի, տ. Բաղիքս
ցիխարի Լ:
- Եղինջ, կամ հաղինջ եւ կամ ճինճար, Հ. Ըսրբան օթի, տ. Ռըթիկայ, Լ:
- Էթիցուկ, Հ. Փախաթիայ, տ. Խանսիլլաս, Լ: 1)
- Էրկաթի խարսուքս, Հ. Լիմասուրս ֆէրրի, Լ:

Զ.

- Զարմանալի աղ, անս Գլաս բերանն աղ:
- Զաւա, Հ. Մարսասաֆի, տ. Գումնի միտանէ, Լ:
- * Զինկի շարձապ, կամ աքսոս աղապը, Հ. Եանմիւնիմաթիս Զիթիլիլում աղբում, Լ:

Ք.

- Քանիլլանի, Հ. Միրբէր շիշէլի, տ. Ֆլորէս սամբուցի, Լ:
- Քիսկենի, անս Կեշի:
- Քրիմեճուկ, Հ. Գուզտ գուրդը, տ. Ռումէքս աջէտաղայ, Լ:

Ի.

- Իշալպարանդ, Հ. Աճի խար, տ. Էլթիլիլում, Լ:

Լ.

- Լեղակ, Հ. Ալիլիլ, տ. Կնդիքս, Լ:
- Լոքանի պի, Հ. Լոքանն սուհի, տ. Էթէր սուլթուրիկուս, Լ:

Խ.

- Խաշիկեղ, Հ. Ռազլենդ, տ. Բաղիքս ուլի, Լ:
- * Խաղանաղեղ, կամ խարանանանճ, Հ. Գումսուղ պէտանէի, տ. Կանթարիկուս,
Լ. 2

1) Մեղրանաննից քիչ էրկար եւ լղար կանանչ ճանճէ չարսցնումեն եւ փոշի
չինում.

2) Թիֆլիզում տաումեն Գլիլիլլաս.

Խէժ արարիայ, և. Զամբ արարի, Կ. Գումի արարիքում, 1:

Խնդեղ, Կ. Ես Թանթլովենի:

Խողի հղ, և. Աղէպս Ստիլլա, 1:

Խողակաղին, կամ կաղնեայ պտուղ. կամ կրկօ, և. Փէլուս մէ՛կախի, Կ. Դանդեղէս կուրքում, 1: 1)

Խունկ, և. Կիւնլուկ, Կ. Գումի արարիքում, 1:

Ծ.

Ծծումբ, և. Կիւղիւրթ, Կ. Զորէս Ստիֆուրիս, 1:

Շըմեկ, Կ. Ես Շումի:

Շոր, և. Գարամուղ, կամ խաթուն տուղլլի, Կ. Բէրբէրիս վաղարիս, կամ Բաքքա բէրբէրիլի, 1: 2)

Կ.

Կակաւ, կամ կակաւի պտու, և. կէլինճէ քիչէլի, Կ. Պապովէր ուսա, 1:

Կակղի ծաղիկ, և. Օնլամուր շիչէլի, Կ. Տիլիայ, 1:

Կանեփի սերմը, և. Գէնէվլի բօճումա, Կ. Սէմէն կամարիս, 1:

Կատուխտա, և. Գէտի օթա. Կ. Բաղիքս վաղարիս, 1:

Կախն, և. Տէպէշիլի, Կ. Կրէտա արքա, 1:

Կեղեւ մեղրբի, և. Կորտէքս մէղրբի, 1:

Կեղեւ պերուզիացի, և. Գնաքնա դարուղի, Կ. Կորտէքս խին, 1:

Կեշի, և. Բէթուլայ, 1:

Կ'նասի խէժ, և. Գիլարա, կամ ֆիշնէ զամքը, Կ. Գումի ցերադորում, 1:

Կեսարան, և. Գլաթն, Կ. Բէտանիլայ, 1:

Կինաման, Կ. Գարսենի:

Կիւր, և. Գիւրն, Կ. Կայքս, 1:

Կծուխ, և. Բաղիքս արտորացի, կամ քորէարիս արտորացի, 1:

Կնդրուկ, և. Ասլուէն, Կ. Գումի բենգօէ, 1:

Կոծարար, Կ. Ես Ախար:

Կոծա պղպեղ, Կ. Ես Տաք կոն:

Կորանիւ, և. Տուլալուս օթա, Կ. Բաղիքս բարգանէ, 1:

Կորկան, և. Եմէլայ, Կ. Մէլլըթի, 1:

Կուսառի ձէթ, և. Պէղիլի կաղը, Կ. Օլում լիճի, 1:

Կուսառի սերմը, և. Պէղիլի բօճումա, Կ. Սէմէն լիճի, 1:

Կրի ջուր, և. Գիւրն սուի, Կ. Աքուս կայցիս, 1:

Հ.

* Հալուէ, և. Սապա, Կ. Ալօէս, 1:

Հայկա, և. Գիլարմենի, Կ. Բուսա արմենի, 1:

Հովուստո, և. Զարան տխարիկ, Ա. Կամա պլանտադօ կամ պլանա, Կ. քուսա արքայ, 1:

Հոս քարէլու թէժ (թանդ) քաջալօ, և. Ալէտում քանցլնարաում, 1:

Հրէշտակախտ. և. Մէլլափ օթա, Կ. Անդեկիլայ, 1:

1) Արանից բրոված սուրճի (զալայ) պէս պատրաստածը կոչուումէ զլանդէս կուրբուսթում:

2) Արարելէն ստումեն կնդրէ պարիս, Գարսենի ջիլիշօ, սա ըլումէ սեւ մանր է. շորաղը, բերում են Պարսկաստանից.

Ձ.

Ձիթենեայ ձէթ, Հ. Ձէյթինեայ, տ. Օլէուս օլիվարում, Լ:
Ձօթ հատիկ, Հ. Դանէմաղղաքի, տ. Գումի մասթիքում, Լ:

Ճ.

Ճարճատուկ, տես Եղերդ:
Ճերմակ խոզ, տես Կախն:

Մ.

Մանանայ, Հ. Սրիսիշտ, տ. Մաննայ, Լ:
Մանանեխ, Հ. Հարգալ, տ. Սէմէն սինապիս, Լ:
Մանիշակ, Հ. Մէնէքչէ, տ. Վիօլա, Լ:
Մարերի աննն, Հ. Մէլօն մայսլիս Լ: 1)
Մշկահոս ընկուղ, Հ. Հինտիստան անվիլի, տ. Նուքս մօշատա, Լ:
Մշկոտոս ընկուղի ծաղիկ, Հ. Հինտիստան անվիլին շիշէյի, տ. Ֆլորէս մա-
ցիս, Լ:
Մատխակ, Հ. Միանքեօքու, տ. Լիկուրիցիա, Լ:
Մարիամամաճիք, Հ. Ռադիքս քարիօֆիլլատա, Լ:
Մարտի, տես Մատխակ:
Մեխակ, Հ. Քարէնֆիլ, տ. Քարիօֆիլլա արտատիկա, Գ:
Մեխակի եղ, Հ. Քարէնֆիլ եայլը, տ. Օլէուս քարիօֆիլլէ, Լ:
Մեկան, Հ. Խաշխաշ, տ. Պասպլէք, Լ:
Մեղրաքաղտոս, Հ. Սքանջամին, տ. Օքսիմել սիմպլէքս, Լ:
Մուխանդ, Հ. Պարլըրան, տ. Յիկուխայ, Լ:
Մուշ, Հ. Էպէմ կոմանի տ. Մալլա, Լ:
Մուշի ծաղիկ, Հ. Էպէմ կոմանին շիշէյի, տ. Ֆլորէս մալլէ, Լ: 2)
Մուսանտակ, Հ. Էդարուն, տ. Քաղիքս աղարի, Լ:
Մաղղաքէ, տես Ձօթ հատիկ:

Ն.

Նարինջ, Հ. Փորթուքալ, տ. Աուրանցիում, Լ:
Նուշ, Հ. Բաղէմ, տ. Ամիգալա դայցիս, Լ:
Նուշ դառը, Հ. Անի բաղէմ, տ. Ամիգալա ամարա, Լ:

Շ.

Շամբուկ, տես Թանֆլուխի:
Շնանաննի ձէթ, Հ. Կենէկրէշէք եայլը, տ. Օլէուս սիցնի, Լ:
Շողգամ, Հ. Շալցամ, տ. Բաֆնանուս սասիփուս, Լ:
Շնչրորակ, Հ. Գուլլընիէ, տ. Նիտրում, Լ:
Շնչրորակի հող, Հ. Կիսվերշիլէ քայմաղը, տ. Մաղնեղիս, Լ:
Շուշիր, Հ. Հիլ, տ. Սէմէն քարդամաի, Լ:
Շովին, Հ. Ըսպաննախ, տ. Արինաշիս կամ սրինաքիս, Լ:

1) Կատարել շան կծածի համար Թիֆլիզի գեղերում մէկ տեսակ ճանճեն զործ
ած ու անունը Աբաբալունկ, որ ևս չէմ տեսել, բայց կարելի է սալլի:

2) Թիֆլիզում սքան ևս ասում են բալբա:

Ո.

* Ոսկէտակ, Հ. Ալթըն քեօքու, տ. Իպէկակուանայ, Լ:
Որդան կարմիր, Հ. Քըրբըզ կամ զըրմըզ, տ. Կոկցիանէլլա, Լ:

Չ.

Չալախայ, Հ. Նալար, տ. Եպապոդայ, Լ:

Պ.

Պաղեղ, Հ. Շապ, Տ. Ալումէն, Լ:
Պաղեղ այրած, Հ. Էանմըզ Շապ, տ. Ալումէն ուստում Լ:
Պաներ Հ. Էապան պալոյ քարէ, տ. Յիլիքս մաս, Լ:

Ս.

Սամիթ, Հ. Դուրախ օթու, տ. Ամնն անկթի, Լ:
Սեւասեւակ, Հ. Բաղիքս պինպինէլէ, Լ:
Սեւ թուի օշարակ, Հ. Քարաթութ շէրպէթի, տ. Արտապու սորօում Լ:
Սեւ ձութ, տես Գազի խէժ:
Սըրցիճ, Հ. Տէթիլէրէ Երզ, Դ. տ. Անաստուլլա, Լ:
Սպիտակաղեղ, Հ. Ուստուպան, տ. Յիրուսա, Լ:
* Սպիտակ կըրքոս, Հ. Աղ շէօրէմէ, տ. Հէլլէրքոս ալքուս, Լ:

Վ.

Վայրի նուին, Հ. Էօտլքանր, տ. Բաղիքս Փիլիզըրի, Լ:
Վայրի բոխկ, տես Կճուին:
Վարդի ջուր, Հ. Կիւլ սուի, տ. Աքուս բոզարում, Լ:
Վարդի քաղցրանին, Հ. Կիւլ մարապոս, տ. Քանակլաբօրօզ, Լ:
Վարդի մեղր, Հ. Կիւլ պալը, տ. Մէլ բոզարում, Լ:

Տ.

Տակ կոն, տես կոնապղպեղ:
Տանիկ կոնժ, տես Յրարոյ Քէժ:
Տաստակ, Հ. Դէմարթիքնի, տ. Թրիփուլուս, Լ:
Տուգաթ տակոթ, Հ. Խաթմիճըն քեօթի, տ. Բաղիքս ալթէա, Լ:
Տուգաթ ծաղիկ, Հ. Գիւլ խաթմի, տ. Յըօրէս ալթէէ, Լ:
* Տրու ործացուցիչ, Հ. Տարտարուս Էմէտիկուս, Լ:

Փ.

Փիճոյ ծաղիկ, Հ. Չամ զօղապղի, տ. Տարիճէս պինի, Լ:
Փիփերթ, տես Մոլու:

Ք.

Քարի կղ, Հ. Նէֆոս կաղը, տ. Յիւսմ պէտրէ, Լ:
Քարմարցակ, Հ. Միրուսէնկ, տ. Լիթարղիբրուս, Լ:
Քափուր, Հ. Քեաֆիլ, տ. Քամֆօքս, Լ:
Քափուրի ձէթ, Հ. Քեաֆիլ կաղը, տ. Օլէում քամֆօրէ Լ. սրա շինելու կերպը տես 30 համարումը:
Քափուրի քաջախ, Հ. Քեաֆիլ սիրքէթի, տ. Ալթիում քամֆօէ, Լ:
Քափուրի արաղ (օղի), Հ. Սպիլիտուս քամֆօրի, Լ:
Քրքում, Հ. Չամֆրան, տ. Կրակուս, Լ:

Օ.

Օւինդը, Հ. Փէլին, տ. Արսիճիում, Լ:

Յաւելուած

Մէքանի պատրաստի ղեղորայք սովբական հրանդութեանց ղեւ:

Աբսինթիում. Լատիններէն. Օշննդր, Հայերէն. դառնահամ
խոտ. օգտակար է ստամոքսի ցաւի, դժուարամարտութեան,
մէջ տուող դողի, յօդո՝ անացաւութեան. բաց կանէ ախոր-
ժակը, կ'ստակացնէ փորի կողմ ձիճուն: Երկու մսխալից
մինչեւի վեց մսխալ եօթանասուն մսխալ ջրումը եփէ՛, քամէ՛:
երկու բաժին արա՛, առաւօտը և իրիկնապահին խմա-
ցրու՛ :

Աթրամէնթում, Լ. Քանաք, Հ. Յերուամէնթում՝ կապուտ
թանաք. թուէրամէնթում՝ կարմիր թանաք :

Ալբումէն օվի, Լ. Չուի սպիտակուց, Հ: Եթէ երկու ձուի
սպիտակուց և մէկ գդալ ջուր իմիսսին հարին զգալով էն-
քան, որ փրփրի, խմացնեն պղնձի ժանկով թունաւորուածին
(ղեղածին) խկոյն կը լաւացնէ. Եթէ փոքր ինչ պաղեղ (շեբ)
մէջը խոռնեն, բըբրած քաթանի վը՛ն քսնն և դնեն աչքի վրայ օրը
մէքանի անգամ, կամ զիշերը ցաւած աչքի և կոպի ու-
ռուցրի վերայ դնեն, շատ օգուտ է:

Աքուա Ֆազաղէնիկանիդրալ. է սև ջուր. օգտակար դազ-
ղեական վերքին (շանկր), սրա մէջը թաց աննն բըբրած քա-
թանը և դնեն օրը երեք անգամ ծածուկ անդամի վերայ :

Աքուա Ֆազաղէնիկա Ֆրաւա, Լ. սա էլ վերոյիշեալ դեղի
զօրութիւնը ունի :

Աքուա օֆթալթիկա, Լ. կապուտ ջուր է, որոյ մէջը եթէ
քաթանը զրջնն և դնեն աչքերի վերայ, և քանի ցամաքի փո-
խն, կամ սրանով աչքերը լուանան, օգտաւար է աչքացաւին:

Աքուա սատուրնի, Լ. Արճճի ջուր, Հ. Սպիտակ ջուր է,
շատ օգտակար աչքացաւի, ջարդուածքի, ուռածի, տարու-
թիւն ունեցող վերքի և գաղղեական (աթէշակ) ուռուցրի: Քա-
թանը զրջնն, դնեն վը՛ն, քանի ցամաքի, փոխն: Սրա շինե-
լու կերպը դրած է 54 համարումը :

Աքուա կալցիս, Լ. կրի ջուր, Հ. պատրաստուումէ Լս-
պէս. ա՛ռ մէկ բաժին կիր հանգած, զիր շուշումը, և ա-

Տա՛ վրէ՛ն եռեսուն բաժին ջուր, լաւ խառնե՛, թո՛ղ մինչև ի երեք օր, պարզ քամէ և զործ աճա՛ն ինչպէ՛ս ասած է 106 համարումը: Անիկարմատի ծծի պտուկը եթէ ճաքճաքի, քրքրած քաթանը սրանով թաց արա՛, դէր վրէ՛ն և օրը վեց անգամ փոխէ:

Բալսամում արցէի 1. Էս բալսամներ շատ լաւ է ամէն տեսակ նոր կարածի համար. առաւօտը և իրիկունը քրքրած քաթանով դնեն վէրքի վրէ՛ն: Կոչում է նաև Ունգուէն թում գումի էրէմի:

Բալսամում զէ մէքքա, 1. Էս բալսամներ ծառից է վազում. դովական դեղ է ջիւլերի թուլութեան, դժուարաշնչութեան, սերմնակաթութեան (սուսունակ) և թոււաւոր ճիճուի կծածի դէմ. զործածելը լաւ է տասը կաթիլից մինչև ի քսան կաթիլ վէրքի ոտների ու ձեռների յաւի ւէ՛մ քսելով շատ օգուտ կրերէ:

Բալսամում բօսրսիլայ, 1. Բալսամ քօպայեցի, 2. օրը 30 կաթիլից մինչև 60 կաթիլ ջրով խմելը շատ օգուտ է սերմնակաթութեան յաւին:

Բալսամում օպօդէլգօբ, 1. է թանձր բալսամ. ոտների և կոնների քամու համար շատ օգտակար է:

Գլանդէս կուէրիսու տոտում, 1. Բոված կօկօ, զովայի պէս ձեծած. շաքարով խմելը երկտայից փորացաւութեան համար շատ օգտակար է:

Գումի դուվանքում, 1. Խէժ կոճի հնդի, 2. Սա է մութ կանանչ խէժ, մէկ տեսակ ծառ կայ նրանից է հանուում. թէ կէս մսխալ սրանից և երկու մսխալ դինու աղ իմիասին խառնեալ, լաւ փոշի շինես առաւօտանց խմեցնես, մէ էքրան էլ իրիզնապահին, մինչև ի տասնուհինգ օր, շատ օգուտ է յօղւածացաւի դէմ:

Գումի էուֆօրբի, 1. Աբարբիօնի խէժ, 2. Մէկ տեսակ փրշալից ծառից է հոտում, երկու ցորենաքաշ սրանից, չորս ցորենաքաշ քափուր և մէկ մսխալ շաքար իմիասին խառնէ, լաւ փոշի շինէ և քաշ: Բուսնոթու նման օրը երեք կամ չորս անգամ. կ'փոշտայնէ, հին զլիացաւի և սնկերքը կապուածի օգտակար է:

Դատուհուս քարտաւ, Լ. Մակղին (զաղար), Զ. Առաւետը անօթի մէքանի ր սրա քամած ջուրը խմելով կէս կէս վնջան կողմ ճիճուն կ'թափէ. նոյնպէս օգտակար է դեղին գաղափը քերել և օրը երեք անգամ վէրքի վերայ դնել, երբ էրուում է և կեղտոտ է:

Դեքոքթում ալբում սիղենհամի, Լ. է պատրաստի դեղ սպիտակագոյն, ժամը մէկ զգալ գործ ածելով կ'կապէ փորը և արեան վերայ դուրս տանելը կ'կտրէ:

Դիօսմա կրէնատա, Լ. մի տեսակ խոտ, շատ օգտակար նրանց, սրոց ջրվէթքը գալիս է բարակ, կամ ջրվէթքի ճանապարհիցը քիչ քիչ թարախ է գալիս, օրը չորս մխալից մինչև ի վեց մըս խալ ջրով էփած մի աւուր մէջ երեք անգամ խմէ:

Կէքտուարիում անթէլ մէնթէքում, Լ. պատրաստի դեղ, շաղախած մեղրով, չորս ժամը մէկ շայու զգալ ուսաչքու ամենայն տեսակ ճիճու ունեցողին:

Կէքսիր այիդում հալբրի, Լ. Սա է քուքուրթի թըթումա տից պատրաստած սպիտակ դեղ. օրը երեք անգամ սուր տասը կաթիլ բաւական շաքարի ջրով կ'կտրէ աւելորդ քլլր տինքը. շուտ շուտ ջրվէթքի վրայ դուրս տանելը և էլ մէջքի թուլութենից սերմի կաթիլը:

Կէքսիր աուբանցիօրում կօմպօսիտում, Լ. պատրաստի դեղ, օրը երեք անգամ տասնուհինգ կաթիլ շաքախտը ջրով խմացրու, կերակուրը կ'մարսացէ և ստամոքսի ցաւին օգուտ է:

Կէքսիր պէկաօբալիս, Լ. Սա է պատրաստի դեղ. օրը երեք անգամ քսանքսան կաթիլ ջրով խմելը հասարակ հազի դէմ և կուրծքացաւի օգտակար է:

Կմպլաստրում մէլիլօթիում քօմիոսիթում, Լ. է թանձր սպեղանի. շոբի վրէն քսէ, դիւր ուռուցքի վրէն, կը ցրուէ:

Կմպլաստրում մէլիլօթիում սիմիլէքս, Լ. Սա է կանանչ պինդ սպեղանի. օգտակար է պսլարի (չիրան, ձիրձիղայ) դէմ. կը բանացնէ վէրքը. վէրքի ուռուցքին էլ լաւ է, դուրս կ'քաշէ թարսը:

Կմպլաստրում ցիկուտի, Լ. է թանձր սղիզանի, ընտիթ

դեղ է առուցքը ցրուելու համար, մանտանդ եթէ գաղղիական ակտիցն լինի պատճառած նոյնպէս լաւ է ամորձիքի (ձուանէթ) առուցքին :

Էմպլաստրում արամաթիկում, 1. պատրաստի պինդ ըսպելանի, որ թէ շո՛րի վրէն քսես և կպնես սրտի զդալի վրէն, ստամոքսի ցաւին շատ օգտակար է. փորի վրէն կպնելով փորացաւին կ'օգնէ :

Էմպլաստրում հիօսյիակի, 1. պինդ սպելանի, որ շորի վրէն եթէ քած կպնես ձուաների առուցքին, կ'ցրուէ, եթէ պատահած լինի գաղղիական (աթէշակ) ակտից, կամ սերմնակաթու թնկից :

Թէրրա քատէխոն, 1. Կոչուումէ քաքլի հինդի. փորը կըկապէ. արևն փսիսելը կ'կտրէ, բերանի հոտելուն, ձէնը կըտրածին օգուտ է առաւօտ երեկոյ կէս կէս մ. խալ ճեճած բերանը, գցելը լմմելը :

Ինդիգո, 1. Հայերէն, ընդհ. երեք մնխալ սրանից, 15 մըսխալ կզան ճրաղու միասին հալն, դոլ դոլ քսեն, կարմիր քամուն վրայ դնել օրը երեք անգամ, օգուտ է :

Լիսէն իսլանդիքում, 1. Էս խոտը շատ օգտակար է հին հազի և արուն թքողին, առաւօտ երեկոյ չորս չորս մնխալ կաթնով կի՛ն և խմէ :

Լինիմէնում վոլատիլիս կամֆորատէ, 1. Պատրաստի դեղ կոնրի, և սանրի, ցաւի և ծակոցի համար, օրը երեք անգամ քսէ :

Խինինում սուլֆուրիկում, 1. Աղ դառնիձի, հասարակորէն քինաքինի աղ. ամէն տեսակ զողի համար պատուական դեղ է. սո՛ս կէս մնխալ սրանից, երկու մնխալ շաքար, խմիսսին խառնէ, լաւ փոշի արած տասնուհինգ բաժին, երկու ժամը մէկ մէկ բաժին խմացրո՛ւ ջրով, զողից և տաքութենից ազատ ժամանակը :

Կուրէրա, 1. Գօյի բուակ, 2. Սա ըլումէ պղպեղի (փլիլիլ) նման սերմեր, եթէ սրանից օրը չորս անգամ մէկմէկ մնխալ

ջրով խմեն մինչևի տասն օր, օգուտ է վախշածին հոսումին (սուսանակ), էն ժամանակը երբ ցաւելկամ էրուել չունի :

Միքստուրա դէլպէշի, 1. է պատրաստի դեղ, օրը չորս անգամ մէկմէկ գդալ խմելը շատ օգտակար է սերմնակաթու-
թեան (սուսանակ) համար, միայն էն ժամանակը, երբ ջրվէ-
թի ժամանակը չէ երում և տակի խողովակը գիշերը չէ ցա-
ւում :

Միքստուրա շփարտի, 1. Սա էլ մի և նոյն վերոյիշեալ զօ-
րութիւնը ունի :

Անգուէնթում բազիլիքօնիս, 1. Պատրաստի սպեղանի, շագանակադոյն. ամէն տեսակ վէրքի համար քրքրած քաթա-
նով դործ ածա :

Անգուէնթում ներվինում, 1. է կանանչ սպեղանի, օգ-
տակար ջիւերի ցաւի համար, օրը երկու անգամ քսելով :

Պաստա ալթեկ, 1. Պատրաստի դեղ է, երկսանց հազի հա-
մար. տուր երեխին, որ ծծէ :

Պաստա լիքուլրիցիէ, 1. Սա էլ միւնոյն զօրութիւնը ունի :

Պուլլիս փրօնիֆանտիրուս, 1. է պատրաստի փոշի, օրը երեք անգամ տասն տասն ցորենաքաշ խմացրու. երեխերանց փորացաւին և փորաբացութեան համար շատ լաւ է :

Ռադիքս եալապա, 1. Չալախա, 2. Եթէ սրանից մէկ մնալ, դինուոյ աղ երկու մնալ միասին սրեն, փոշի անեն, առաւօտը ա-
նօթի խմացնեն, կ'լուծէ ճիճուն կ'ւպանէ և ջրզողին էլ օգուտ է :

Ռադիքս տորմէնտիլէ, 1. Անկուպար, 2. Սա օգուտ է արիւ-
նախառը փորաբացութեան. առ երկու մնալ սրանից, մէկ գրվանքայ ջուր, կամաց եփէ, քամէ, սառացրու և մէկ օրուան մէջը խմացրու. երեք բաժին անելով :

Ռադիքս վայերիանէ, 1. Կատուախոտ, 2. Վեց մնալաշափ ջրով եփեն, խմեն, օգուտ է ճիճու ունեցողին, կէս գլխացաւին, արիւն թքելուն և անզօր հիւանդին :

Սալէջիէս պեկտորալիս, 1. է ջրգած խոտերու և ծագիկներու խառնուրդ. առաւօտ երեկոյ սրա խմելը շայու պէս հազին օգուտ է :

Սպիրիտուս լաւէնդուլէ, 1. Ողի նարդոսի, 2. Օրը երեք

անդամ քսան քսան կաթիլ քիչ ջրով խմացրու, օգուտ է ան-
զօրին, սրտի թրթռալուն և սիրտը գնալուն :

Սպիրիտուս մէլիսսէ, Լ. Ողի մեղուատերեղ, Հ. օգտակար է.
արգանդացաւի, զլխացաւի, ուշքը գնալուն, սրտի նեղանա-
լուն. օրը երեք անգամ տասնուհինգ կաթիլ քիչ ջրով խմացրու :

Վիտրիօլում պրում կամ ցինկում սուլֆուրիկում, Լ.
Չինկի արջասպ, կամ Այրս. ճ աղպար, Հ. Եսնմբը թուփիա, Տ.
օգտակար է աչքերի կարմրութեան և ուռուցքի. սնա տասնու-
հինգ ցորենաքաշ սրանից, և յիսուն մսխալ պարզ սառը ջուր,
իմիասին խառնէ, մէկ կտոր իստակ շոր մէջը դրջէ, զցէ՛ աչքերի
վերայ և քանի ցամաքի, կրկին փոխէ :

Տանացէտում, Լ. Բարցունիկ կամ Բարցմանուկ, Հ. ջրով
եփած խմացրու. օգտակար է ճիճու ունեցող հիւանդին :

Տինքտուրա ասսէֆէտիդէ, Լ. Ողի անդուժատի, Հ. Օրը ե-
րեք անգամ քսան քսան կաթիլ ջրով խմել տուր. օգտակար է
ճիճու ունեցող հիւանդին, ստամոքսի քամուն, մարմնոյ դո-
ղալուն, և սրտացաւութենին :

Տինքտուրա քասթօրէի, Լ. Ողի սնկեղ ամորձիքի, Հ. օգ-
տակար է արգանդացաւի և կանանց ամսական հոսումը շար-
ժելուն, կ'կտրէ փսխելը և փորացաւը. օրը երեք անգամ տասն
տասն կաթիլից մինչև ը քսան քսան կաթիլ գործ ածա՛ ջրով :

Տինքտուրա օդոնտայգիկա, Լ. պատրաստած ողի. օգտակար
է աղւէքացաւի. սնա մէկ կտոր բամբակ, ձեռքումդ կօլօլէ՛, էս
դեղինը վըէն կաթացրու, մինչև թաց ըլի, և որ աղւէքը որ
ցաւումէ, դի՛ր վըէն. թո՛ղ հինգ վայրկեան, յետոյ բերանդ բաց
արա՛, որ ջուրը գնայ. կրկին դի՛ր մինչև ի ցաւը կտրուի :

Օլէում պէտրէ, Լ. Քարի եղ, Հ. Քամերու համար դրսելիցը
քսելը շատ օգուտ է, նոյնպէս ճիճու ունեցողին. օրը երեք
անգամ քսան քսան կաթիլ ջրով խմացրու :

Պոմէնտում շմուկերի, Լ. պատրաստի դեղ. օգտակար է տա-
քութենով էկած զլխացաւի դէ՛մ, շորը դրջէ՛ և զցէ՛ ճակա-
տին և զլսին և քիչ քիչ ածա՛ զլսին ու չփքացրու :

Պումարիա, Լ. Անձխոտ, Հ. առաւօտ և երեկոյ չայու պէս
գործ ածա՛, արիւնը կ'իստակէ, և եթէ մանր բաներ ունի
դուրս տուած մարմնոյ վերայ, յետ կտանէ. կ'հանդարտացնէ
արիւնը. օգուտ է նոյնպէս դեղնութիւն ունեցողին :

ՅԱՆԿ

Յառաջարանութիւն

Ա.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Թէ ինչպէս պէտք է հասկանալ հիւանդութեանց պատճառները եւ նը-
շանները. եւ թէ ինչպէս պէտք է դեղ անել, եւ ինչ եղանակաւ պահ-
պանել թէ հիւանդութեան սկզբումը եւ թէ լուանալուց յետոյ . . . 1

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ներսի հիւանդութիւնները :

	եր-
Ա. Դողի վրայ	12
Բ. Հարինքի կամ վարցաւի վրայ	16
Գ. Մրսելուց յառաջացած դողի եւ հագի վրայ	21
Դ. Բկացաւի (խունակ) վրայ	23
Ե. Կուրքի բորբոքային ծա'ոցի վրայ	25
Զ. Մաղասային, կամ մաղասից յառաջացած կուրծքի խէթքի վրայ	29
Է. Բնական ծաղկի վրայ	31
Ը. Կարմրուկի վրայ	33
Թ. Քութէշի վրայ	35
Ժ. Բերանիցը բանացնելու վրայ	36
ԺԱ. Բերանիցը եւ փորիցը բանացնելու վրայ	37
ԺԲ. Թեթեւ փորաբացութեան վրայ	39
ԺԳ. Արեւախառն փորազնացութեան, կամ նքոցի վրայ	40
ԺԴ. Սուրավանդի կամ աղէկիծի վրայ	42
ԺԵ. Վեներայի (Գաղղիական ախտ. (Ֆուէնցի) վրայ	44
ԺԶ. Վալաշածին հոստաթի (սուսունակ) վրայ	48
ԺԷ. Ճիճուի հիւանդութեան վրայ	50

Կանանց Հիւանդութիւնները :

ԺԸ. Կնիկարմատի ամսային հոսուճքի վրայ	51
ԺԹ. Երկուհոգութենի վրայ	56
Ի. Ծննդականութեան վրայ	59
ԻԱ. Ծննդականութենից յետոյ պատահած հիւանդութեան վրայ . 61	
ԻԲ. Երեխի աղատուելուց յետոյ ծննդականներին պատահած ու- ռուցքների վրայ	64

Երեխանց Հիւանդութիւնները :

ԻԳ. Մանր երեխայից հիւանդութիւնների վրայ	67
ԻԴ. Կպչուն եւ սև կղկղանքի (ղուս զնացածի) վրայ	67
ԻԵ. Կերածը սրտի վերայ քայտխելուց, կամ թըթվելուց յառա- ջացած երեխայից հիւանդութեան վրայ	68
ԻԶ. Կաթնից պատճառած բերանի խոցի վրայ	69
ԻԷ. Երեխայից դժուար ակուէք հանելու վրայ	70
ԻԸ. Երեխին ծըծիցը կտրելու վրայ	70
ԻԹ. Մաղասից եւ ճիճուից պատահած հիւանդութեան վրայ	71
Լ. Զղային հազի վրայ	72
ԼԱ. Գործըլու օգտակարութիւնը ինչպէս տնտեսական կառավարու- թեան մէջ, նոյնպէս էլ զանազան հիւանդութեանց բժշկելու համար . 74	

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Արտաքին Հիւանդութիւնները :

Ա. Նոր վերքի վրայ	78
Բ. Փթած եւ հնացած վերքի վրայ	80
Գ. Եւծուածի կամ Զարդուածի վրայ	81
Դ. Ուռուցքի վրայ	82
Ե. Մատնաշունչի վրայ	83
Զ. Պաւարի (չիրան, ձիրձիղայ) վրայ	84
Է. Լրածի վրայ	85
Ը. Սառածի, կամ ցրախ տարածի վրայ	86
Թ. Զլումը խնդղածի վրայ	88
Ժ. Թունա որ ճանճի կծածի վրայ	91

ԺԱ. Օձի կծածի վրայ,	91
ԺԲ. Զրախխուրթեան, կամ կատաղած շան կծածի վրայ,	92
ԺԳ. Գործու հոսից բռնուածի վրայ,	95
ԺԴ. Քոսի վրայ,	96
ԺԵ. Քթիցը արիւն գնալու վրայ,	97
ԺԶ. Ակոքացաւի վրայ,	97
ԺԷ. Աչքացաւի վրայ,	93
ԺԸ. Ականջացաւի վրայ,	100
ԺԹ. Կարմիր քամու վրայ,	102

ՄԱՍՆ ՁՈՐՐՈՐԴ

Ա. Հարկաւոր խրատներ զեղացւոց համար, արիւն թողնելու, լուծողականի և փսխողականի վերայ և մէքանի կանոններ առողջութիւնը պահպանելու համար,	104
Բ. Արիւն թողնելու վրայ,	105
Գ. Լուծողական ընդունելու վրայ,	107
Դ. Փսխողական ընդունելու վրայ,	108
Ե. Սուրճի (ղահվէ) և չայի գործածութեան վրայ,	109
Զ. Թէժ (թունդ) խոլիքների չափազանց գործածութեան վնասները և չափաւոր գործածելու օգուտը,	111
Բժշկարանին մէջ յիշուած զեղորայքը պատրաստելու և գործածելու կերպը,	112
Բժշկարանին մէջ յիշուած քաշերու համեմատութիւնը,	127
Բառարան զեղորէից հայերէն, ասակերէն, և լատիներէն,	128
Մէքանի պատրաստի զեղորայք սովորական հիւանդութեանց դէմ, 132	

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in approximately 20 horizontal lines. A large, solid black vertical redaction covers the right side of the page, obscuring the text in that area.

ԵՐԵՍ ՏՈՂ

5	8	հաղնա	(հօքնայ)
12	24	բողոքուկը	բողոքի դարկը
13	27	սորոցեղ	սասայեղ
41	5	կաթից	դաթից
18	13	պէսք	պէսք է
18	27	ուս	լուս
19	14	եւ իւր ալրի թեփ	եւ ալրի թեփը
22	9	(Localis)	(morbus topicus)
24	5	շուճ	շողմք
30	32	շուս շուս	շուս շուս
33	12	82	83
34	31	լուծում է	լուծումնք
38	24	36 համարաւ զեղը	36 համարաւ կերակուրը
45	34	կողմն քումը	զողմն քումը
45	32	նասեղ աղումը	նասեղասեղում
48	23	ու անժամանակ . Գ.	ու անժամանակ ժամը
49	7	կակածը	կակածը
49	30	կանանչուում է	ճանանչուում է
50	10	երկրամայրի ճինու	երկրամայրի նման ճինու
52	17	սաքութիւն	սաքութիւն
52	32	Գալուան	Գալուան
53	1	նստացրու	նստացրու
53	24	սրոնք	սրոնք
55	7	մինչեի	մինչեի
55	17	պատասպում է	պատասպում է
62	22	բառաջ	առաջ
64	32	փուկրփի կրէ ալի	փուկրփի կրալիս
65	2	ջրգութեան	ջրգութեան
69	17	աչքերումը	աչքերումը
70	21	այլ 38 համարաւ	այլ 38 համարաւ
		անեղը ձեռքը սալ	զեղը սալ եւ եքեփի ձեռքը սալ
72	33	էս հաղմն	էս հաղմն
73	3	(porozism)	(paroxism)
73	31	կակղույ սակոյց	կակղույ ծաղկից

74	28	ուսուցքներու է	ուսուցքներ ունէ
74	28	էս միջատըմ	էս միջատը
75	1	է որ ամեն	էլ որ ամեն
76	24	սուլէյմ անխով	սուլէյմանխով
76	32	Բերանդը	Բերթբանդը
78	23	արիթ	արեթ
80	5	կուսանատով	կուսանատ
85	29	կամ նոր	կամ նոր կաթնի սեր
85	33	կուպու	կուպր
87	30	թանձրվնեայ	թանթրվնեայ
90	26	Տաղտ	տախտ
91	13	տաքացրած	տափակացրած
92	17	դափուրի	քափուրի
93	36	չան	չան
94	45	աղատում է	աղատում է
95	23	սիրտը	սիրտը
109	18	ակուէքներումը	անուկներումը
110	22	փորի	քորի
110	23	(ջերմ)	(չիրմ)
111	19	ակար	ակար
113	2	խնձորի	խխարի
114	8	որս	չորս
126	17	դիր	քանէ,
130	41	զլանդէս	զլանդէս
133	10	ցերուամէնթում	ցերուլամէնթում
133	11	թուէրամէնթում	բուբրամէնթում
134	20	կօկօ	կրկօ
135	10	որոց	որոնց
135	22	չաքարտառը	չաքարտառը
138	32	չփչքացրու	չփչփացրու



Handwritten scribbles at the top of the page.

Faint blue ink markings or a stamp in the lower center of the page.

